ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 2010թ. ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀԱՏՈՐ I

ԵՐԵՎԱՆ
2011

Սույն զեկույցը պատրաստվել է Հելսինկյան Ասոցիացիայի կողմից “Մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում” ծրագրի շրջանակներում՝ Հայաստանում ԱՄՆ Դեսպանատան և Ժողովրդավարության Ազգային Աջակցության ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

© Հելսինկյան Ասոցիացիա 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....3

Խոսքի Ազատություն և ԶԼՄ……...12

Իրավապաշտպաններ……..26

Խաղաղ Հավաքներ……....38

Խոշտանգում և Վատ վերաբերմունք……..58

Հավելված՝ Վահան Խալաֆյան……....71

Դավանանքի և Խղճի Ազատություն…….....120

Հավելված…….....130

* www.hahr.am

Հելսինկյան Ասոցիացիան ներկայացնում է 2010թ. Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ ամենամյա զեկույցը և միանշանակ կարող է փաստել, որ Հայաստանում կոպտորեն խախտվում են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:

2010թ.Հայաստանի իշխանությունների կողմից շարունակվել է անտեսվել 2008-2009թթ. ընթացքում Հայաստանի վերաբերյալ ԵԽԽՎ-ի կողմից ընդունված / թիվ 1609[1], 1620[2], 1643[3], 1677[4]/ բանաձևերում առաջ քաշված պահանջների կատարումը:

Թեև իշխանությունները միջազգային հանրության ճնշումների ներքո ազատ արձակեցին 2008թ. մարտիմեկյան դեպքերի կապակցությամբ ձերբակալված և դատապարտված բազմաթիվ ակտիվիստների, դեռևս անազատության մեջ են գտնվում 9 անձինք, ում Հելսինկյան Ասոցիացիան միջազգային չափանիշների համաձայն համարում է քաղբանտարկյալ[5]:

2010թ. հոկտեմբերի 4-ին Հելսինկյան Ասոցիացիան նամակով դիմել է Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարին, ԵԽԽՎ նախագահին, ԵԽԽՎ՝ մշտական և մոնիտորինգային հանձնաժողովի անդամներին, Եվրոխորհրդի մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարին, որտեղ նշել է, որ քաղբանտարկյալների մի խումբ դեռ բանտերում է, և քաղաքական ընդդիմության նկատմամբ ճնշումը դեռ շարունակվում է: Բանտերում կալանավորների և դատապարտյալների պահման պայմանները, չհամապատասխանելով եվրոպական որևէ չափանիշի, մնում են վատ, խոշտանգումները ոստիկանական բաժանմունքներում և բանակում պատճառ են դառնում մահվան դեպքերի և չեն բացահայտվում, որը կրում է մշտական բնույթ: Դատարանները, կատարելով դատախազության և իշխանությունների պատվերը, չեն իրականացնում արդարադատություն: Պատասխանատվության չեն ենթարկվել մարտի 1-ի դեպքերի տասը անմեղների մահվան պատասխանատուները և հանցագործության

[1] http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta08/ERES1609.htm
[2] http://assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/AdoptedText/ta08/ERES1620.htm
[3] http://assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/AdoptedText/ta09/ERES1643.htm
[4] http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta09/ERES1677.htm
[5] http://www.amnesty.org/

իրական կազմակերպիչները: Վերոնշյալ նամակով Հելսինկյան Ասոցիացիան խնդրել է ԵԽԽՎ-ի Մոնիտորինգային հանձնաժողովի համազեկուցողներին այցելել Երևան որքան հնարավոր է շուտ և հետազոտել Հայաստանի Հանրապետության համապատասխանությունը Եվրոպական Խորհրդի պահանջներին:
Հայաստանը շարունակում է մնալ մոնիտորինգի տակ որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն:

Մարտի 1-ի դեպքերից գրեթե 3 տարի անց շարունակվում է չբացահայտված մնալ զոհված 10 քաղաքացիների մահվան հանգամանքները: Մարտի 1-ի դեպքերով 9 զոհերի իրավահաջորդների ներկայացուցիչ Արտակ Զեյնալյանը 2010թ. բողոքարկել է Հատուկ քննչական ծառայության անգործությունը՝ 2 տարվա ընթացքում սպանությունների մասով ոչինչ չբացահայտելու հիմքով[6]: ՀՀ դատական բոլոր ատյանները մերժել են բողոքը:
2010թ. փետրվարի 4-ին "Բանակի ներգրավումը Հայաստանում 2008թ. մարտի 1-ի իրադարձություններին" վերնագրով բանաձևի նախագիծ է տեղադրվել ԵԽԽՎ պաշտոնական կայքում: Նախագիծը ներկայացվել է ԵԽԽՎ շվեդական պատվիրակության ղեկավար Գորան Լինբլադի կողմից: Նախագիծը ստորագրել են ԵԽԽՎ 20 պատգամավորներ: Այս փաստաթղթով նախագծի հեղինակները ՀՀ իշխանություններին մեղադրել են 2008թ. մարտի 1-ին Հայաստանում պետական հեղաշրջում իրականացնելու մեջ, քննադատության ենթարկել Մարտի 1-ի և 2-ի դեպքերն ուսումնասիրող ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի կողմից ներկայացված զեկույցը՝ համարելով այն կողմնակալ, և առաջարկել պատասխանատվության ենթարկել Մարտի 1-ի իրադարձություններում բանակի ներգրավման համար պատասխանատու բոլոր պաշտոնյաներին[7]:

[6] http://hahr.am
[7] http://assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/WorkingDocs/Doc10/EDOC12157.htm

2010թ. դեկտեմբերի 16-ին, համաձայն “Հեռուստատեսության և ռադիոյի մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 5-րդ մասի, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից հայտարարված հեռարձակման մրցույթների արդյունքների համաձայն “Ա1+” հեռուստաընկերությունը 13-րդ անգամ եթեր վերադառնալու հնարավորություն չստացավ: Գյումրիի “Գալա” հեռուստաընկերությունը նույնպես զրկվեց թվային հեռարձակման իրավունքից[8]:

2010 թվականին Հայաստանի իշխանությունների կողմից նախաձեռնվել է մի շարք օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես՝ փոփոխություններ են կատարվել Խոսքի ազատության և մամուլին առնչվող օրենսդրական դաշտում: Փոփոխություններ են կատարվել “Լեզվի մասին” և “Հանրակրթության մասին” օրենքներում, համաձայն որի՝ հնարավոր է դառնում Հայաստանում օտարալեզու դպրոցների բացումը, ինչը դժգոհության մեծ ալիք էր առաջացրել հանրության շրջանում: Այնուամենայնիվ, 2010թ. դեկտեմբերի 22-ին օրենքի նախագիծը ընդունվեց ՀՀ ԱԺ կողմից:
Օրենսդրական փոփոխություններ են նախաձեռնվել նաև “Ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին” ՀՀ օրենքում:
2010թ. ընթացքում ՀՀ իշխանությունների կողմից ԵԽԽՎ Վենետիկի հանձնաժողովին է ներկայացվել ՀՀ Ընտրական օրենսգրքի բարեփոխումների երկու նախագծեր: ՀՀ Ընտրական օրենսգրքի բարեփոխումների իրենց առաջարկություններն են ներկայացրել նաև Հայաստանի տարբեր քաղաքական ուժերը: Հելսինկյան Ասոցիացիայի փորձագետների կարծիքով Հայաստանում արդար և թափանցիկ ընտրությունների անցկացումը հնարավոր չէ ոչ թե ԸՕ-ում տեղ գտած անկատարությունների, այլ ՀՀ իշխանությունների կողմից քաղաքական կամքի բացակայության պատճառով:

[8] Գլուխ “Խոսքի ազատություն և ԶԼՄ”:

2010թ. ընթացքում շարունակվել են խոշտանգումները և բռնությունները Ոստիկանությունում և ՀՀ զինված ուժերում: 2010թ. գրանցվել է ոստիկանական բաժանմունքում մահացության առնվազն մեկ դեպք /Վահան Խալաֆյան/[9]:

2010թ.-ին գրանցվել է ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի թվի աճ: Դեպքերի հետ կապված տեղեկատվություն ստանալը դժվարություն է ներկայացնում: Մնալով փակ համակարգ՝ ՀՀ Զինված ուժերի հրամանատարությունը փորձում է ամեն կերպ կոծկել բանակում խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից մահացած զինվորների թիվը: Հիմնականում մահվան փաստը բացատրվում է ինքնասպանության, դժբախտ պատահարների, հակառակորդի կողմից սպանությամբ: Շարունակվում է ՀՀ քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:

2011թ. հունվարի 10-ին Հելսինկյան Ասոցիացիան դիմել է ՀՀ Պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կազմակերպությանը տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

1.Քանի ՀՀ քաղաքացի է 2010թ. հունվար - դեկտեմբեր ամիսներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչվել ՀՀ-ի և ԼՂՀ-ի բանակներում:

2. 2010թ. հունվար ամսից առ այսօր մահացության քանի դեպք է գրանցվել ՀՀ-ի և ԼՂՀ-ի բանակներում, մասնավորապես՝ բռնության, ինքնասպանության, դժբախտ պատահարների, հակառակորդի կողմից սպանության ելքերով:

Հղում կատարելով “Պետական և ծառայողական գաղտնիքի մասին” ՀՀ օրենքին՝

ՀՀ Պաշտպանության նախարարությունը կազմակերպության կողմից առաջադրված հարցերի առնչությամբ հայտնել է հետևյալը՝ “ ...Ձեր կողմից պահանջվող 1-ին տեղեկությունը համարվում է պետական գաղտնիք, քանի որ այն վերաբերում է զորքերի զարգացման թվին, մարտական կազմին և քանակին”: “...ՀՀ Պաշտպանության նախարարությունը չի կարող Ձեզ տրամադրել 2010թ. ՀՀ ԶՈՒ-ում մահացության

[9] Հավելված՝ “Վահան Խալաֆյան”, էջ 70:

դեպքերի վերաբերյալ տվյալներ, քանի որ այն նշված հրամանի համաձայն հանդիսանում է ծառայողական գաղտնիք”:

Համաձայն Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ զինված ուժերում 2010թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը գրանցվել է մահացության 42 դեպք:

2011թ. հունվարի 10-ին Հելսինկյան Ասոցիացիան դիմել է ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանին՝ խնդրելով կազմակերպությանը տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

1.Քանի քննչական կալանավոր և քանի դատապարտյալ կա ՀՀ ՔԿՀ-ներում ներկայումս,

2.Քանի մահացու դեպք է գրանցվել, մասնավորապես, սպանության, ինքնասպանության, դժբախտ պատահարներով, հիվանդության պատճառով,

3.Քանի տուբերկուլյոզով և ՁԻԱՀ-ով հիվանդ կա ՀՀ ՔԿՀ-ներում,

4.Քանի փախուստի դեպք է արձանագրվել 2010թ. հունվար ամսից առ այսօր:

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը տրամադրել է հետևյալ տեղեկատվությունը՝

1.2011թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվում են թվով 1437 կալանավորված անձ և թվով 3705 դատապարտյալներ,

2.2010թ-ի հունվարից առ այսօր արձանագրվել է մահվան 38 դեպք, որից 32-ը՝ հիվանդության պատճառով, 1-ը՝ դժբախտ պատահար, 5-ը՝ ինքնասպանություն:

3.2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվում են տուբերկուլյոզով հիվանդ 47, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով՝ 22 կալանավորված անձ և դատապարտյալ, որոնք բուժում են ստանում “Դատապարտյալների հիվանդանոց” և “Նուբարաշեն” քրեակատարողական հիմնարկներում:

4.2010թ. հունվար ամսից առ այսօր արձանագրվել է 1 փախուստի դեպք:

Ցանկացած խոշտանգման դեպք, որը տեղի է ունեցել ՀՀ Զինված ուժերում, Ոստիկանությունում, Դատախազությունում, կոծկվում է ՀՀ դատաբժշկական փորձագիտական կենտրոնի կողմից, որը կատարում է վերոնշյալ կառույցների պատվերը:

Հայաստանում շարունակվում է ԼԳԲՏ /լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրասնգենդեր/ համայնքի իրավունքների ոտնահարումը: Չնայած ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները շարունակվում են պարբերաբար ենթարկվել բռնությունների, նրանք բողոքներ չեն ներկայացնում՝ խուսափելով հրապարակայնությունից, հասարակության ծաղրանքին արժանանալուց և իրավապահ մարմինների կողմից կրկնակի բռնության ենթարկվելուց:

2010թ. ապրիլի 6-8-ը Հայաստանում անցկացվեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի /FIDH/ 37-րդ համաժողովը, որին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրներից 150 իրավապաշտպաններ, ինչպես նաև Հայաստանի հասարակական կազմակերպությունների և Արդարադատության համակարգի ներկայացուցիչներ: 2010թ. Երևանում անցկացվեցին Հանուն ժողովրդավարության ապագայի ֆորումը, “Արդար դատաքննություն և դատական իրավունքի անկախություն” թեմայով ԵՄ-Հայաստան հասարակական կազմակերպությունների համաժողովը: Պետք է նշել, որ համաժողովներին հրավիրված էին քաղաքացիական հասարակության միայն “ընտրովի” ներկայացուցիչներ:

Մի շարք միջազգային կազմակերպություններ հրապարակել են զեկույցներ 2010թ. մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ:

Freedom House ամերիկյան իրավապաշտպան կազմակերպության կողմից հրապարակված զեկույցում /Ազատությունն աշխարհում 2011թ.- Ավտորիտար մարտահրավեր ժողովրդավարությանը/[10] Հայաստանը դասակարգվել է որպես “մասամբ ազատ” երկիր: Զեկույցում երկրները դասակարգված են որպես “ազատ”, “մասամբ

[10] http://freedomhouse.org

ազատ” և “անազատ”: Երկրների վարկանիշները որոշելիս հաշվի են առնվել քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների գնահատումը:

Հայաստանին անդրադարձել է նաև հեղինակավոր Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպությունը իր՝ 2011թ. հրապարակած զեկույցում[11], որտեղ քննադատել է Հայաստանի իշխանություններին՝ մարտիմեկյան դեպքերի առիթով պատշաճ հետաքննություն չանցկացնելու, հավաքների ազատությանը խոչընդոտելու համար: Ինչպես նաև, զեկույցում նշվում է, որ երկրում շարունակում է լուրջ խնդիր մնալ ոստիկանությունում իրականացվող կտտանքներն ու դաժան վերաբերմունքը:

2010թ. ԱՄՆ պետքարտուղարության ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոն հրապարակել է Հայաստանում կրոնական ազատության իրավիճակի վերաբերյալ ամենամյա զեկույցը[12], որում նշվում է՝չնայած այն հանգամանքին, որ կրոնի ազատությունը, հավատքը դավանելու, ընտրելու կամ փոխելու իրավունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, այդուհանդերձ օրենքը որոշակի սահմանափակումներ է դնում կրոնական փոքրամասնությունների կրոնական ազատության վրա: Ըստ զեկույցի, Հայաստանում հայկական եկեղեցին որոշակի արտոնություններ ունի, որոնք չեն գործում այլ կրոնական խմբերի համար:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն /CPT/ 2010թ. մարտի 19-ին հրապարակեց 2008թ. մարտի 1-ի դեպքերի հետ կապված զեկույցը[13], որտեղ նշում է, որ 2008թ. տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո իրավապահների կողմից ձերբակալված անձինք ենթարկվել են ֆիզիկական բռնության, նույնիսկ այն դեպքում, երբ վերջիններս իրավապահ մարմիններին դիմադրություն ցույց չեն տվել:

[11] http://www.hrw.org/en/world-report-2011
[12] http://armenian.armenia.usembassy.gov/news111810.html
[13] http://www.cpt.coe.int

2010թ. Հայաստանը դիտարկվել է ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկման շրջանակներում: Ժողովրդավար համարվող երկրները Հայաստանի հիմնախնդիրները թվելիս հիմնական շեշտը դրել են խոսքի, մամուլի, դավանանքի ազատության, իրավապահ համակարգի կարգավորման, արդարադատության անկախության, 2008-ի նախագահական ընտրությունների ժամանակ եւ հետո տեղի ունեցած իրավախախտումների եւ հանցագործությունների արդար քննության ու մեղավորներին պատժելու վրա[14]:

2010թ. Հարավային Կովկասում խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրականացման վերաբերյալ հայտարարությամբ են հանդես եկել Մարդու իրավունքների տուն հիմնադրամը[15] և Հարավկովկասյան իրավապաշտպանների ցանցը որով կոչ են արել ԵԱՀԿ-ին և նրա անդամ պետություններին առաջնություն տալ այն մեխանիզմների ամրապնդմանը, որոնք երաշխավորում են խաղաղ հավաքների և ցույցերի ազատության իրավունքի իրականացումը[16]:

ԱՄՆ Պետքարտուղարության կողմից շնորհվող “Ազատության պաշտպան, Հայաստան 2010” ամենամյա մրցանակը անհատներին եւ հասարակական կազմակերպություններին 2010թ. շնորհվեց երեք հայ դատավորների՝ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ռուզաննա Բարսեղյանին, վարչական վերաքննիչ դատարանի դատավոր Հովսեփ Բեդեւյանին եւ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մարինե Մելքոնյանին: ՀՀ-ում ԱՄՆ Դեսպան Մարի Յովանովիչը իր խոսքում նշել է, որ այս երեք դատավորները ներդրում են ունեցել ի նպաստ օրենքի իշխանության և Հայաստանի դատական անկախության:

[14] http://www.upr-info.org/IMG/pdf/A_HRC_15_9_E.pdf

[15] Մարդու իրավունքների տուն հիմնադրամը հանդիսանում է Մարդու իրավուքների տուն ցանցի քարտուղարությունը, որը միավորում է ավելի քան 70 իրավապաշտպան կազմակերպությունների աշխարհի 15 երկրներում. www.humanrightshouse.org

[16] http://hahr.am/

2010թ. մարտի 10-ին Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչը քաղաքացիական հասարակության ակտիվիստ Մարիամ Սուխուդյանին հանձնեց “Խիզախ կին” մրցանակը: Մրցանակը Սուխուդյանին շնորհվել է շրջակա միջավայրի և հատուկ կարիք ունեցող երեխաների պաշտպանությանը և արդարությանը հետամուտ լինելու գործում պատասխանատվության, խիզախության և առաջնորդության ցուցաբերման համար:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԼՄ

2010թ. հոկտեմբերի 20-ին "Լրագրողներ առանց սահմանների" /Reporters Without Borders/ միջազգային հասարակական կազմակերպությունը ներկայացրեց մամուլի ազատության տարեկան ինդեքսը /Worldwide Press Freedom Index 2010/, որը ներառում է 2009թ.սեպտեմբերից մինչև 2010թ.սեպտեմբերը ընկած ժամանակահատվածը[17]: Հետազոտված 178 երկրներից կազմված աղյուսակում Հայաստանը 27.50 միավորով զբաղեցնում է 101-րդ տեղը: Բարձր միավորները մատնանշում են ԶԼՄ-երի բնագավառում իրավիճակի վատթարացումը:

Կազմակերպությունը իր տարեկան հարցումը իրականացրել է՝ հիմնվելով 43 չափանիշների վրա, որոնց շարքում են լրագրողների նկատմամբ բռնությունները և հարձակումները, ինչպես նաև գրաքննությունը և մամուլի ազատության նկատմամբ բռնություն գործադրած պատասխանատու անձանց անպատժելիության հանգամանքը:

2010թ. հունվարի 27-ին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը ընդունեց 1897 հանձնարարականը[18] ուղղված Եվրախորհրդի նախարարների կոմիտեին, որում Վեհաժողովը հանձնարարում է Կոմիտեին կոչ անել Հայաստանի իշխանություններին վերանայել հեռարձակման լիցենզիաների տրամադրման վերաբերյալ օրենսդրությունը, որը ընդունվել է ի հակադրումն Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝Մելտեքս ՍՊԸ և Մ. Մովսեսյանը ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով 2008թ.հունիսի 17-ի վճռի:

Համաձայն Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի հրապարակած տվյալների՝2010թ.գրանցվել է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության 9, ԶԼՄ-ների և դրանց աշխատակիցների վրա ճնշումների 19 դեպք: 18 դեպք է գրանցվել նաև տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումների վերաբերյալ[19]:

Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատության իրավունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ: Հոդված 27-ը ամրագրում է՝ "Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն

[17] http://www.rsf.org/
[18] http://assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/AdoptedText/ta10/EREC1897.htm
[19] http://www.khosq.am

ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը”:

Սույն ոլորտը կարգավորվում է նաև 2003թ.դեկտեմբերի 13-ին ընդունված “Զանգվածային լրատվության մասին” ՀՀ օրենքով: “Զանգվածային լրատվության մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն արգելվում է՝

1. գրաքննությունը,

2. որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ,

3. լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը:

Օրենքը իր բովանդակությամբ համապատասխանում է միջազգային ստանդարտներին: Սակայն իրականում այն չի գործում:

2010թ. գրանցվել են մի շարք բռնության դեպքեր լրագրողների նկատմամբ, ճնշումներ Զանգվածային լրատվական միջոցների վրա, նրանց տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումներ:

2010թ. փետրվարի 11-ին “Դարեսկիզբ” ՍՊԸ-ն, որը հանդիսանում է “Հայկական ժամանակ” օրաթերթի հրատարակիչ, Դատական ակտերի հարկադիր կատարման

ծառայության պարտադրանքով և իր բանկային հաշիվների վրա դրված արգելանքը վերացնելու, թերթի տպագրությունը շարունակելու համար ստիպված եղավ վճարել 3 մլն. դրամ տուգանք: Տուգանքը վճարելուց հետո սակայն "Դարեսկիզբ" ՍՊԸ հաշիվների վրա դրված արգելանքը չհանվեց: Այն վերացվեց միայն 2010թ. մարտի 3-ին՝ "Հայկական ժամանակ" օրաթերթում տպագրված հոդվածի հերքումը տպագրվելուց հետո:

2009թ. ապրիլի 23-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում սկսվել էր ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կրտսեր որդու՝ Լևոն Քոչարյանի հայցի քննությունը ընդդեմ "Հայկական ժամանակ" թերթի: Հայցի պատճառ էր դարձել 2009թ. փետրվարի 6-ին "Հայկական ժամանակ" թերթում հրապարակված հոդվածը, որում խոսվում էր 2008թ. վերջին Դուբայում Լևոն Քոչարյանին ձերբակալելու մասին: Հայցվորը պահանջում էր հերքել իր պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները և հատուցել բարոյական վնաս 16 մլն 120 հազար ՀՀ դրամի չափով[20]:

2010թ. մարտի 23-ին Գյումրիի "ԳԱԼԱ" հեռուստաընկերության տարածած հաղորդագրության համաձայն՝ պետական, ուժային որոշ գերատեսչությունների անմիջական ճնշումների հետևանքով գովազդատու կազմակերպությունները 2010թ. փետրվարի կեսերից խուսափում են իրենց գովազդները տեղադրել հեռուստաընկերության եթերում: Մեկ ամսվա ընթացքում 26 գովազդատու կազմակերպություններ հեռուստաընկերության եթերից հանել են իրենց գովազդները:

2010թ. հունվարի 13-ին "Հայկական ժամանակ" օրաթերթի խմբագրություն ահազանգ է ստացվել այն մասին, որ ինչ-որ խմբեր Երեւանի տարբեր հատվածներում շրջում են թերթերի կրպակներով եւ գնում "Հայկական ժամանակ" օրաթերթի հունվարի 13-ին լույս տեսած ամբողջ խմբաքանակը: Թերթի այսպիսի հավաքագրում արձանագրվել է քաղաքի մի քանի այլ հատվածներում: Ըստ թերթի՝ պատճառը հունվարի 13-ի

[20] Հելսինկյան Ասոցիացիա 2009թ.տարեկան զեկույց, Խոսքի ազատություն և ԶԼՄ, էջ 35:

համարում տպագրված տեղեկատվությունն է ԱԺ պատգամավորներ Մեյրան Սարոյանի եւ Լեւոն Սարգսյանի բանդաների բախման մասին[21]:

Ապրիլի 16-ին Գեղագիտական դաստիարակության ազգային կենտրոնում պետք է ցուցադրվեր հրապարակախոս Տիգրան Պասկեւիչյանի սցենարով նկարահանված "Ընտրություն" ֆիլմը: Սակայն նույն օրը թատրոնի տնօրինությունից տեղեկացրել են, որ Կենտրոնի տնօրեն Լեւոն Իգիթյանն արգելել է ֆիլմի ցուցադրումը: Այնուհետեւ պարզվել է, որ արգելքը դրվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունից: Սա Տ.Պասկեւիչյանի երկրորդ ֆիլմն է, որի ցուցադրությունն արգելվում է/ "Օտարում", 2008թ.հոկտեմբեր/[22]:

Մայիսի 24-ին, "Չորրորդ ինքնիշխանություն" օրաթերթում "Երկրապահի ինադու" հոդվածի հրապարակումից հետո, որը վերաբերում էր ՀՀ ՊՆ Ռազմական ոստիկանության Արմավիրի կայազորի ղեկավար, "Փառապանծ մարտիկներ" կազմակերպության նախագահ Գրիշա Սարգսյանի օրինախախտ գործունեությանը, վերջինս զանգահարել է թերթի խմբագրություն եւ սպառնալիքներ ուղղել "Չորրորդ ինքնիշխանության" լրագրող Թագուհի Թովմասյանին եւ ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանին՝ ասելով, որ ինքը պատրաստվում է "պատժել նրանց" և "գլխից խփելու" է: Ինչպես նաև բղավել է, թե "Մոռացե՞լ եք ես ինչքան մարդ ունեմ, գալու եմ բամբիտ անեմ ձեր խմբագրությունը, դուք դեռ ինձչգիտեք"[23]:

Լրագրողները շարունակում են ենթարկվել բռնությունների և հարձակումների իրենց մասնագիտական գործունեությունը կատարելիս:

---

[21] http://www.armtimes.com/223

[22] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի երկրորդ եռամսյակային զեկույց /ապրիլ-հունիս 2010թ./ http://www.khosq.am

[23] http://chi.am/ No 131 (Չորրորդ ինքնիշխանություն), Մայիսի 25, 2010թ.

2010թ. փետրվարի 24-ին բռնության է ենթարկվել "ՉԻ" եւ "Առավոտ" թերթերի ֆոտոթղթակից Գագիկ Շամշյանը, երբ վերջինս ՀՀ Գլխավոր դատախազության շենքի դիմաց լուսանկարելիս է եղել դատախազության շենք մուտք գործող պաշտոնյաներին: Ոստիկանության քննչական բաժնի քննիչ Գագիկ Մարգարյանը հարձակվել է Շամշյանի վրա, և, նրա հասցեին հայհոյանքներ հնչեցնելով, ձեռքի պայուսակով հարվածել դեմքին: Շամշյանը շտապօգնության մեքենայով տեղափոխվել է հիվանդանոց: Բժշկական կենտրոնում լրացուցիչ հետազոտությունից հետո պարզ է դարձել, որ նա ստացել է ականջի թաղանթի արյունազեղում[24]:

Մայիսի 31-ին մասնագիտական պարտականությունները կատարելիս բերման է ենթարկվել, ապա եւ ձերբակալվել "Հայկական ժամանակ" օրաթերթի լրագրող Անի Գեւորգյանը: Նրա նկատմամբ քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ՝ "Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնության գործադրում" հոդվածի 1-ին մասով: "Ազատություն" ռադիոկայանի հետ զրույցում Ա. Գեւորգյանը նշել է, որ ոստիկանները ակցիայի ամբողջ ընթացքում իր դեմ բազմաթիվ բռնություններ են գործադրել՝ հարվածել են եւ՝ ձեռքով, եւ՝ ոտքով:

Մայիսի 31-ին ոստիկանները խոչընդոտել են նաեւ "Հայկական ժամանակ" օրաթերթի մեկ այլ լրագրող՝ Սյուզաննա Պողոսյանի եւ "Հայք" թերթի թղթակից Լիլիթ Թադեւոսյանի մասնագիտական գործունեությունը: Նրանք բերման են ենթարկվել ոստիկանական բաժանմունք, ապա ժամեր անց ազատ արձակվել:

Սեպտեմբերի 14-ին "Հայկական ժամանակ" օրաթերթի լրագրողի վրա է հարձակվել ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի եղբայր ԱԺ պատգամավոր Սաշիկ Սարգսյանը, երբ լրագրողը սկսել է լուսանկարել նրան ԱԺ բուֆետում այլ պատգամավորների հետ զրուցելիս: Սարգսյանը գոռալով, բռունցքները վեր պարզած, տեղից վեր է ցատկել և հարձակվել

[24] http://www.a1plus.am/am/social/2010/02/25/shamshyan

լրագրողի վրա: Նրան մի կերպ նստեցրել են տեղը, ինչից հետո ներկա մյուս պատգամավորները նրան տարել են կառավարության շենքից դուրս[25]:

2009թ.“Armenia Today” ինտերնետային լրատվական կայքի խմբագիր-կոորդինատոր Արգիշտի Կիվիրյանի վրա կազմակերպված մահափորձի առնչությամբ ձերբակալված երկու անձինք՝ Գուրգեն Կիլիկյանը եւ Վլադիմիր Սերոբյանը, 2010թ. ազատ են արձակվել: Ըստ Ա. Կիվիրյանի, իր դեմ մահափորձը պատվիրել է Ախալքալաքի ոստիկանապետ Սամվել Պետրոսյանը, որի գործունեության մասին նա հանդես է եկել սուր հրապարակումներով: Ա. Կիվիրյանը 2009թ.ապրիլի 30-ին իր տան շքամուտքում դաժան ծեծի էր ենթարկվել և ծանր վնասվածքներով տեղափոխվել հիվանդանոց: Հարձակվողները օգտագործել են բեյսբոլի փայտեր, ինչպես նաև հրազենային ատրճանակ, սակայն Կիվիրյանին հաջողվել է խուսափել հրազենային վնասվածք ստանալուց: Ոստիկանության կողմից հարուցվել էր քրեական գործ ՀՀ քր.օր. 117-րդ հոդվածի հատկանիշներով /դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը/: Մեկ շաբաթ անց քրեական գործը հանձնվել էր Ազգային անվտանգության ծառայությանը և վերաորակվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 7 կետով՝ /սպանության փորձ մի խումբ անձանց կողմից/:

2010թ. Խոսքի ազատությանը առնչվող օրենսդրական դաշտում կատարվել են մի շարք փոփոխություններ: Փոփոխությունները, ըստ փորձագետների, ունեին և՝ դրական, և՝ բացասական կողմեր: Մասնավորապես՝ՀՀ Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն լրագրողի աշխատանքին միջամտելու դեպքում: 2010թ. ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց “Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին” օրինագիծը: Դրանով ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ՝ “Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը” հոդվածում խստացվում է

[25] http://www.armtimes.com/16774

լրագրողների գործունեությունը խոչընդոտելու համար նախատեսվող պատժաչափը. տուգանքի նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափը փոխարինվում է երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի եւ ավելացվում է նոր մաս, ըստ որի՝ երեքից յոթ տարի ժամկետով ազատազրկման պատիժ է նախատեսվում, եթե նույն արարքները կատարվել են լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:

Մայիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց “ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին”, “ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին” եւ “ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին” օրենքների նախագծերի փաթեթը: Ըստ նախագծերի՝ չեղյալ են համարվում ՀՀ քր. Օր. 135 ՝ “Զրպարտությունը” եւ 136 “Վիրավորանքը” հոդվածները, փոխարենը անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: 2009 թվականից քննարկվող այս նախագծերը քննադատության են արժանացել փորձագետների եւ լրագրողների կողմից: 2010թ. մարտի 18-ին նախագծի՝ ՀՀ ԱԺ-ի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո ձեւավորված աշխատանքային խմբի կողմից նախագծի լրամշակումից հետո շատ մտահոգություններ վերացել են, սակայն որոշ փորձագետների կարծիքով՝ քանի դեռ ՀՀ Քր. Օր.-ում մնում է 333-րդ՝ “Սուտ մատնությունը” հոդվածը, որի ձեւակերպումները քիչ են տարբերվում զրպարտությունից, ապա միշտ կա լրատվամիջոցներին քրեական պատասխանատվության ենթարկելու վտանգը[26]:

Հունիսի 10-ին ՀՀ ԱԺ արտահերթ նիստի ընթացքում երկրորդ ընթերցմամբ ու ամբողջությամբ ընդունվեց “Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին” օրենքի նախագիծը:

[26] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի երկրորդ եռամսյակային զեկույց /ապրիլ-հունիս 2010թ./ http://khosq.am/

Օրենքի նախագծի վերաբերյալ իրենց մտահոգությունն էին հայտնել Human Rights Watch հեղինակավոր միջազգային կազմակերպությունը, ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Դունյա Միյատովիչը, Հայաստանում Եվրամիության անդամ երկրների դեսպանները, ինչպես նաեւ տեղական կազմակերպությունները: Մասնավորապես, Human Rights Watch-ը մտահոգություն է հնչեցրել, որ 2011թ.-ից հեռարձակվող հեռուստաալիքների թիվը 22-ից կրճատվելու է 18-ի, ինչը մեծացնում է բազմակարծությունը սահմանափակելու վտանգը: Կարող են տուժել հատկապես նոր հեռուստաընկերությունները, քանի որ, ըստ ընդունված օրինագծի, լիցենզավորման մրցույթների ժամանակ առավելությունը տրվելու է արդեն գործող կամ առնվազն 3 տարվա հեռարձակման փորձ ունեցող ընկերություններին[27]: Համաձայն ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Դունյա Միյատովիչի՝ չնայած փոփոխություններին՝ Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքը չի խթանում հեռարձակման բազմակարծությունը թվային դարաշրջանում: Ըստ նրա՝ օրենքի թերություններից են հեռուստաալիքների թվի սահմանափակումը, արբանյակային, բջջային և ինտերնետային հեռարձակման հստակ կանոնների բացակայությունը՝ հեռարձակման բոլոր տեսակները դնելով Կարգավորիչ մարմնի կողմից լիցենզավորման կամ նրա թույլտվությունների ռեժիմի ներքո / “Լիցենզիան միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել հեռուստառադիոծրագրերի հեռարձակում” (հոդված 46)/[28], լրատվամիջոցների ազատության վրա անտեղի սահմանափակումներ պարունակող օրենքի դրույթների հիման վրա հեռարձակման արտոնագիրը դատարանների կողմից դադարեցնելու լիազորումը և թվային մասնավոր հեռուստաալիքների ստեղծման ընթացակարգերի ու պայմանների բացակայությունը[29]:

[27] http://www.hra.am/am/hr-reviews/2010/06/16/hrw

[28] Համաձայն Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի՝ հեղինակաները, ըստ էության, հիմքեր են ստեղծել արբանյակային եւ ինտերնետային հեռարձակումը չթույլատրելու համար:

[29] http://www.a1plus.am/am/official/2010/06/16/dunja-mijatovic

Բուն թվայնացումը եւ լիցենզավորման մրցույթների կազմակերպումը կարգավորող հոդվածները մեծ փոփոխություններ չեն կրել, եւ, ըստ փորձագետների, դարձյալ մրցույթներում հաղթողներին որոշելը սուբյեկտիվիզմի հսկայական տարրեր է պարունակելու իր մեջ: Միայն միջազգային կազմակերպությունների ճնշման տակ հեղինակները ներառեցին դրույթ, ըստ որի լիցենզավորված անձի ընտրության դեպքում պետք է պատճառաբանվի եւ հիմնավորվի այդ ընտրությունը[30]:

Չնայած միջազգային կառույցների և կազմակերպությունների, ինչպես նաև տեղական կազմակերպությունների կողմից հնչեցված մտահոգությունների՝հունիսի 17-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը ստորագրեց Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը:

“Հեռուստատեսության և ռադիոյի մասին” օրենքում 2008թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ ԱԺ-ում օրենքով կատարված փոփոխություններով՝ Հայաստանում արգելվեցին հեռարձակման արտոնագրման մրցույթները մինչև 2010թ. հուլիսի 20-ը: Այդ նախաձեռնությունը ՀՀ Կառավարությունը հիմնավորել էր Հայաստանում հեռարձակման թվայնացման գործընթացի ներդրումով: Այդ օրենսդրական փոփոխությունից հետո Հայաստանում մի շարք հեռուստաընկերություններ և ռադիոընկերություններ, որոնց արտոնագրի գործողության ժամկետն արդեն լրանում էր՝ առանց մրցույթի, միայն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից արտոնագրի ժամկետի երկարաձգմամբ շարունակեցին հեռարձակումն այն պայմաններում, երբ Ա1+ հեռուստաընկերությունը եթերազրկվեց արտոնագրի կորստից ժամեր անց:

2010թ. փետրվարի 19-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժեց “Ա1+” հեռուստաընկերության հիմնադիր “Մելտեքս” ՍՊԸ դիմումը՝ վճռաբեկ դատարանի 2004 թ. փետրվարի 27-ի և 2004թ. ապրիլի 23-ի վճիռները վերանայելու վերաբերյալ: 2004թ. փետրվարի 27-ին վճռաբեկ դատարանն անփոփոխ էր թողել ՀՀ Տնտեսական դատարանի 2004թ. հունվարի

[30] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի երկրորդ եռամսյակային զեկույց /ապրիլ-հունիս 2010թ./ http://khosq.am/

21-ի վճիռը, որով մերժվել էր “Մելտեքս” ՍՊԸ-ի հայցը ընդդեմ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ՝ “Սինեմաքս” ՍՊԸ-ին 63-րդ դեցիմետրային հաճախականությամբ հեռարձակման լիցենզիա տրամադրելու մասին որոշումը չեղյալ համարելու մասին: 2004թ.ապրիլի 23-ին վճռաբեկ դատարանն ուժի մեջ էր թողել Տնտեսական դատարանի 2004թ.մարտի 23-ի վճիռը, որով մերժվել էր “Մելտեքս” ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի՝ 2003թ.հունիսի 11-ին և հուլիսի 13-ին անցկացված մրցույթների արդյունքներով լիցենզիա չտրամադրելու պատճառները պատշաճ չհիմնավորելու համար: Վճռաբեկ դատարանին ուղղված “Մելտեքսի” ներկա դիմումը պայմանավորված էր նոր երևան եկած հանգամանքներով, այն է՝ “Ա1+”-ի հիմնադիրն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008թ. հունիսի 17-ի որոշումը, համաձայն որի “Մելտեքս” ՍՊԸ-ին հեռարձակման արտոնագիր չտրամադրելը համարվել էր Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Վճռաբեկ դատարանը որոշեց, որ “Ա1+”-ի հիմնադրի վիճարկած դատական վճիռներն ընդունվել են 2004-ին գործող օրենսդրությանը համապատասխան և ենթակա չեն վերանայման: “Մելտեքս” ՍՊԸ-ը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ պահանջելով հակասահմանադրական ճանաչել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204/28 հոդվածի 1-ին մասը, քանի որ այդ դրույթը վճռաբեկ դատարանի ընդունած որոշման հիմք է հանդիսացել: Փետրվարի 23-ին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը որոշեց ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածով, “Սահմանադրական դատարանի մասին” ՀՀ օրենքի 19, 32 եւ 60 հոդվածներով.

1. “Մելտեքս” ՍՊԸ-ի եւ քաղաքացիներ Ս.Ֆլջյանի, Ի.Օգանեզովայի, Ա.Բաղդասարյանի եւ Ա.Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28 հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճել, նկատի ունենալով նաեւ, որ

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-758 որոշման 13 կետում արտահայտած իրավական դիրքորոշման եւ եզրափակիչ մասի 5-րդ կետի հիմքով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչվել նաեւ “ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին” 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ օրենքի (ՀՕ-277-Ն) 76 հոդվածում ընդգրկված 204/28 հոդվածը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված՝ ինչպես ՀՕ-233-Ն, այնպես էլ դրան հաջորդող որեւէ այլ օրենքով դեռեւս ՀՀ Սահմանադրությանը չի համապատասխանեցվել, ինչպես նաեւ այն, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների եւ “Սահմանադրական դատարանի մասին” ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի պահանջների հիմքով սպառված չպետք է համարվի սույն գործի առարկայի շրջանակներում նոր հանգամանքներով իրավասու դատարան դիմելու շահագրգիռ այլ անձանց իրավունքը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Սահմանադրական դատարանի որոշումը հիմք ընդունելով, “նոր հանգամանքի” կամ “նոր երևան եկած հանգամանքի” հիմքով “Մելտեքս” ՍՊԸ-ն իր ներկայացուցիչների միջոցով դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ պահանջելով հարուցել Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված դատական ակտերի վերանայման վարույթ: Վճռաբեկ դատարանը 04.03.2010թ. որոշմամբ՝ “նոր երևան եկած հանգամանքի” հիմքով, “Մելտեքս” ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքներն ընդունել է վարույթ՝ կայացնելով “Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին” որոշում: Սակայն դարձյալ չի վերանայել իր կողմից նախկինում կայացված դատական ակտերը՝ հողում կատարելով “նոր հանգամանքի” իրավական ինստիտուտը կարգավորող նույն, սակայն այլ հոդվածի համարակալմամբ,

իրավակարգավորման վրա, ինչը Սահմանադրական դատարանը մեկ անգամ որոշմամբ ճանաչել էր Սահմանադրությանը հակասող և անվավեր և ևս մեկ անգամ՝ վերահաստատել էր իր դիրքորոշումն ու որպես ոչ իրավաչափ էր գնահատել այդ անվավեր ճանաչված նորմի կիրառումը "Մելտեքս" ՍՊԸ-ի նկատմամբ:

2010թ. հուլիսի 20-ին, համաձայն "Հեռուստատեսության և ռադիոյի մասին" ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը /ՀՌԱՀ/ հայտարարեց ՀՀ տարածքում թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների լիցենզավորման մրցույթները: Դեկտեմբերի 16-ին ՀՌԱՀ-ի կողմից հայտարարվեց հեռարձակման մրցույթների արդյունքները: 2002թ. ապրիլի 2-ից եթերազրկված եւ, այնուհետև, դրանից հետո հայտարարված բոլոր մրցույթներին մասնակցած ու պարտված "Ա1+" հեռուստաընկերությունը կրկին եթեր վերադառնալու հնարավորություն չստացավ: ՀՌԱՀ նախագահ Գրիգոր Ամալյանի խոսքերի համաձայն "Ա1+"-ի փաթեթում առկա են եղել կեղծ փաստաթղթեր: Ըստ նրա, փաթեթում "Մելտեքս" ընկերությանը ֆինանսական աջակցություն ցուցաբերող արտասահմանյան ընկերությունները իրականում գոյություն չունեն: "Ա1+"-ի նախագահ Մ. Մովսիսյանի կողմից նման մեղադրանքը համարվել է անհիմն: Գյումրիի "Գալա" հեռուստաընկերությունը նույնպես զրկվեց թվային հեռարձակման իրավունքից:

Human Rights Watch միջազգային կազմակերպությունը դատապարտել է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից հայտարարված հեռարձակման մրցույթի արդյունքների համաձայն "Ա1+"–ին հեռարձակման լիցենզիա չտրամադրելու մասին որոշումը՝ հակառակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացրած վճռի, համաձայն որի՝ նախորդ մերժումները խախտում են խոսքի ազատության իրավունքը: Human Rights Watch–ի Հարավային Կովկասը ուսումնասիրող Գեորգի Գոգիայի հայտարարության համաձայն՝ "Այս որոշումը Հայաստանում խոսքի և տեղեկատվության ազատության ևս մեկ խոչընդոտ է: Պարզ է,

որ այս կառավարության համար քննադատողին հեռարձակում չտրամադրելը առավել կարևոր է, քան միջազգային–իրավական պարտավորությունները:"[31]

[31] http://www.hrw.org/en/news/2010/12/16/armenia-new-rebuff-broadcaster

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐ

“Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքը /ընդունված է 2001 թվականի դեկտեմբերի 4-ին/ կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու մարդու՝ սահմանադրորեն ամրագրված իրավունքն իրականացնելիս ծագող իրավահարաբերությունները՝ կապված հասարակական կազմակերպությունների ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ:

Օրենսդրությամբ չի նախատեսվում որևէ սահմանափակում մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություն ստեղծելու հարցերում, եթե վերջինիս նպատակները չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը և սույն ոլորտը կարգավորող օրենսդրությանը:

Ինչ վերաբերվում է հասարակական կազմակերպությունների պետական գրանցմանը, ապա այն ևս կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես “Հասարակական կազմակերպությունների մասին” և “Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքներով:

Այլ ներպետական և միջազգային նմանատիպ կազմակերպությունների հետ անարգել համագործակցության հարցերը նույնպես նախատեսված են ՀԿ-ների մասին օրենքով:

2009թ. Հայաստանի իշխանությունների կողմից նախաձեռնվել էր փոփոխություններ կատարել “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքում: 2010թ. ապրիլի 15-ին Արդարադատության նախարարության կողմից հկ-երին ուղարկվեց արդեն վերամշակված օրինագիծը, ինչը նախարարությունը կատարել էր հկ-երի առաջարկով: Հկ-երի կարծիքով, սակայն, վերամշակման դեպքում էլ ոչինչ չի փոխվել՝ վերստին մտահոգություն հայտնելով, որ նախատեսվող փոփոխությունները նպատակ են հետապնդում վերահսկողություն սահմանել հասարակական կազմակերպությունների գործունեության նկատմամբ: Հասարակական կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակ է հետապնդում նաև ՀՀ Կառավարության 2010թ. օգոստոսի 5-ի որոշման

համաձայն ստեղծված ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի՝ օրենքով նախատեսված առանձին ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության օրինականության վերահսկողության տեսչությունը:

“Մարդու իրավունքների պաշտպանի մասին” ՀՀ օրենքն ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 21-ին:
Համաձայն ՀՀ Սահմանադրության 83.1 հոդվածի՝ 2006թ. փետրվարի 17-ին Ազգային ժողովում կայացած ընտրությունների արդյունքում Արմեն Հարությունյանը, հավաքելով պատգամավորների ձայների ընդհանուր թվի ավելի քան 3/5-ը, ընտրվել է ՀՀ Մարդու իրավունքների խորհրդարանական առաջին պաշտպան 6 տարի ժամկետով:

Համաձայն “Մարդու իրավունքների պաշտպանի մասին” ՀՀ օրենքի՝ պաշտպանի քննարկմանը ենթակա են այն բողոքները, որոնք վերաբերվում են.

Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից՝ մարդու խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը և վերականգնումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պետական պաշտպանության երաշխիքների ստեղծմանը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց, պետական ծառայողների կողմից մարդու իրավունքների ու ազատությունների հարգմանը և պաշտպանությանը:

2010թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է “ՀՀ-ում խաղաղ հավաքների իրավունքի մասին”, “Խոսքի ազատության իրավունքը ՀՀ-ում” արտահերթ հրապարակային զեկույցները: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել է նաև “ Հավաքների մասին” ՀՀ օրենքի նախագիծ[32]:

[32] http://ombuds.am/main/am/10/31/0/4/

2011թ.փետրվարի 1-ին, Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը ՀՀ ԱԺ նախագահին ներկայացրել է հրաժարականի մասին դիմում՝ նկատի ունենալով մրցույթի արդյունքում Կենտրոնական Ասիայում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի հատուկ ներկայացուցչի պաշտոնում նշանակվելու հանգամանքը: 2006թ.փետրվարի 20-ից մինչև 2010թ.դեկտեմբերի 31-ը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը ստացել է 18346 դիմում-բողոք, վերականգնվել է 8703 անձանց խախտված իրավունքը: Համաձայն Պաշտպանի՝ նախորդ հինգ տարիների ընթացքում իր գրասենյակ ստացված ահազանգերի հիմնական դժգոհությունները Երևանի քաղաքապետարանից, մարզպետարաններից, ոստիկանությունից, դատարաններից, արդարադատության նախարարությունից են[33]:

Բողոքների քանակը դեռևս չի խոսում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի արդյունավետ աշխատանքի մասին: Հայաստանյան իրավապաշտպանները "Ազատություն" ռադիոկայանի հետ զրույցներում խիստ քննադատություն են ենթարկել Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը: Համաձայն Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանի՝ Հայաստանի նման երկրներում օմբուդսմենի ինստիտուտ ընդհանրապես չպետք է լինի "քանի որ լիազորությունները Մարդու իրավունքների պաշտպանի Հայաստանում միշտ սահմանափակ կլինեն, թույլ չեն տա աշխատել: Դրա համար անիմաստ է, որ նման պաշտոն ընդհանրապես լինի Հայաստանում"[34]:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի խոսքերի համաձայն՝ "Մարդու իրավունքների պաշտպանը չի անդրադառնում համարժեք ձեւով Պաշտպանության նախարարությունում կամ Զինված ուժերում զինծառայողների իրավունքների խախտման, մահացության դեպքերին, քաղբանտարկյալների հետ կապված խնդիրներին… որոշակի խզում կա իրավապաշտպան կազմակերպությունների կողմից գնահատականների,

[33] http://tert.am/am/news/2011/02/02/ombudsman2/
[34] http://www.azatutyun.am/content/article/2296822.html

գործողությունների եւ պաշտպանի ինստիտուտի գործելակերպի միջեւ”[35]:

Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպությունը 2011թ. հրապարակած զեկույցում նշել է, որ ոստիկանությունը դադարեցրել է 2008թ. մայիսին Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանի վրա հարձակման գործով հետաքննությունը: Մ. Դանիելյանը վիրավորվել էր, երբ հարձակվող անձը վիճաբանությունից հետո կրակել էր նրա վրա գազային ատրճանակից: Նախաքննությունը դադարեցվել էր հանցակազմի բացակայության հիման վրա: Դատարանը մերժել է Մ. Դանիելյանի բողոքը այս որոշման դեմ: Քաղաքացիական հասարակության ակտիվիստ Մարիամ Սուխուդյանը 2008թ.նոյեմբերին հանրային հեռուստաընկերության եթերից հանրությանը ներկայացրել էր 2 աղջիկների վերաբերյալ պատմություն, ովքեր ենթարկվել են սեռական ոտնձգության Երևանյան դպրոցներից մեկում: Ոստիկանության կողմից Սուխուդյանի նկատմամբ հարուցվել էր քրեական գործ սուտ մատնության հոդվածով[36]: 2010թ.մարտի 10-ին, Հայաստանում ԱՄՆ Դեսպանատունը Մ.Սուխուդյանին է շնորհել “Խիզախ կին” մրցանակը: Մեկ օր անց նրա նկատմամբ հարուցված քրեական գործը կարճվել է:

2010թ. հուլիսի 5-ին Հայաստան այցելեց ԱՄՆ Պետքարտուղար Հիլլարի Քլինթոնը: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Հարավկովկասյան իրավապաշտպանների ցանցի[37] Հայաստանի կոորդինատոր Հելսինկյան Ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը, ցանցի

[35] http://www.azatutyun.am/content/article/2296822.html
[36] http://www.hrw.org/en/world-report-2011
[37] Հարավկովկասյան Իրավապաշտպանների ցանցը միավորում է 30 իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից: Վրաստանում ցանցի աշխատանքը համակարգում է Մարդու Իրավունքների Կենտրոնը, Ադրբեջանում՝ Լրագրողների անվտանգության և ազատության պաշտպանության Միջազգային Կազմակերպությունը, Հայաստանում՝ Հելսինկյան Ասոցիացիան: www.caucasusnetwork.org

անդամներ Արթուր Սաքունցը /Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի Գրասենյակ/ և Լևոն Բարսեղյանը /Ժուռնալիստների “Ասպարեզ” ակումբ/ ԱՄՆ Պետքարտուղարին են հանձնել Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի և Ադրբեջանի իրավապաշտպանների նամակները մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ[38]: ԱՄՆ Պետքարտուղար Հ.Քլինթոնը 2010թ. օգոստոսի 24-ին պատասխանել է Հարավային Կովկասի իրավապաշտպան ցանցի հայաստանյան կազմակերպությունների վերոնշյալ նամակին, որով կիսել է ՀԿ–ների մտահոգություններն առ այն, որ Հայաստանի համար հույժ կարեւոր են բարեփոխումները մարդու իրավունքների ու ժողովրդավարության ոլորտներում[39]:

2010թ. հունիսի 14-18-ը ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով Հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկագիան Հայաստան կատարած իր այցելությունից հետո ներկայացրել է մի շարք առաջարկություններ, մասնավորապես՝ իրավապաշտպանների դերը և կարևորությունը ժողովրդավարական հասարակության մեջ հրապարակայնորեն ընդունելու անհրաժեշտությունը: Հատուկ զեկուցողը իր անհանգստությունն է հայտնել իրավապաշտպանների, լրագրողների նկատմամբ բռնության և հետապնդումների դեպքերի կապակցությամբ և նշել, որ այսպիսի դեպքերն ի ցույց են դնում Հայաստանում անպատժելիության մշակույթի ակնհայտ առկայությունը[40]:

Դեռևս 2010թ. փետրվարին 1-ին Հարավկովկասյան իրավապաշտպանների ցանցը հանդես էր եկել հայտարարությամբ[41] 2010թ. հունվարի 19-ին “Հայկական Ժամանակ” օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանին Երևանի Կենտրոն և Նորք-մարաշ

[38] http://hahr.am/
[39] www.asparez.am

[40] Հատուկ զեկուցողը իր զեկույցը կներկայացնի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 16-րդ նիստին, 2011թ. մարտին, և լրացուցիչ առաջարկներ կներկայացնի կառավարության և այլ շահագրգիռ կողմերի ուշադրությանը:

[41] http://caucasusnetwork.org/index.php?a=main&pid=173&lang=eng

համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մարտիրոսյանի նախագահությամբ 7 տարի ժամկետով ազատազրկման դատապարտելու դեմ:

Ն. Փաշինյանին առաջադրվել էր մեղադրանք ՀՀ քր.օր-ի 225 հոդվածի 1-ին մասի՝ “զանգվածային անկարգությունների կազմակերպում” և 316 հոդվածի 1-ին մասի՝ “Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնության գործադրում” հատկանիշներով /այս հոդվածով Փաշինյանը արդարացվել է/: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել էր կալանք: Մարտի 9-ին ՀՀ Քրեական վերաքննիչ դատարան Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը թողեց ուժի մեջ և որոշեց Փաշինյանի նկատմամբ կիրառել “Համաներում հայտարարելու մասին” ՀՀ ԱԺ 2009թ. հունիսի 19-ի որոշման 7-րդ կետի 2-րդ ենթակետը եւ պատժաչափի չկրած մասը կրճատել կիսով չափ: Մայիսի 5-ին, ՀՀ Վճռաբեկ դատարանը մերժեց 2 կողմերի բողոքները՝ պատճառաբանելով, որ դրանք անհիմն են եւ չեն բխում գործի նյութերից:

Հելսինկյան Ասոցիացիան ողջ դատավարության ընթացքում մոնիտորինգ է անցկացրել, որի արդյունքում արձանագրվել են էական խախտումներ: Մասնավորապես,

- Չի պահպանվել կողմերի հավասարությունը,
- Առաջադրված մեղադրանքը հիմնավորված չի եղել ապացույցներով,
- Հանցակազմը բացակայել է:

Դատարանը անտեսել է ԵԽԽՎ բանաձևերի դրույթները, համաձայն որոնց, չի կարելի դատապարտել բռնության համար նրանց, ովքեր բռնություն չեն գործել և չեն հրահրել մյուսներին բռնության, ինչպես նաև այն դրույթները, որոնցով ԵԽԽՎ-ն կոչ է անում Հայաստանի իշխանություններին կալանքի տակ չպահել նրանց, ովքեր, լինելով հետախուզման մեջ կամ ընդհատակում, ինքնակամ հանձնվել են իրավապահ մարմիններին:

Ն. Փաշինյանի դեպքում կոպտորեն խախտվել են ՀՀ Սահմանադրության 2,6,7,16,18,19,21,22,27,29, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 8,17,23, 65,90,105,106,107,124,126,127, 340 և Մարդու Իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի 6,10,11 հոդվածները:

2010թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում ազատազրկման մեջ գտնվող "Հայկական ժամանակ" օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական բռնությունների Արագածոտնի մարզի Կոշ քրեակատարողական հիմնարկում, քանի որ վերջինս հրաժարվել էր ենթարկվել պահանջներին՝ դադարել քննադատական հոդվածներ գրել բանտից: Փաշինյանը երկու ամսվա ընթացքում չորս անգամ ենթարկվել է ֆիզիկական հարձակումների, այնուհետև՝ տեղափոխվել Արթիկ քրեակատարողական հիմնարկ, որտեղ բանտախցում պահվում է միայնակ: Մինչ տեղափոխումը, նոյեմբերի 11-ին, նա ծեծի է ենթարկվել իր իսկ բանտախուցում երկու դիմակավորված անձանց կողմից, երբ քնած է եղել:

Անձի նկատմամբ վատ վերաբերմունքը և խոշտանգումները արգելվում են ինչպես ՀՀ օրենսգրքով /ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդված/, այնպես էլ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային համաձայնագրերով, ինչպիսիք են Մարդու Իրավունքների և Հիմնարար Ազատությունների Եվրոպական Կոնվենցիան /3-րդ հոդված/, Քաղաքացիական և Քաղաքական Իրավունքների Միջազգային Համաձայնագիրը /7-րդ հոդված/ և Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի դեմ Կոնվենցիան /2-րդ հոդված/, որոնք պարտադիր են կատարման Հայաստանի իշխանությունների կողմից: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված է, որ անձին ծեծելը և միայնակ բանտարկումը հավասարազոր են վատ վերաբերմունքի տվյալ անձի նկատմամբ և դրանով հակասում են Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին:

Դեկտեմբերի 13-ին, 2010թ. Մարդու Իրավունքների Տան Ցանցի և Հարավկովկասյան Իրավապաշտպանների Ցանցի անդամները ընդունել են հայտարարություն՝ հասցեագրված Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին, ՀՀ Արդարադատության նախարարի տեղակալ Նիկոլայ Առուստամյանին, ՀՀ Գլխավոր դատախազ Աղվան Գ. Հովսեփյանին՝ իրենց անհանգստությունը հայտնելով Նիկոլ Փաշինյանի վրա

կատարված վերջին հարձակումներով և կոչ են արել Հայաստանի իշխանություններին անմիջապես ազատ արձակել նրան: Մասնավորապես, “Ապահովել Նիկոլ Փաշինյանի **անվտանգությունը բանտում** և վարել **անհապաղ եւ անկողմնակալ հետաքննություն** կապված Նիկոլ Փաշինյանի նկատմամբ տեղի ունեցած հարձակումների հետ և արդարադատությանը հանձնել պատասխանատուներին, ապահովել Նիկոլ Փաշինյանի **անկախ բժշկական զննման** իրականացումը, …”[42]:

2010թ. դեկտեմբերի 13-ին հարձակման է ենթարկվել Հարավկովկասյան իրավապաշտպանների ցանցի անդամ “Իրավաբաններն ընդդեմ խոշտանգումների” հասարակական կազմակերպության աշխատանքները համակարգող, իրավապաշտպան Արտակ Զեյնալյանի աշխատասենյակը: Անհայտ անձինք ներխուժել էին գրասենյակ, կոտրել փաստաթղթերը պահելու համար նախատեսված պահարանների դռների կողպեքները, տարել համակարգչի մոնիտորը և արբանյակային հեռուստաալիքների կոդագերծող սարքը: Գրասենյակում գտնվող գումարը “գողերը” չեն վերցրել: Դեպքի առթիվ հարուցվել էր քրեական գործ: Զեկույցի պատրաստման ընթացքում՝ 2011թ. հունվարին, կրկին հարձակման է ենթարկվել իրավապաշտպանի աշխատասենյակը:

Հելսինկյան Ասոցիացիան տարածել է հայտարարություն, որում իր համոզվածությունն է հայտնում, որ նախկինում կատարված հարձակման դեպքը չի բացահայտվում ոստիկանության անգործության պատճառով և վստահ է, որ վերջին նմանատիպ դեպքն էլ չի բացահայտվելու: Հելսինկյան Ասոցիացիան հայտարարել է՝ վերոհիշյալ հարձակումները իշխանության պատվերն է, որն ուղղված է միմիայն Արտակ Զեյնալյանի իրավապաշտպան գործունեության դեմ: Այս տեսակ քայլերը նպատակ են հետապնդում խոչընդոտել իրավապաշտպանի գործունեությունը[43]:

Իշխանամետ կուսակցությունների, կազմակերպությունների, ինչպես նաև մամուլի կողմից շարունակվել են անհանդուրժողականության դրսևորումները

[42] http://www.armtimes.com/20019
[43] http://1in.am/arm/armenia_society_6358.html

իրավապաշտպանների և նրանց գործունեության նկատմամբ՝ վերջիններիս կոչելով գրանտակերներ և լրտեսներ:

2010թ. Փետրվարի 12-ին, Առավոտ թերթում տպագրվել է բաց նամակ ուղղված “Առավոտ” թերթի և “A1+”-ի գլխավոր խմբագիրներ Արամ Աբրահամյանին և Մեսրոպ Մովսեսյանին, որտեղ “Երիտասարդությունը հանուն առաջընթացի եւ ժողովրդավարության” կազմակերպությունը նշել է, *“..մեզ համար անհասկանալի է, թե մեր հայրենական ԶԼՄ-ներից մի քանիսը ինչպես են թույլ տվել իրենց էջերում տպագրել մի անհայտ ոստայնի շուրջ “30” անհայտ եւ որեւիցե մեկին անծանոթ, ինքնակոչ “իրավապաշտպան” կազմակերպությունների հայտարարությունը, որով իրենք համարձակվում են անկախ Հայաստանի իշխանությունների հետ խոսել վերջնագրային տոնով, եւ դա բավական չէ՝ պահանջել միջազգային հանրությունից պատժամիջոցներ կիրառել Հայաստանի նկատմամբ եւ շարունակել մոնիտորինգը..”*[44]:

Հայտարարությունը վերաբերվել է “Հայկական ժամանակ” օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի ձերբակալմանը և բանտարկմանը, որը ընդունվել է Հարավկովկասյան իրավապաշտպանների կողմից 2010թ. փետրվարին:

2010թ. հուլիսի 7-ին, իշխանամետ օրաթերթ “Հայոց աշխարհում” տպագրվել է հոդված /հեղ. Կիմա Եղիազարյան/ հուլիսի 5-ին ԱՄՆ Պետքարտուղար Հիլլարի Քլինթոնի հայաստանյան այցի շրջանակներում իրավապաշտպանների հետ կայացած հանդիպման վերաբերյալ, որտեղ, մասնավորապես նշվում է. *“…երկու տասնյակից ավելի գրանտակեր կազմակերպությունների ղեկավարներից տեղում էին Միկա Դանիելյանը, Բորիս Նավասարդյանը, Լեւոն Բարսեղյանը, Արթուր Սաքունցը, Արտակ Զեյնալյանը, Մելիսա Բրաունը, Նունե Սարգսյանը եւ այլք: Պարզվում է, մեր “քաղաքացիական հասարակությունը” սկսվում եւ ավարտվում է գրանտակերներով, արմատական ընդդիմության դրոշակակիրներով ու Տեր-Պետրոսյանի*

[44] http://aravot.am/

գործակալներով…”: “…Մեզ իհարկե հայտնի չէ, թե ովքեր եւ ինչպես էին որոշել, կամ էլ ում ցանկությամբ էր ընտրվել սույն “քաղաքացիական հասարակության” ներկայացուցչական կազմը, սակայն իրողությունն այն է, որ սույն անձնավորությունները իրենց հակազգային գործունեությամբ հասարակության մեջ գրավում են ոչ թե առաջին, այլ վերջին տեղերը…”: “…Մտերմիկ հանդիպումը “նշանակալից” էր նաեւ նրանով, որ Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միկա Դանիելյանը հասցրեց մի սրտառուչ նամակ փոխանցել Քլինթոնին, որը հավանաբար Վրաստան ուղեւորվելու ճանապարհին չի դիմացել բացել ու կարդացել է…”[45]:

Նոյեմբերի 19-ին “Հայոց աշխարհ” թերթը տպագրել է “Լրտե՞ս թե իրավապաշտպան” վերնագրով նախկին ազատամարտիկի նամակը. *“…Հնարավոր չէ համ գրանտ ստանալ, համ լրտես չդառնալ:*

Մարդու իրավունքների պաշտպանությունը խիստ կարեւոր գործ է, միաժամանակ նաեւ շատ լավ դիմակ է, որի տակ քողարկվելով՝ կարելի է հանգիստ լրտեսություն անել”: Նամակը վերաբերվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի կողմից հայոց բանակում տիրող իրավիճակի քննադատմանը: *“…Արցախյան ազատամարտի մասին խոսեց մեկը, որը ոչ մի կապ չունի պատերազմի հետ, որը հայոց բանակը վարկաբեկելը սարքել է փեշակ, գրանտ ստանալու միջոց..: Չգիտենք նաեւ, թե որտեղ է լինելու Արթուր Սաքունցը պատերազմի հնարավոր վերսկսման դեպքում, ավելի ճիշտ՝ ո՞ւմ կողմից է լինելու նա, ո՞ւմ է պահ տալու ՀՀ զինված ուժերի վերաբերյալ կուտակած իր տեղեկությունները: Այդ*

[45] http://armworld.am/archive.php?day=7&month=7&year=2010&next=0&lang=_arm#?paperid=3904&pageid=120985&lang

մասին գիտի միայն ինքը եւ նրանք, ովքեր լի ու լի ֆինանսավորում են նրան՝ այդ տեղեկությունները ձեռք բերելու եւ հայոց բանակը վարկաբեկելու դիմաց”[46]:

[46] http://armworld.am/detail.php?paperid=3990&pageid=123399&lang=

ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐ

ՀՀ-ում խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունքը կարգավորվում է.

ՀՀ Սահմանադրությամբ /հոդվածներ 29; 44 և այլն/,

“Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին՝” կոնվեցիայով /հոդված 11/,

“Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին” միջազգային դաշնագրով /հոդվածներ 21; 22/,

2004 թվականի ապրիլի 28-ին ընդունված “Ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին” ՀՀ օրենքով /հետայսու՝ Ժողովների մասին օրենք/, ինչպես նաև

“Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” ՀՀ օրենքով,

“Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքով:

Համաձայն Սահմանադրության /հոդված 6/՝ ՀՀ-ում միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և դրանք գերակա են ազգային օրենքների նկատմամբ, հետևաբար “Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” կոնվեցիայով /հոդված 11/, “Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին” միջազգային դաշնագրով /հոդվածներ 21; 22/ երաշխավորված ազատությունները չեն կարող սահմանափակվել ՀՀ ներքին օրենսդրությամբ:

Ժողովների մասին օրենքը ՀՀ ԱԺ-ն ընդունել է 2004թ մայիսի 28-ին: Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովն իր 1374[47] բանաձևում՝ Ժողովների մասին դեռ չընդունված և շրջանառության մեջ գտնվող օրենքի նախագծի իրավականության վերաբերյալ հայտնել էր մտահոգություն: Թեև ԵԽԽՎ-ի կողմից հայտնված մտահոգության, ՀՀ ԱԺ-ն ընդունել է Ժողովների մասին օրենքը՝ որը Վենետիկի հանձնաժողովի վերջնական զեկույցում գնահատվել է սահմանափակող[48]:

[47] http://assembly.coe.int/Main.asp?link=http://assembly.coe.int/documents/adoptedtext/ta04/eres1374.htm

[48] European commission for democracy through law (Venice commission) **opinion on** the law on conducting meetings, assemblies, rallies and demonstrations of the republic of Armenia Adopted by the Venice Commission, at its 60th Plenary Session, (Venice 8-9 October 2004)

Մարտի 20, 2008թ. Արտակարգ դրություն ռեժիմի գործելու ընթացքում Ժողովների մասին օրենքում փոփոխություններ կատարվեցին ԱԺ-ի կողմից: Փոփոխություններով զգալի սահմանափակումներ մտցվեցին Հայաստանում մարդկանց խաղաղ հավաքների ազատության իրականացման հարցերում:

Ժողովների մասին օրենքում կատարված փոփոխություններից մեկը նախատեսում է, որ հրապարակային միջոցառումների անցկացումը լիազոր մարմնի կողմից /տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի, Երևանի քաղաքապետի/ կարող է արգելվել, եթե, ըստ հավաստի տվյալների, դրանք ուղղված են սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելուն, բռնություն կամ պատերազմ քարոզելուն, կամ կարող են հանգեցնել զանգվածային անկարգությունների և հանցագործությունների, պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարոյականության խաթարմանը, այլոց սահմանադրական իրավունքների ու ազատությունների ոտնահարմանը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Հավաքների ազատության հարցերով փորձագետների խորհուրդը կարծիք հայտնեց, որ նման հիմքերով իրավունքի սահմանափակումը թույլատրելի է միայն բռնության անխուսափելի սպառնալիքի առկայության դեպքում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված, համաձայն որի. “Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք”:

ՀՀ Սահմանադրությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների /այդ թվում՝ խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքի/ սահմանափակման 2 մեխանիզմ է նախատեսում:

Առաջինը՝ սովորական պայմաններում, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխարգելման, հանրության առողջության և բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար /հոդված 43/:

Երկրորդը՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Մասնավորապես, Սահմանադրության 44-րդ հոդվածում ամրագրվում է, որ մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատությունները արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում կարող են օրենքով սահմանված կարգով՝ իրավիճակին համարժեք չափով, ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

Մինչև Ժողովների մասին օրենքում փոփոխություններ կատարելը և դրանից հետո օրենքում առկա են դրույթներ, որոնցով Ոստիկանությանը լիազորություններ են վերապահվում հրապարակային միջոցառումների անցկացման ժամանակ: Մասնավորապես, Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ Ոստիկանությունը պարտավոր է ապահովել զանգվածային հրապարակային միջոցառման ընթացքում օրինականությունը և հասարակական կարգի պահպանումը, պարտավոր է զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման վայրից հարկադրաբար դուրս բերել այն անձանց, ովքեր կատարում են հակաօրինական արարք կամ խախտում են հասարակական կարգը: Այսինքն՝ խաղաղ, առանց զենքի հրապարակային միջոցառումների անցկացման ընթացքում հակաօրինական արարքների կամ հասարակական կարգի խախտման դեպքերում Ոստիկանության վրա պարտականություն է դրված հեռացնել խախտում կատարած անձանց՝ միջոցառման

խաղաղ բնույթը պահպանելու և հնարավոր զանգվածային անկարգություններից խուսափելու համար:

Ժողովների մասին օրենքով Ոստիկանությանը իրավունք է վերապահված օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշում ընդունել դադարեցնելու Ժողովների մասին օրենքի պահանջների խախտմամբ անցկացվող հրապարակային միջոցառումը կամ այլ միջոցառում և պահանջել կազմակերպչից դադարեցնելու հրապարակային միջոցառումը: Կազմակերպչի կողմից հրապարակային միջոցառումը չդադարեցնելու դեպքում Ոստիկանությունը կարող է օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարկադիր դադարեցնել հրապարակային կամ այլ միջոցառում:

Համաձայն օրենսդրության՝ Ոստիկանության կողմից հանրահավաքը ցրելու մասին հնարավոր որոշումը պետք է կայացված լինի վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանմամբ, այն պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր /“Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” ՀՀ օրենք, 8-րդ հոդված/:

Այսպիսով, օրենսդրական բոլոր հիմքերը և հնարավորությունները կան հրապարակային միջոցառումների ժամանակ օրինականության և հասարակական կարգի պահպանման համար, իսկ խախտումների առանձին դրսևորումների դեպքում՝ օրինականությունը վերականգնելու կամ հրապարակային միջոցառումը դադարեցնելու համար՝ քաոսային իրավիճակներում չհայտնվելու նպատակով:

Սակայն, 2010թ.-ի ընթացքում Երևանի Քաղաքապետարանի կողմից իրազեկումը ի գիտություն ընդունելու մասին որոշմամբ ընդդիմադիր ուժ հանդիսացող Հայ Ազգային Կոնգրեսի կողմից կազմակերպված գրեթե բոլոր հանրահավաքների, երթերի, ակցիաների ժամանակ ոստիկանության կողմից մշտապես փորձ է արվել հրահրել և սադրել հանրահավաքի մասնակիցներին: Ոստիկանների կողմից կիրառվել է բռնություն, տեղի է ունեցել քաշքշուկ, մասնակցիների ապօրինի բերման ենթարկումներ և ձերբակալություններ, հնչել են հայհոյանքներ հանրահավաքի մասնակիցների

նկատմամբ: Հանրահավաքների օրերին փակվել են մարզերից մայրաքաղաք տանող ճանապարհները, ստուգվել են Երևան ուղևորվող մեքենաները:

Գրեթե բոլոր երթերի և ցույցերի անցկացման ժամանակ երթի սկիզբը մեկնարկել է առանց միջադեպերի, իսկ արդեն ընթացքում ոստիկանության կողմից ստեղծվել են խոչընդոտներ, որոնք ուղեկցվել են մասնակիցների հրմշտոցով՝ արհեստականորեն ստեղծելով բախումներ ոստիկանության և մասնակիցների միջև:

Ցույցերի, երթերի և ակցիաների անբաժանելի մասն է կազմում սադրանքը ոստիկանության կողմից: Սադրանքները կազմակերպվում են հիմնականում երթի սկզբնամասում, որտեղ գտնվում է ակտիվ զանգվածը և երթի կազմակերպիչները: Ոստիկանության կողմից ավանդույթ է դարձել հայհոյանքներ ուղղել մասնակիցների հասցեին: Դա արվում է սադրանքի նպատակով՝ հրահրելու խաղաղ ցուցարարներին: Ոստիկանությունը հատկապես ագրեսիվ է արձագանքում կոչերին՝ ուղղված ՀՀ նախագահին[49]:

2010թ. ընթացքում ոստիկանների կողմից կիրառվել է բռնություն և ձերբակալություններ հանրահավաքի, ակցիաների և երթերի մասնակիցների նկատմամբ: Ոստիկանության կողմից հիմնականում առաջադրվել է ՀՀ Քր. Օր. 316 հոդվածը՝ Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը: Ոստիկանության կողմից սահմանափակվել է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը:

Բռնության ակնհայտ դրսևորումներով հատկապես առանձնացել է 2010թ. փետրվարի 19-ին ընդդիմադիր ուժ հանդիսացող Հայ Ազգային Կոնգրեսի կողմից կազմակերպված երթը նախագահական ընտրությունների կեղծված արդյունքների 2-րդ տարելիցի, քաղբանտարկյալների ազատ արձակման, մարտի 1-ի ոճրագործությունների բացահայտման համար:

Երթը ընթացել է խաղաղ Կորյուն փողոցից մինչև Սայաթ Նովա Աբովյան փողոցների խաչմերուկը, ապա ոստիկանները դիմել են սադրանքների՝ հրելով, հայհոյելով, հարվածելով ժողովրդին փորձել են ետ տեղափոխել մայթ՝ պատճառաբանելով, որ

[49] Տեղեկատվությունը տրամադրել է Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդ Արման Վեզիրյանը:

մասնակիցները խոչընդոտում են երթևեկությանը, մինչդեռ երթևեկության համար ճանապարհը բաց է եղել: Բախման արդյունքում երիտասարդ ակտիվիստ Վահագն Գևորգյանին ոստիկանները բռնի ուժով, հարվածելով նստեցրել են ոստիկանական մեքենան և տարել անհայտ ուղղությամբ, ապա 20 րոպե հետո ետ վերադարձրել՝ վերջինիս քաղաքի փողոցներով մեքենայով շրջելուց հետո:

Երթի վերջնակետին հասնելուց հետո, երբ մասնակիցները գտնվում էին ոչ տեսանելի հատվածում, ոստիկանությունը շուրջկալ է կազմակերպել ու առանց որևէ պատճառաբանության հարձակվել մասնակիցների վրա, բռնի ուժով և հարվածելով ապօրինի բերման ենթարկել երթի մասնակից 6 երիտասարդ ակտիվիստների / Արեգ Գևորգյան, Վարազ Նահապետյան, Սերգեյ Գասպարյան, Սարգիս Գևորգյան, Վահագն Գևորգյան, Տիգրան Առաքելյան/[50]: Ըստ Ս.Գրիգորյանի՝ "Փետրվարի 19-ին իրեն, Վահագին ու Սերգեյին նստեցրել են մեքենայի մեջ: Իրեն պառկեցրել են հորիզոնական դիրքով եւ կարմիր բերետավորներից մեկը նստել է վրան եւ անընդհատ փորձել ցավ պատճառել: Մեքենայի մեջ հայհոյել են, ձեռքերը ոլորել...": Ոստիկանություն բերման ենթարկված 6 երիտասարդներին էլ դատաբժշկական փորձաքննության ուղեգիր է տրվել եւ արձանագրվել է նրանց տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստանալու փաստը:

Մայիսի 28-ից մինչ հունիսի 2-ը Հայ ազգային կոնգրես ընդդիմադիր ուժի ակտիվիստների մուտքը Ազատության հրապարակ արգելվել է ոստիկանության կողմից: Երեք օր շարունակ ոստիկանները եւ քաղաքացիական հագուստով անձինք խոչընդոտել են քաղաքացիների ազատ տեղաշարժը, մեկ կամ մի քանի քաղաքացիների՝ իրենց սահմանադրական իրավունքների իրացման շրջանակներում որեւէ ակցիա կազմակերպել, իրականացնել ոչ զանգվածային միջոցառում եւ ապօրինի բերման ենթարկել ոստիկանություն[51]:

[50] http://www.youtube.com/watch?v=f3CsU4aOp7c
[51] http://www.youtube.com/watch?v=efhjw3D-2JY

Մայիսի 28-ից մինչ հունիսի 2-ը 17 քաղաքացի բերման է ենթարկվել ոստիկանական բաժանմունքներ, որոնցից ակտիվիստ երիտասարդներ Դավիթ Քիրամիջյանը, Սարգիս Գևորգյանը ձերբակալվել են: Նրանց առաջադրվել է մեղադրանքներ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 316-րդ հոդվածի 1-ի մասով[52]: Ոստիկանության կողմից ձերբակալվել էր նաև իր մասնագիտական պարտականությունները կատարող լրագրող Անի Գեւորգյանը / ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ի մաս /:

Հրապարակ մուտք գործելը արգելվել է միայն քաղաքական ընդդիմության ներկայացուցիչներին, որոնց ոստիկանները արդեն դեմքով ճանաչում են: Ոստիկանության գործողությունների արդյունքում առաջացել է մոտ 1 ժամ տևած քաշքշուկ, որը զուգորդվել է երկկողմանի վիրավորանքներով: Ոստիկանների հետ համատեղ բռնի գործողություններին մասնակցություն են ունեցել մոտ 30-40 քաղաքացիական հագուստով անձինք՝կատարելով ոստիկանների հրահանգները: Երեւանի Ոստիկանության վարչության պետի տեղակալ Ռ. Մելքոնյանն "Ազատություն" ռադիոկայանին տվել է հետևյալ բացատրությունը՝ "Բայց ինչո՞ւ գան... Այստեղ ստորգետնյա կայանատեղի կա: Այստեղ մարդկանց մեծ կուտակումներ չպիտի լինի... Վաղը-մյուս օրը դառնալու է միտինգի վայր"[53]:

Մայիսի 28 - հունիսի 2-ին Ազատության հրապարակում ոստիկանները խոչընդոտել են Հայ ազգային կոնգրեսի անդամ Վարդգես Գասպարիի եւ ընդդիմադիր երիտասարդների նստացույցը:

Քաշքշուկը սկսվել է այն բանից հետո, երբ ՀԱԿ համակիր Տիգրան Առաքելյանին մոտեցել են քաղաքացիական հագուստով երիտասարդներ և վիրավորելով, հրելով ու

[52] http://www.youtube.com/watch?v=pEDuwn47hR8
[53] http://www.azatutyun.am/content/article/2057350.html

քաշքշելով նստեցրել մեքենան եւ տարել՝ առանց բացատրելու, թե ուր եւ ինչի համար[54]: Ոստիկանության Պարեկապահակային ծառայության գնդի հրամանատար Ռ. Մելքոնյանի հրահանգով ոստիկանները բռնի ուժով, հրելով ու քաշքշելով փորձել են հեռացնել բողոքի ակցիայի մասնակիցներին՝ պատճառաբանելով, որ նրանք "հասարակական կարգ են խախտում, եւ Ազատության հրապարակը նստացույցի վայր չէ"[55]:

ՀԱԿ անդամ Վարդգես Գասպարիին Ազատության հրապարակից հեռացրել են պառկած վիճակում: 6 հոգով նրան գետնին պառկած դիրքով՝ թեւերից եւ ոտքերից բռնած հեռացրել են հրապարակից, պառկեցրել ոստիկանական մեքենա ու տեղափոխել ոստիկանական բաժին[56]: Որոշ ժամանակ անց բերման են ենթարկվել նստացույցի մասնակիցներ Սարգիս Գեւորգյանը, Վահագն Գեւորգյանը, Սերգեյ Կարապետյանը եւ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնախմբի անդամ Վլադիմիր Կարապետյանը: Ըստ Տ. Առաքելյանի՝ "Ոստիկանության բաժանմունքում Կենտրոնի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանն ասել է "...մեկ է, չենք թողնելու հավաքվեք Ազատության հրապարակում...": 3 ժամ ոստիկանությունում պահելուց հետո նրանց ազատ են արձակել՝ այդ ընթացքում նրանց մոտ չթողնելով հրավիրված փաստաբանին: Ոստիկանների պատասխանը եղել է հետեւյալը՝ "Բայց ինչ ենք անում, որ մի հատ էլ փաստաբան գա, հո գործ չենք հարուցում"[57]:

Հոկտեմբերի 19-ին, Երեւանում Եվրոպայի Խորհրդի "Հանուն Ժողովրդավարության ապագայի" ֆորումի անցկացման ժամանակ ոստիկանները խոչընդոտել են մոտ 60 ցուցարարների բողոքի ակցիայի ընթացքը՝ նրանց տեղաշարժը սահմանափակող պատնեշներ տեղադրելով փողոցներում: Ոստիկանները երկաթե ճաղավանդակով փակել են ճանապարհը՝ թույլ չտալով անցնել փողոցը, որի հետեւանքով

[54] http://www.youtube.com/watch?v=WtX_KO5tdS0
[55] http://www.azatutyun.am/content/article/2055767.html
[56] http://www.youtube.com/watch?v=e_uIt94c0vE
[57] http://www.a1plus.am/am/politics/2010/05/31/vardges-gaspari

ավտոմեքենաների խցանում է առաջացել: Ոստիկանների կողմից ցուցարարներին արգելվել է համաժողովի մասնակիցներին բաժանել ցուցարարների կողմից պատրաստված տեղեկատվական նամակներ:

Նոյեմբերի 12-ին, ՀՀ Գլխավոր Դատախազության շենքի դիմաց Հայ ազգային կոնգրեսի կողմից քաղբանտարկյալներին ազատ արձակելու պահանջով կազմակերպված բողոքի ակցիայի ժամանակ մասնակիցների և տարածքը հսկող մի քանի տասնյակի հասնող ոստիկանների միջև տեղի ունեցած միջադեպի արդյունքում ոստիկանները փորձել են արգելել ՀԱԿ անդամ Վարդգես Գասպարիին շարժվել դատախազության շենքի մոտով, իրավապահները նրան բռնի ուժով փորձել են տեղափոխել եւ արգելել անցնել այդտեղով: Ոստիկանները վերջինիս գցել են գետնին[58]:

Ցույցերի, երթերի և ակցիաների ժամանակ մշտական բնույթ է կրում ակտիվ մասնակիցներին բերման ենթարկելը, այնուհետև, ոստիկանական բաժանմունքներում օրենքով սահմանված 3 ժամից ավել պահելուց հետո ցույցի կամ երթի ավարտից հետո բաց թողնել:

Նոյեմբերի 9-ին, Երևանում անցկացված "Արդար դատաքննություն և դատական իրավունքի անկախություն" թեմայով ԵՄ-Հայաստան հասարակական կազմակերպությունների համաժողովի ընթացքում ոստիկանական բաժանմունք են բերման ենթարկվել ՀԱԿ ակտիվիստ 4 երիտասարդներ/ Սարգիս Գեւորգյան, Վահագն Գեւորգյան, Արեգ Գեւորգյան եւ Սարգիս Ղազարյան/, ովքեր իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել՝ համաժողովի մասնակիցներին տեղյակ պահելու Հայաստանում տիրող անօրինականությունների մասին: Հավաքվող բազմությանը թույլ չի տրվել ոստիկանության կողմից տեղադրված երկաթե պատնեշներից ներս անցնել: ՀԱԿ անդամ Վլադիմիր Կարապետյանի խոսքերի համաձայն՝ ոստիկանները մոտեցել են երիտասարդներին և ապօրինաբար պահանջել լքել տարածքը: Չենթարկվող 4 երիտասարդի քաշքշել են, բախում հրահրել և մազերից քաշելով տեղափոխել Կենտրոնի

[58] http://www.youtube.com/watch?v=mqU-Fo1LuiU

ոստիկանական բաժանմունք: ՀԱԿ անդամ Արամ Մանուկյանի տեղեկացմամբ՝ երիտասարդների վրա առկա են եղել բռնության և ծեծի հետքեր: Ոստիկանները խոչընդոտել են ՀԱԿ անդամների տեղաշարժը՝ թույլ չտալով նրանց Մարտի 1-ի դեպքերի, քաղբանտարկյալների, Հայաստանում մարդու իրավունքների ոտնահարման վերաբերյալ տեղեկատվական նամակներ բաժանել համաժողովի մասնակիցներին:

2010թ. դեկտեմբերի 3-ին, ի պաշտպանություն քաղբանտարկյալների՝ Հայ ազգային կոնգրեսի կողմից Իջևան քաղաքում քաղաքապետարանին նախապես ծանուցված բողոքի ակցիայի ժամանակ, ակցիայի համար նախատեսված տարածքը 2 կողմից փակվել էր ոստիկանական ուժերի կողմից: Ակցիայից հետո կայացած երթի ժամանակ ոստիկանների կողմից եղել են սադրանքներ, հրմշտոցներ և վիրավորանքներ մասնակիցների ուղղությամբ: Քաշքշոցի արդյունքում բերման է ենթարկվել ՀԱԿ ակտիվիստ Հրանտ Թամրազյանը, որին կես ժամ ոստիկանությունում պահելուց հետո բաց են թողել:

2010թ. խաղաղ հավաքների իրավունքի իրականացումը քաղաքացիների կողմից չի խոչընդոտվել բացառությամբ դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպված երթի և ապրիլի 6-8-ը Հայաստանում կայացած մարդու իրավունքներին նվիրված “Արդարադատություն, Նոր մարտահրավերներ” թեմայով Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի /FIDH/ 37-րդ համաժողովի օրերին Մատենադարանի հարակից տարածքում ՀԱԿ-ի կազմակերպված հանրահավաքի, երթի և դրան նախորդած ակցիաների ընթացքում: Հանրահավաքի ժամանակ ոստիկաններ ներկա չեն եղել, իսկ երթի ժամանակ վերջիններիս թիվը զգալիորեն քիչ է եղել՝ ի տարբերություն նախկինում կայացած հանրահավաքների: FIDH-ի նախագահ Ս. Բելհասսենը և համաժողովի մասնակից մի շարք իրավապաշտպաններ մասնակցել են հանրահավաքին՝ իրենց ելույթների ընթացքում կոչ անելով ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին: Փաստորեն, Հայաստանի իշխանությունները միայն միջազգային հանրության ուշադրության

առկայության դեպքում են դրսևորում իրենց որպես ժողովրդավար իշխանություններ՝ չխոչընդոտելով քաղաքացիների խաղաղ հավաքների ազատության իրականացման իրավունքը:

Այսպիսով, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2010թ.շարունակվել է ոտնահարվել քաղաքացիների՝ ՀՀ-ում խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունքը՝ ամրագրված ՀՀ Սահմանադրությամբ, կարգավորվող 2004 թվականի ապրիլի 28-ին ընդունված "Ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին", "Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին", "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքներով, ինչպես նաև "Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին՝" կոնվենցիայով, և "Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին" միջազգային դաշնագրով:

Խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման գործընթացը կարգավորող Ժողովների մասին օրենքի 10-12 հոդվածները սահմանում են հրապարակային միջոցառում անցկացնելու մասին իրազեկման բովանդակությունը, այն ներկայացնելու և քննարկելու կարգը: Ըստ որի՝ կազմակերպիչները զանգվածային հրապարակային միջոցառումներ անցկացնելու մասին գրավոր իրազեկում են զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման վայրի համայնքի ղեկավարին, Երևանում՝ Երևանի քաղաքապետին: Մինչև 19.03.2008թ փոփոխությունները իրազեկումը համարվում է օրինական և քննարկման ենթակա, եթե ներկայացված է միջոցառումն անցկացնելու նախատեսված օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, և ոչ շուտ, քան քսան օր առաջ: Փոփոխություններով երեք օրյա ժամկետը երկարաձգվեց հինգի: Օրենքի 12 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ իրազեկման քննարկման արդյունքում, եթե բացակայում են 13 հոդվածում նշված հանգամանքները, զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման մասին իրազեկումն ընդունվում է ի գիտություն և միջոցառումն անցկացվում է իրազեկման մեջ նշված վայրում և ժամին:

Ժողովների մասին օրենքը մինչև փոփոխությունները պարունակում էր նորմ, ըստ որի եթե մինչև իրազեկումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16-ը տեղական ինքնակառավարման մարմնի որոշմամբ չի արգելվում զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումը, ապա կազմակերպիչներն իրավունք ունեն տրված իրազեկման պայմաններով իրականացնելու զանգվածային հրապարակային միջոցառում:

Մինչև փոփոխությունը գործող օրենքը նախատեսում էր նաև ինքնաբուխ հանրահավաքների կայացում, որի համար չէր նախատեսվում տեղական ինքնակառավարման մասնակիցներին իրազեկման ներկայացում: Փոփոխությունների հետևանքով արգելվեցին ինքնաբուխ հանրահավաքները, այնուհետև Եվրոպական կառույցների ճնշման տակ կրկին փոփոխություն կատարվեց Ժողովների մասին օրենքում և ինքնաբուխ հանրահավաքի ինստիտուտը մտցվեց, սակայն, ըստ նոր խմբագրման՝ այն կդադարի օրինական լինել, եթե շարունակվի վեց ժամից ավելի /6-րդ հոդված, 6.1.-րդ մաս/:

Թեև Ժողովների մասին օրենքը նախատեսում է որոշման ընդունում միայն այն դեպքում, երբ պետք է արգելվի խաղաղ հավաքի ազատության իրավունքի իրացումը, սակայն ձևավորվել է ավանդույթ, որ իրազեկման կապակցությամբ պարտադիր կերպով կայացվում է վարչական ակտ՝ որոշում, կամ իրազեկումը ի գիտություն ընդունելու մասին, կամ միջոցառումն արգելելու մասին:

2008թ. մարտի 1-ից մինչ այսօր ՀՀ Ոստիկանության կողմից շարունակվում է արգելվել ընդդիմադիր ուժ հանդիսացող Հայ Ազգային Կոնգրեսի անդամ ակտիվիստների մուտքը Ազատության հրապարակ, չնայած այն հանգամանքին, որ 2008թ. այստեղ սկսված շինարարական աշխատանքները արդեն ավարտվել են և հրապարակը գործում է:

Երևանում 2010թ.սեպտեմբերի 17–ից սկսած Ազատության հրապարակում հանրահավաք անցկացնելու վերաբերյալ Հայ ազգային կոնգրես ընդդիմադիր դաշինքի կողմից ներկայացվել է 37 դիմումներ, որոնք բոլորն էլ մերժվել են քաղաքապետի

ներկայացուցչի կողմից: Հավաքների անցկացումն արգելելու պատճառ է եղել օրինակ՝ տվյալ օրը, տվյալ վայրում այլ միջոցառում կազմակերպված լինելու մասին քաղաքապետարանի որևէ վարչական ակտի կամ ուղղակի ստորաբաժանումներից որևէ մեկի ներքին նամակը, կամ հետևյալ պատճառաբանությունը՝ անցկացվելիք հավաքը կխախտի այլոց՝ այդ վայրում գտնվող, իրավունքները և այլն: Մասնավորապես, Երեւանի քաղաքապետարանի ընդունած որոշմամբ ներկայացված հայտերը մերժվել են հետևյալ պատճառաբանությամբ՝ Ազատության հրապարակում հանրահավաքն արգելելու պատճառը այստեղ տեղադրված կարուսելներն ու ատրակցիոններն են, գրքերի,արվեստի գործերի ցուցահանդես-վաճառքի կազմակերպումը: Դեկտեմբեր ամսին Ազատության հրապարակում հանրահավաք անցկացնելու մասին ՀԱԿ-ի կողմից ներկայացված հայտերի մերժումը Երևանի քաղաքապետարանը հիմնավորել է նրանով, որ դեկտեմբերի 6–ից մինչև հունվարի 1–ն այստեղ ամանորյա տոնակատարությունների փորձեր են անցկացվելու: Փաստորեն, քաղաքապետարանը մի գրությամբ մի ամբողջ ամսվա արգելք է ներկայացնում, ինչն օրենքը թույլ չի տալիս[59] :

Ժողովների մասին օրենքը կանոնակարգել է նաև այն դեպքերը, երբ նույն օրը նույն վայրում և նույն տեղում հավաք կազմակերպելու մտադրության մասին միաժամանակ տարբեր անձինք են դիմում տեղական ինքնակառավարման մարմիններ: Այդ դեպքում նախ քննարկվում և որոշում է կայացվում առաջինը մուտքագրված իրազեկման կապակցությամբ, իսկ յուրաքանչյուր հաջորդ կազմակերպչին տեղական ինքնակառավարման մարմինը պարտավոր է առաջարկել զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման այլ օրեր (իրազեկման մեջ նշված վայրում և ժամին) և այլ ժամեր (իրազեկման մեջ նշված վայրում և օրը), եթե այդպիսի հնարավորությունն առկա է: / հոդված 13, մաս 4/:

[59] Ազատության հրապարակում Հայ Ազգային Կոնգրեսի կողմից կազմակերպվող հանրահավաքների վերաբերյալ Երևանի Քաղաքապետարան ներկայացված իրազեկումների վերաբերյալ տվյալները տրամադրվել է ՀԱԿ անդամ “Հայոց Համազգային շարժում” կուսակցության վարչության գործադիր քարտուղար Վահագն Հայոցյանի կողմից:

Քաղաքապետարանը ղեկավարվելով "Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին" ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ նշված օրը, ժամին և նշված վայրում անցկացվելու է մեկ այլ միջոցառում, որը բացառում է տվյալ միջոցառման անցկացումը, արգելել է Ազատության հրապարակում զանգվածային հրապարակային միջոցառման/ հանրահավաք/ անցկացումը: Միևնույն ժամանակ հիմք ընդունելով միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթները՝ քաղաքացիների խաղաղ հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացման պահանջը, Երևանի քաղաքապետարանը առաջարկել է 2010թ. Նոյեմբերի 9-ին ՀԱԿ դաշինքի անդամ "Հայոց Համազգային շարժում" կուսակցության կողմից նախատեսվող զանգվածային հրապարակային միջոցառումը՝ հանրահավաքն անցկացնել իրազեկման մեջ նշված օրը և ժամին Մատենադարանի հարակից տարածքում[60]: Նմանատիպ առաջարկ արվել է նաև այլ օրերի համար նախատեսված հանարահավաքների անցկացման վերաբերյալ:

Փաստորեն, Հայաստանի իշխանությունները հստակ դիրքորոշում ունեն Ազատության հրապարակը չտրամադրել ցույցերի, հանրահավաքների համար, որոնք կազմակերպվում են Հայ Ազգային Կոնգրեսի կողմից:

Պետք է նշել, որ Հայ Ազգային Կոնգրեսի կողմից կազմակերպվող բոլոր ցույցերի, ակցիաների և երթերի ժամանակ, անկախ այն հանգամանքից, թե որտեղ են դրանք անցկացվում, Ազատության հրապարակի տարածքը մշտապես շրջափակվում է ՀՀ ոստիկանական ուժերի կողմից:

2009թ. ապրիլի 7-ից առ այսօր ՀՀ Ոստիկանության կողմից շարունակվում է արգելվել Հայ Ազգային Կոնգրեսի ակտիվիստների և գործիչների մուտքը նաև Հյուսիսային Պողոտա՝ պատճառաբանությամբ, որ այստեղ չի կարելի նրանց անգամ զբոսնել: ՀՀ Ոստիկանության աշխատակիցները հիմնականում արգելում են իրենց արտաքնապես

[60] Երևանի քաղաքապետարանի որոշում իրազեկման քննարկման արդյունքների մասին: No 87; 21 Հոկտեմբերի 2010թ.; ստ. Երևանի Քաղաքապետի լիազոր ներկայացուցիչ Գ. Բաղդասարյան:

ծանոթ ընդդիմադիր ակտիվիստներին, ովքեր մինչ ապրիլի 7-ը ամեն օր երեկոյան 18:00-20:00 հավաքվում էին Հյուսիսային Պողոտայում քաղաքական զբոսանքի նպատակով:

Հանրահավաքներն արգելելու մասին որոշումները կայացվում են 01.03.2008թ հայտարարված արտակարգ դրությունից հետո ուժի մեջ մտած Ժողովների մասին օրենքում կատարված փոփոխությունների հիման վրա: Հավաքներն արգելող որոշումները հղում են պարունակում Ոստիկանությունից և Ազգային անվտանգության ծառայությունից ստացված եզրակացություններին: Եվրոխորհուրդի ճնշման ներքո Ժողովների մասին օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում օրենքում մտցվեց դրույթ, ըստ որի "պաշտոնական եզրակացության" իրավաչափությունը հանրահավաքի կազմակերպիչները իրավունք ունեն վիճարկել դատարանում:

Որոշման մեջ Երևանի քաղաքապետի ներկայացուցիչը հղում է կատարում Ժողովների մասին օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, այն է՝ "....զանգվածային հրապարակային միջոցառումը կարող է արգելվել միայն այն դեպքերում, եթե՝ ..... 3) առկա են սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված հիմքերը.":

Համաձայն Ժողովների մասին օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ ենթակետի.

"3) *եթե առկա են հավաստի տվյալներ, որ միջոցառման անցկացումն ստեղծում է բռնության անմիջական սպառնալիք կամ իրական վտանգ է սպառնում պետական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարոյականությանը, անձանց կյանքին և առողջությանը, այլոց սահմանադրական իրավունքներին ու ազատություններին կամ անցկացվում է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ռասայական, ազգային, կրոնական ատելություն բորբոքելու, բռնության, պատերազմ քարոզելու նպատակով կամ կարող է հանգեցնել զանգվածային անկարգությունների կամ էական գույքային վնաս հասցնել պետությանը, համայնքին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:*

Այդ տվյալները կարող են համարվել հավաստի, եթե դրանց առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը կամ ազգային

անվտանգության ծառայությունը ներկայացրել է պաշտոնական հիմնավորված եզրակացություն: Նույն կարգով այդ մարմինները եզրակացություն են տալիս այդ հիմքերի վերացման մասին”:

Ժողովների մասին օրենքի հոդված 9-ի մաս 4-րդի ենթակետ 3-ի ձևակերպումը հստակ չէ, դրանից պարզ չէ.

- թե ոստիկանությունը և/կամ ազգային անվտանգության ծառայությունն ի՞նչ կարգով և ինչի՞ց դրդված են ներկայացնում/տալիս (ներկայացնում՝ արգելման հիմքերը, տալիս՝ հիմքերի վերացում) “պաշտոնական եզրակացություն”,
- “պաշտոնական եզրակացություն” ներկայացնում են սեփական նախաձեռնությամբ, թե՞ դա ներկայացնելուն/տալուն նրանց դրդում են,
- եթե դրդելուց հետո են ներկայացնում/տալիս, ապա ինչպե՞ս և ի՞նչ ժամկետներում և ո՞վ է կատարում դրդումը,
- դրդումը կատարելուց հետո ի՞նչ ժամկետում են ոստիկանությունը և/կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացնում/տալիս “պաշտոնական եզրակացություն”,
- “պաշտոնական եզրակացությունը” ու՞մ են ներկայացնում/տալիս,
- “պաշտոնական եզրակացությունը” բանավոր է ներկայացնում/տրվում, թե՞ գրավոր, այն “Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիշրում” և/թե “Հայաստանի Հանրապետություն” օրաթերթում և/թե “Հայլուր” լրատվական ծրագրով պաշտոնական հրապարակման ենթակա է, թե՞ գաղտնի փաստաթուղթ է, և վարչական վարույթի նյութերին ծանոթանալու պահանջ ներկայացնելու դեպքում, այն չի տրամադրվում դիմողին,
- եթե “պաշտոնական եզրակացությունը” փաստաթուղթ է, դրա մեջ ի՞նչ և ի՞նչ ծավալով է գրվում և ի՞նչ աշխարագրություն է ընդգրկում դրդումից մինչև ներկայացնելը/տալն ընկած ժամանակահատվածը,
- եթե “պաշտոնական եզրակացությունը” փաստաթուղթ է, այն արդյոք պետք է ունենա հերթական համար և/կամ կազմման տարեթիվ,

- “պաշտոնական եզրակացությունը” կարող է ներկայացվել/տրվել կոնկրետ անձի խաղաղ հավաքների ազատության իրավունքից զրկելու համար թե՞ այն վերաբերվում է անխտիր բոլորին,
- “պաշտոնական եզրակացությունը” կարո՞ղ է վերաբերվել միջոցառման կոնկրետ ձևի, թե՞ խաղաղ հավաքների ազատության իրավունքի դրսևորման բոլոր ձևերին,
- “պաշտոնական եզրակացությունը” ներկայացված/տրված լինելու փաստը միակ և բավարար պայման է “տվյալները” հավաստի համարելու համար, թե՞ “պաշտոնական եզրակացության” մեջ դրանց հեղինակների կողմից պետք է պարտադիր ասվի, որ “տվյալները “հավաստի” են և “ստուգված”,
- “պաշտոնական եզրակացությունը” ինքնուրույն վիճարկման ենթակա է, թե՞ այն կարող է վիճարկվել զանգվածային հրապարակային միջոցառումը արգելելու մասին որոշումը վիճարկելու վերաբերյալ հայցով, թե՞ դրա իրավաչափությունը Վարչական դատարանը պարտավոր է անդրադառնալ գործի փաստերն ի պաշտոնե (ex officio) պարզելու պարտավորության շրջանակներում և այլն:

Ոստիկանության կամ ազգային անվտանգության ծառայության՝ պաշտոնական հիմնավորված եզրակացությունն ներկայացրելը, դեռևս ավտոմատ կերպով չի հանգեցնում համապատասխան զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելուն: Նման նպատակ հետապնդելու պարագայում օրենքում չպետք է օգտագործվեր “կարող են” տերմինը:

Իրավակիրառական պրակտիկայում Ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության ներկայացրած եզրակացությունների գոյության պայմաններում, մի դեպքում՝ իրազեկում ներկայացնողին արգելվել է իրացնել խաղաղ հավաքների ազատության իրավունքը, իսկ մեկ այլ դիմողի՝ այն թույլատրվել է: Այս փաստը ապացուցում է “կարող են” եզրույթի Վարչական մարմնի կողմից կամայականորեն կիրառելու տեսական կանխատեսումը:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված՝ հավաքների և միավորվելու ազատությունները նախատեսում է այդ ազատությունների թույլատրելի

սահմանափակում՝ 11-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքերով ու պայմաններով: Կոնվենցիան այդ ազատությունների սահմանափակումները թույլատրում է միայն, եթե.

- տվյալ սահմանափակումը նախատեսված է պատասխանող պետության ներպետական օրենքով,
- սահմանափակումը հետապնդում է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետով հետապնդվող որևէ իրավաչափ նպատակ կամ նպատակներ,
- տվյալ սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշելու համար, թե հավաքների վիճարկվող միջամտությունն արդարացված է, թե ոչ, անհրաժեշտ է կատարել հետևյալ թեստը.

1. անհրաժեշտ է պարզել, թե արդյոք վիճարկվող սահմանափակումը նախատեսված է օրենքով,
2. անհրաժեշտ է պարզել, թե արդյոք օրենքով նախատեսված տվյալ սահմանափակումը հետապնդում է 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված որևէ իրավաչափ նպատակ, եթե սահամանափակումը նախատեսված է օրենքով և հետապնդում է 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավաչափ նպատակ, պարզել, թե արդյոք տվյալ սահմանափակումը “անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում”: Այն դեպքում, երբ վիճարկվող սահմանափակումը չի բավարարում “օրենքով նախատեսված լինելու” պահանջը, հարկ չի լինի շարունակել քննությունը. այս պահանջի խախտումն արդեն իսկ ենթադրում է 11-րդ հոդվածի խախտում:

Նշված հոդվածներով նախատեսված ազատությունների սահմանափակման՝ “օրենքով նախատեսված” լինելու պահանջն առաջին հերթին ենթադրում է ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված գրավոր և հրապարակված օրենքի առկայություն: Այս պայմանն առկա է: Սակայն, ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված գրավոր և հրապարակված օրենքի առկայությունն ինքնին դեռևս չի ենթադրում “օրենքով նախատեսված” պահանջի բավարարում:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

Սահմանադրորեն ամրագրված իրավական պետության սկզբունքից և վերը նշված նորմերից բխում է, որ պետության գլխավոր խնդիրն է պաշտպանելու սահմանադրորեն ամրագրված իրավունքներն ու ազատությունները, որից ածանցվում է, կամ ինքնուրույն է հանդես գալիս, պետության պարտականությունը ապահովելու սահմանադրորեն ամրագրված իրավունքների իրականացումը, իսկ այս պարագայում խաղաղ առանց զենքի հավաքների իրավունքը:

Հավաքների իրավունքը բացարձակ իրավունք է, վերջիններս կարող են սահմանափակվել, սակայն հենց Սահմանադրության համաձայն այդ սահմանափակումների սահմանը միջազգայնորեն ստանձնած պարտավորություններն են, որոնք չեն կարող գերազանցվել: Այդ պարտավորությունների մասշտաբն ու բովանդակությունը տրված է մի շարք միջազգային փաստաթղթերում, որոնք ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մաս են կազմում, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանների ակտերում:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Հայաստանը 1991թ. անկախացումից հետո վավերացրել է մարդու իրավունքների վերաբերյալ գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերը՝ ներառյալ ՄԱԿ-ի Կոնվեցիան Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ և Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխման եվրոպական կոնվենցիան և Եվրոպական Կոնվենցիայի երկու ֆակուլտատիվ արձանագրություններ:

ՄԱԿ-ի "Խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ" կոնվենցիայի 19-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Կոնվենցիայի անդամ պետությունները Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում պետք է Խոշտանգումների դեմ հանձնաժողովին ներկայացնեն զեկույցներ այն միջոցների մասին, որոնք նրանք ձեռնարկել են Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները իրականացնելու համար, որից հետո նրանք պետք է յուրաքանչյուր չորս տարին մեկ լրացուցիչ զեկույցներ ներկայացնեն և ցանկացած այլ զեկույց, որ կարող է անհրաժեշտ լինել Հանձնաժողովին:

Համաձայն "Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին" Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ "Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման" եվրոպական կոմիտեն /CPT/ 2010թ. մարտի 19-ին Հայաստանի կառավարությանը ներկայացրել է 2008թ. մարտի 15-17-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ իր զեկույցը[61]: Զեկույցում նշվում է, որ 2008թ. տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո իրավապահների կողմից ձերբակալված անձինք ենթարկվել են ֆիզիկական բռնության, նույնիսկ այն դեպքում, երբ վերջիններս իրավապահ մարմիններին դիմադրություն ցույց չեն տվել:

[61] http://www.cpt.coe.int

Խոշտանգումների դեմ Կոնվենցիայի 1-ին հոդվածը հստակ սահմանում է խոշտանգումը որպես. “ցավ կամ տանջանք, որն առաջացել է պետական ծառայողի կամ պետական լիազորություններով օժտված անձի կողմից”:

2010թ. ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից կատարվել են ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածով նախատեսված քրեորեն պատժելի արարքներ/ Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելը/: Հոդվածը նախատեսում է պատիժ նաև այն դեպքում, եթե նույն արարքը զուգորդվել է այդ հոդվածի առաջին մասով նախատեսված անձանց նկատմամբ ծաղրուծանակով, խոշտանգմամբ կամ այլ բռնությամբ:

Համաձայն 2001թ. ընդունված “Ոստիկանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի՝ Ոստիկանության աշխատակցի կողմից մարդուն խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը, կամ նրա նկատմամբ բռնություն կիրառելն արգելվում է և առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

Ապրիլի 13-ին, 2010թ. Չարենցավանի ոստիկանությունում գողություն կատարելու կասկածանքով բերման էր ենթարկվել 24-ամյա Վահան Խալաֆյանը, ով մահացել է այնտեղ, ըստ պաշտոնական վարկածի՝ դանակի մահացու վնասվածքներից[62]: Հարուցվել է քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով “Անձին ինքնասպանության հասցնելը”: Ըստ պաշտոնական վարկածի՝ ոստիկանության բաժանմունքում խոշտանգումների ենթարկվելու պատճառով Խալաֆյանը դանակի միջոցով ինքնասպանություն է գործել: Խալաֆյանի դիակի դատաբժշկական փորձաքննությունը ցույց է տվել, որ նրա նկատմամբ կիրառվել է բռնություն:

[62] Հավելված “Վահան Խալաֆյան”:

Գործով մեղադրվել են 4 ոստիկաններ՝ Չարենցավանի բաժնի քրեական հետախուզություն բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանը և երեք օպեր-լիազորներ՝ Մորիս Հայրապետյանը, Գագիկ Դավթյանը և Գարիկ Ղազարյանը: Բաժանմունքի պետը մեղադրվել է Խալաֆյանին ինքնասպանության հասցնելու համար, իսկ մյուս երեքը՝ իրենց պետի կողմից դրսևորած բռնությունը չկանխելու համար:

2010թ. նոյեմբերի 26-ին Հելսինկյան Ասոցիացիա է դիմել 1991թ. ծնված Արտակ Քոչարյանը: Նա հանդիսանում է "Զատիկ" մանկատան սան: Ըստ Քոչարյանի՝2010թ. նոյեմբերի 25-ի առավոտյան ժամը 09:30-ի սահմաններում քաղաքացիական հագուստով ոստիկանները առանց որևէ բացատրության հայհոյանքներով, անմարկային վերաբերմունք դրսևորելով իր և ևս 2 հոգու նկատմամբ, բերման են ենթարկել Զեյթունի քննչական բաժին: Ոստիկանությունում նրանք ծեծի են ենթարկվել 4 անձանց կողմից, վերցրել են նրանց մատնահետքերը: Ա. Քոչարյանին սպառնացել են վերջինիս գրպանը թմրանյութ գցել, եթե չստորագրի, որ ինքը կատարել է գողություն: Տղային ապօրինաբար անազատության մեջ պահել են մինչ ժամը 00:10, որի ընթացքում 3 անգամ ծեծել են և ենթարկել խոշտանգումների:

Հելսինկյան Ասոցիացիա են դիմել ՀՀ քաղաքացիներ՝ Ավետիք Գևորգյանը, Խաչիկ Հովսեփյանը և Արթուր Սիմոնյանը, որոնք Չարենցավանի քննչական բաժնում հարուցված թիվ 66100510 քրեական գործով ունեն մեղադրյալների և վկայի կարգավիճակ: Վերջիններիս հայտարարության համաձայն՝ 2010 թվականի փետրվարի 25-ին Երևան քաղաքի Կենտրոնական բանկի տարածքից բերման են ենթարկել Չարենցավանի քննչական բաժին, որտեղ ենթարկվել են խոշտանգումների և ծեծի, որի հետևանքով կորզվել են Խաչիկ Հովսեփյանին զրպարտող ցուցմունքներ: Վկա Արթուր Սիմոնյանին մոտ 24 ժամ ապօրինի պահել են բաժնում, խոշտանգել և ցուցմունք են կորզել, իսկ նրան պատկանող ավտոմեքենան, որը գրավադրված է եղել բանկում, տաս օր պահել են բաժնի տարածքում: Նշված ավտոմեքենան Ա.Սիմոնյանը շահագործում էր

որպես տաքսի և նրա ապրուստի միակ միջոցն էր, որը չշահագործելու պատճառով հնարավորություն չի ունեցել մարել վարկը, ինչի հետևանքով ստիպված վաճառել է այն:

2010թ. Հելսինկյան Ասոցիացիա է դիմել ՀՀ Արմավիրի մարզի բնակիչ Լուսինե Մնացականյանը: Լ. Մնացականյանի՝ Հելսինկյան Ասոցիացիային գրված դիմումի և նրա ամուսին Սերոբ Վարդանյանի՝ դատարանում տրված ցուցմունքի համաձայն՝ 2009թ. հոկտեմբերի 15-ի առավոտյան Վարդանյանի տուն են եկել մի խումբ ոստիկաններ, որոնց մեծ մասը եղել են քաղաքացիական հագուստով, և առանց ծանուցելու ու որևէ փաստաթուղթ ներկայացնելու կատարել են տան խուզարկություն, իսկ իրենց վրա ֆիզիկական ճնշում գործադրելով՝արգելել են որևէ կերպ միջամտել խուզարկությանը: Վարդանյանին բազմաթիվ հարվածներ տալով՝ միաժամանակ սպառնացել են նաև զենքով: Բնակարանի անօրինական խուզարկությունը ավարտելուց հետո ոստիկանները գյուղապետարանի երեք աշխատող են կանչել, որից հետո Վարդանյանին տարել են ոստիկանական բաժանմունք և քրեական գործ հարուցել վերջինիս նկատմամբ: Բաժանմունքում Վարդանյանը տեսել է նույն գործով մյուս մեղադրյալ Աշոտ Մշեցյանին, ով Վարդանյանի խոսքերով՝ "ջարդուխուրդ եղած և ծեծված էր": Բաժանմունքում Վարդանյանը ստորագրել է արձանագրություն, որտեղ գրված է եղել, թե իբր ինքը Մշեցյանին "երեք քաշ պլան" է տվել: Վարդանյանը այն ստորագրել է սպառնալիքի ազդեցության ներքո, քանի որ վերջինիս ոստիկանները զգուշացրել են, որ չստորագրելու դեպքում Մշեցյանից ավելի վատ վիճակում կհայտնվի: Սերոբ Վարդանյանին և Աշոտ Մշեցյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քր.օր. 266 հ. 2-րդ մասի 2-րդ և 2.1 կետի և 268հ. 3-րդ մասի հատկանիշներով:

ՀՀ ոստիկանության քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժանմունքի քննիչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Արթուր Ավագյանի կողմից ՀՀ Քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 31150710 քրեական գործը, և որոշմամբ Վալերի Ալկամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ: 2010թ. ապրիլի 13-ին

Ալկամյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: Համաձայն Վ. Ալկամյանի հայտարարության՝ ձերբակալման օրը նրա նկատմամբ բռնություն է գործադրվել, որին մասնակցել է նաև քննիչ Ա. Գ. Ավագյանը: Ոստիկանության բաժանմունքում ոստիկանության ութ աշխատակիցներ նրան ենթարկել են խոշտանգման, դաժան ծեծի, նվաստացրել են նրա արժանապատվությունը: Քննիչ Ա. Գ. Ավագյանը Ալկամյանին ստիպել է ստորագրել որոշ թղթեր, ավելի քան երկու ամիս չի տրամադրել պաշտպան, թարգմանիչ /Ալկամյանը չի տիրապետում գրավոր հայերենին, բանավոր խոսում և հասկանում է բավարար չափով/, ընդունել է փորձաքննություններ նշանակելու որոշումներ, ստացել է եզրակացություններ և ընդունված որոշումների մասին Ալկամյանին սահմանված կարգով չի հայտնել:

Հելսինկյան ասոցիացիայի աջակցությամբ, Վ. Ալկամյանը 2010թ. հունիսից ապահովվել է պաշտպանով, և քննիչը ստիպված է եղել ապահովել նաև թարգմանչով:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածն ամրագրում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: *Ձերբակալված, կալանավորված և դատապարտված անձիք մարդկային վերաբերմունքի և հարգանքի իրավունք ունեն:* 2003 թվականին ապրիլին ընդունված քրեական օրենսգրքում առկա է 119-րդ հոդվածը, որը պատիժ է սահմանում խոշտանգման գործողությունների համար: Այնուամենայնիվ, հոդվածի բովանդակությունը թերի է, իսկ՝ նախատեսված պատիժը մեղմ է և դրանք չեն համապատասխանում խոշտանգում եզրույթի միջազգայնորեն ընդունված ընդհանուր իմաստին: Այնուհանդերձ, ՀՀ-ում ապօրինությունները շարունակվում են իրավապահ մարմինների կողմից՝ կոպտորեն խախտվում են ՀՀ գործող օրենքները, ոտնահարվում են մարդու իրավունքները, որոնք երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ, “Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին” Եվրոպական կոնվեցիայով և մի շարք այլ միջազգային փաստաթղթերով, որոնց միացել է Հայաստանը:

2006թ. մայիսի 31-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի Կամընտիր արձանագրության 17-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է այն վավերացնելուց կամ նրան միանալուց ոչ ուշ, քան մեկ տարի հետո ներպետական մակարդակով խոշտանգումների կանխարգելման նպատակով հաստատել, նշանակել կամ ստեղծել մեկ կամ մի քանի կանխարգելման ազգային մեխանիզմներ։

2008թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված “Մարդու իրավունքների պաշտպանի մասին” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքով սահմանվել է, որ Պաշտպանը հանդիսանում է կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ /6.1հոդված/։

Համաձայն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1 մասի՝ կիսափակ ուղղիչ հիմնարկի 1 խցում անձանց թիվը պետք է լինի մինչև վեցը: Իսկ նույն օրենսգրքի 73-րդ հոդվածը ուղղակի սահմանում է, որ յուրաքանչյուր դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը չի կարող պակաս լինել 4 քառակուսի մետրից: Մինչդեռ օրենքի այս դրույթը խախտվում է և խցերում պահվում են նախատեսվածից ավելի անձինք: Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական առաքելություն իրականացնող խմբի արդյունքների համաձայն՝ ՀՀ որոշ քրեակատարողական հիմնարկներում, մասնավորապես՝ Նուբարաշեն ՔԿՀ-ում, կալանավորված և դատապարտված անձանց այնտեղ գտնվելը համարվում է խոշտանգում, նվաստացուցիչ և անմարդկային վերաբերմունք:

Զինվորական մասերում վատ վերաբերմունքի կամ, անգամ՝ խոշտանգումների հետաքննությունների մասին զինվորական մասերի բժշկական անձնակազմը մարմնական վնասվածքներով զինծառայողներ հայտնաբերելու դեպքում պատշաճ

կերպով չի արձագանքում դրանց, չի տեղեկացնում իրավապահ մարմիններին, որ այս կամ այն վնասվածքը կարող է վերագրվել խոշտանգմանը և վատ վերաբերմունքի դրսևորմանը:

Բանակում խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերի հետ կապված նախաքննության մարմինները հիմնականում օբյեկտիվ քննություն չեն իրականացնում, որի պատճառով մեղադրանք է առաջադրվում խոշտանգման հետ առընչություն չունեցող շարքային զինվորին, իսկ իրական հանցագործները մնում են անպատիժ: Կամ զինծառայողի մարմնական վնասվածքները պատճառաբանվում են որպես պաշտոնատար անձի կողմից պաշտոնական իշխանությունը չարաշահելու կամ մարտական ծառայության կանոնագրքային կանոնները խախտելու հետևանք: Ոչ հազվադեպ զինծառայողի մահվան պատճառ է ներկայացվում ինքնասպանությունը, դժբախտ պատահարները, կամ հակառակորդի կողմից արձակված կրակոցը: Այս դեպքերում նախաքննության մարմինները կասեցնում են քրեական գործի վարույթը, թեև փորձաքննության եզրակացություններով դիակի վրա արձանագրված են լինում բռնության հետքերը: Նման գործերով հիմնականում նախաքննության և դատաքննության ժամկետները երկարատև են՝ խոշտանգման հետևանքով բանակում մահացած զինվորների գործով դատավարությունները սկսվել և շարունակվել են 2010թ. ընթացքում:

2008թ. մայիսի 15-ին ժամկետային զինծառայող Անդրանիկ Հայրապետյանը Լեռնային Ղարաբաղում, գտնվելով մարտական հերթապահության մեջ, համաձայն պաշտոնական վարկածի, մահացել է հակառակորդի կողմից արձակված գնդակի հետևանքով: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Հելսինկյան Ասոցիացիայի կողմից արված լուսանկարներում մահացածի մարմնի վրա առկա են եղել քերծվածքներ և վերքեր, որոնք պատճառվել էին մինչև մահը: Դեպքի առթիվ հարուցվել էր քրեական գործ հրամանատարի պաշտոնական իշխանությունը չարաշահելու և մարտական ծառայության կրելու կանոնները խախտելու հատկանիշներով: Զինվորի սպանության փաստի առթիվ հարուցված քրեական գործը ներկայումս կասեցված է: Սույն քրեական

գործով Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը 31.07.2009 թ.-ին կայացրել էր դատավճիռ, համաձայն որի՝ զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 3-րդ վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի հրամանատար Է.Ավետիսյանը ճանաչվել է մեղավոր և դատապարտվել ազատազրկման 4 տարի 6 ամիս ժամանակով, փոխգնդապետ Ա.Պետրոսյանը ճանաչվել է մեղավոր և դատապարտվել ազատազրկման 3 տարի 3 ամիս ժամկետով: 2010թ.-ի փետրվարին նրանց նկատմամբ կիրառվել է համաներում:

2007թ.օգոստոսի 30-ին Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանի Կարճաղբյուր գյուղի զորամասում մահացել է ժամկետային զինծառայող Տիգրան Օհանջանյանը: Ըստ պաշտոնական վարկածի՝ հանգուցյալի մահվան պատճառը օրգանիզմի վրա էլեկտրական հոսանքի ազդեցությունն է: Փորձաքննության եզրակացությամբ նշվել էր, որ մահը վրա է հասել հոսանքահարման հետևանքով: Ծնողների պնդմամբ Տ. Օհանջանյանը սպանվել է բռնության հետևանքով, դատաբժշկական փորձաքննության ժամանակ դիակի վրա հայտնաբերվել են բռնության հետքեր, ինչպես նաև ըստ դատաբժիշկ Վիգեն Ադամյանի դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ մահացածի ատամնաշարը ամբողջական է, այնինչ ծնողների պնդմամբ՝ Տ. Օհանջանյանը բանակ է զորակոչվել մեկ ատամի բացակայությամբ: Զինվորի մահվան կապակցությամբ քրեական գործ է հարուցվել ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսևորելու հատկանիշներով: Զինվորի սպանության փաստի առթիվ քրեական գործ չի հարուցվել: Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում 2009թ-.ին սկսվել է Տ. Օհանջանյանի սպանության փաստի առթիվ հարուցված քրեական գործի դատավարությունը: 2010թ.դատարանի կայացրած դատավճռով՝ ամբաստանյալները արդարացվել են[63]:

[63] Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366 հոդվածի՝ եթե արդարացման դատավճիռ կայացնելիս անհայտ է մնում այդ հանցանքը կատարած անձը, դատարանը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, գործն ուղարկում է դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը:

24.08.2008թ.-ին ՀՀ ՊՆ թիվ 50869Զ/Մ-ում սպանվել է Նարեկ Գալստյանը: Սպանության փաստը հաստատում են Ն. Գալստյանի մարմնի տարբեր մասերում՝ պարանոցի շրջանում, գլխի ճակատային մասում, աջ ականջի հետնամասում, զույգ ոտքերի դիմային հատվածների և այլ մասերում առկա կապտուկները, քերծվածքները և արյունազեղումները: Նախաքննությունը եկել է այն եզրակացության, որ Նարեկ Գալստյանը գիշերը ժամը 2-ին փորձել է բենզինի մետաղյա տարայից բենզին գողանալ և այնտեղ էլ բենզինի գազերից խեղդվել է: Երբ Նարեկի հարազատները պնդել էին մարմնական վնասվածքների մասին, մասնավորապես, պարանոցի շրջանում պարանի հետքերի մասին. նրանց բանավոր հայտարարել էին, թե զինվորի վիզը պարան էին գցել և բենզինի բաքից քաշել վեր: Ն. Գալստյանի հարազատներից ոչ ոք, տուժողի իրավահաջորդ չի ճանաչվել, հնարավորություն չեն ունեցել ծանոթանալ դատաբժշկական եզրակացությանը և քրեական գործով կատարված մյուս փորձագիտական եզրակացություններին ու քննչական գործողություններին: 22.09.2008թ. քրեական գործով մեղադրանք է ներկայացվել թիվ 50869 ՁՄ-ի 2-րդ ՀԳ-ի շտաբի պետ կապիտան Արամ Հարոյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով /պաշտոնեական կեղծիք/: 2010թ-ից սույն գործի բացահայտման ուղղությամբ քայլեր է ձեռնարկում Հելսինկյան Ասոցիացիան:

2010թ.-ին գրանցվել է ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի թվի աճ: Եթե նախորդ տարիներին իշխանություններին հաջողվում էր հասարակությունից գաղտնի պահել բանակում տեղի ունեցող հանցավոր երևույթները, ապա 2010 թ. դրանք հասան ահազնացող չափերի՝ ստիպելով, որպեսզի իշխանությունները բարձրաձայն խոսեն դրանց մասին*:

01.02.2010թ. ՀՀ ՊՆ թիվ 12798 Զ/Մ-ում սպանվել է Անդրանիկ Սարգսյանը: 22.06.2010թ.-ին ՀՀ ՊՆ 9-րդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Գ. Խ. Խալաթյանը իր որոշումով մերժել է նյութերով քր. գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության

* Ստորև բերված տվյալները ներկայացված են մամուլի հրապարակումների հիման վրա:

պատճառաբանությամբ: Ըստ դատաբժշկական թիվ 112/7 եզրակացության՝ դատաբժշկական դիագնությամբ Սարգսյանի մոտ հայտնաբերվել է "գլխի աջից վերհոնքային շրջանի և ճակատային շրջանի քերծվածքներ, կրծքավանդակի շրջանի և աջից գոտկային շրջանի քերծվածքներ, աջից և ձախից հետույքային շրջանների քերծվածքներ, որոնք պատճառվել են կենդանության օրոք բութ առարկաներով, մահվանից կարճ ժամանակ առաջ...": Հելսինկյան Ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանը դիմել է ՀՀ Գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին հետևյալ միջնորդությամբ՝ "Վերացնել թիվ 15-20 նյութերով քրեական գործի հարուցման մերժման Գ. Խ. Խալաթյանի 22.06.2010-ի որոշումը,...": Ուշացումով, 30.11.2010թ.-ի համար 34/14-10-10 գրությամբ ՀՀ գլխավոր դատախազության աշխատակից Ա.Մ. Զալինյանը տեղեկացրել է Մ. Դանիելյանին, որ "Ուսումնասիրությամբ պարզվել է՝ նյութերով կայացրած որոշումը՝ հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին, օրինական է, հիմնավորված և այն վերացնելու հիմքեր չկան":

28.07.2010թ.-ին ՀՀ ՊՆ թիվ 36534 Զ/Մ-ում միաժամանակ սպանվել են 6 զինծառայող /ավագ լեյտենանտ Վարդգես Թադևոսյան, ժամկետային զինծառայողներ Գարեգին Հովսեփյան, Անդրանիկ Սարգսյան, Ռոբերտ Հովհաննիսյան, Արտյոմ Մանասյան, Կարո Այվազյան/: Ըստ նախնական վարկածի՝ Կարո Այվազյանը հրազենով սպանել է 1 լեյտենանտի ու 1 սերժանտի, այնուհետև նա նույն զենքով սպանել է դեպքի վայրին մոտեցած ևս 3 զինծառայողների ու ինքնասպան եղել: Այվազյանը այս քայլին դիմել է, քանի որ սպանված սպաները իր ընկերոջ նկատմամբ անհարգալից վերաբերմունք են դրսևորել: Գարեգին Հովսեփյանը հուլիսի 28-ի զինված միջադեպի հետևանքով զոհվածներից միակն է, ում վրա բռնության ակնհայտ հետքեր են եղել: Զոհված զինծառայողի ծնողների փոխանցմամբ՝ երիտասարդի ձեռքերի բոլոր մատները կոտրված են եղել, գլխի այն հատվածի վրա, որտեղով անցնում է քներակը, առկա էր մեծ այտուց, ծոծրակի վրա սուր գործիքից առաջացած խորը վերք կար: Զոհված մյուս

զինծառայողների դիակների վրա կապտուկների և այլ վնասվածքների առկայությունը շատերը բացատրեցին այն հանգամանքով, որ դրանք առաջացել են դիակները "ոչ հարմար" մեքենաներով տեղափոխելու հետևանքով:

20.11.2010թ.-ին տեղի է ունեցել մահվան ելքով արտակարգ միջադեպ, ինչի հետևանքով հրազենային կրակահերթերից զոհվել են ժամկետային 4 զինծառայողներ և 4-ը՝ վիրավորվել: 21.11.2010թ.-ին ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի երկրորդ մասի առաջին կետով՝ երկու և ավելի անձանց սպանության համար, 34-104 հոդվածի երկրորդ մասի առաջին կետով՝ երկու և ավելի մարդկանց սպանության փորձի համար, և 365 հոդվածի առաջին մասով՝ մարտական ծառայությունը կրելու կանոնները խախտելու համար մեղադրանք է առաջադրվել նույն զորամասի զինծառայող, միջադեպի ժամանակ վիրավորված զինծառայող Մանվել Հազրոյանին: Ըստ Հազրոյանի հոր՝ Արմեն Հազրոյանի՝որդին չէր կարող 4 հոգու սպանել, 3-ին վիրավորել, հետո էլ իր վրա կրակել, նախ որովայնին, ապա՝ գլխին:

16.06.2010թ.-ին ԼՂՀ Պաշտպանության բանակի Այգեստանի թիվ 37447 զորամասի զինծառայող, 2010 թ.-ի մայիսի 12-ին Արմավիրի զինկոմիսարիատից զորակոչված Երվանդ Սարգսյանի դին հայտնաբերվել էր ջրատար խողովակի մեջ: Ըստ դատաբժշկական փորձաքննության արդյունքների, նա մահացել է մեխանիկական շնչահեղձությունից՝ շնչառական ուղիների հեղուկով փակվելու-ջրահեղձության հետևանքով: Ըստ զինվորի հոր՝ նա որդու մարմնի տարբեր մասերում տեսել է քերծվածքներ և կապտուկներ, նա նշել է, որ արմունկը եղել է ջարդած, այնպիսի տպավորություն է եղել, ասես նրան քարշ են տվել: Հայրը գործով ճանաչվել է տուժողի իրավահաջորդ, սակայն քննիչը նրան չի տրամադրել գործի նյութերը:

19.11.2010թ. ՀՀ ՊՆ N Զ/Մ-ում /քաղաք Ճամբարակ/ հրազենային վնասվածքների հետևանքով սպանվել է ժամկետային զինծառայող Ռոբերտ Ավետիսյանը: Ըստ մամուլի

հայտնած տեղեկությունների՝ Ավետիսյանը սպանվել է զինծառայողների միջև, այսպես կոչված "ռազբորկայի" պատճառով: Սակայն համաձայն Զինդատախազության ներկայացրած վարկածի՝ Ավետիսյանը հատել է թշնամու հետ շփման արգելված գիծը, չի ասել նշանաբանը, չի ենթարկվել հրահանգներին, այդ իսկ պատճառով սպանվել է համածառայող պահակախմբի անդամներից մեկի կողմից:

ՎԱՀԱՆ ԽԱԼԱՖՅԱՆ

2010թ. ապրիլի 13-ի առավոտյան ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժի աշխատակիցները ոստիկանության բաժանմունք են բերման ենթարկվել նույն քաղաքի բնակիչ Վահան Խալաֆյանին: Խալաֆյանը ոստիկանության բաժանմունքում անազատության մեջ է գտնվել ժամը 10-ից մինչև 17-ը՝ շուրջ 7 ժամ, որի ընթացքում նրան հարցաքննել են, հարցաքննության ընթացքում առաջադրվել է հանցագործության՝ գողության, կատարման մեջ մերկացնող հարցեր, նա փաստացի գտնվել է կասկածյալի կարգավիճակում: ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնում գտնվելու ընթացքում Խալաֆյանը փաստաբան չի ունեցել: Նա ոստիկանության իրավազորության ներքո գտնվելու ընթացքում ստացել է մարմնական վնասվածքներ, այդ թվում՝ սուր կտրող գործիքով, և մահացել է: Ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձինք, այդ թվում՝ ՀՀ Ոստիկանության պետ Ալիկ Սարգսյանը, ի սկզբանե հրապարակավ հայտարարեցին, որ Խալաֆյանը ինքնասպան է եղել: Նախաքննության մարմինը քննել է միայն ինքնասպանության վարկածը և որևէ քննության չի իրականացրել ոստիկանության բաժանմունքում Խալաֆյանի սպանության վարկածը հաստատելու կամ հերքելու ուղությամբ: Նախաքննությամբ և դատաքննությամբ ձեռք բերված ապացույցների համաձայն՝ Խալաֆյանը իր մահվան հետ պատճառահետևանքային կապ ունեցող մարմնական վնասվածքները ստացել է մի սենյակում, որտեղ բացի իրենից գտնվել են ևս երեք ոսիկան: Նախաքննության մարմինը մեղադրանք է առաջադրել Խալաֆյանի հետ նույն սենյակում գտնված երեք ոստիկանների և ևս մեկ ոստիկանի, ով ապտակներ էր հասցրել Խալաֆյանին և հայհոյել: Մեղադրանքի էությունը կայանում էր նրանում, որ հարվածները և հայհոյանքները անզգուշությամբ հանգեցրել են ծանր հետևանքի՝ Խայաֆյանի ինքնասպանությանը: Խայաֆյանի հետ նույն սենյակում գտնված երեք ոստիկաններին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նրանք չէն կանխել իրենցից կոչումով և պաշտոնով բարձր ոստիկանի կողմից Խալաֆյանին հասցված ապտակները: Դատարանը դատաքննության փուլում ակնհայտորեն դժկամությամբ էր վերաբերվում բոլոր այն միջնորդություններին, որոնք ուղղված էին ինքնասպանության վարկացից տարբերվող վարկացների հաստատող հանգամանքների բացահայտմանը: Դատարանը մերժեց քննչական փորձարարություն իրականացնելու և ևս մի քանի կարևոր միրջնորդություններ: Առաջին ատյանի դատարանը հաստատված համարեց ինքնասպանության վարկածը: Չնայած դրան՝ Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական առաքելություն իրականացնող խումբը առաջ է քաշել այլ վարկած, համաձայն որի՝ Խալաֆյանին ծեծելով են սպանել և նա մահացել է գլխին հարված

ստանալու հետևանքով: Հետագայում ոստիկանության աշխատակիցները ինքնասպանության իմիտացիա ստեղծելու նպատակով դանակի հարված են հասցրել որովայնի շրջանում: Երբ Խալաֆյանին տարել են հիվանդանոց, այնտեղ նրան հասցրել են դանակի երկրորդ հարվածը, ինչը արվել է հետևյալ նպատակով՝ ոստիկանների կողմից արված առաջին հարվածի խորությունը կազմել է 3սմ, որը չէր կարող բերել մահվան: Այդ պատճառով, անկենդան մարմնի վրա արվել է երկրորդ հարվածը 12 սմ խորությամբ, որը նպատակ է հետապնդել վնասել որովայնային աորտան, որը գտնվում է որովայնի ետին պատի վրա: Դա արվել է մարդու անատոմիային քաջ ծանոթ անձի կողմից, ով նաև շատ լավ գիտի այդ աորտայի վնասվածքի հետևանքները: Ըստ Հելսինկյան Ասոցիացիայի՝ այդ անձը կարող է հանդիսանալ հիվանդանոցի բժիշկը[64]: Սակայն դատաբժշկական փորձաքննության համաձայն՝ որովայնային աորտան վնասված չի եղել:

Մեղադրական դատավճիռ կայացվեց երկու ոստիկանի նկատմամբ՝ Խալաֆյանին հարվածող և սենյակում գտնված ոստիկաններից մեկի, մյուս երկուսն արդարացվեցին: Դատարանը քննության առարկա չդարձրեց Խալաֆյանի անձնական անձեռնմեխելիության, արդար դատաքննության, խոշտանգումներից և ամնարդկային վերաբերմունքից զերծ լինելու, կյանքի իրավունքների խախտման փաստերը ճանաչելու վերաբերյալ տուժող կողմի պահանջները և չպատճառաբանեց թե ինչու չի քննում դրանք:

Դեպքի հանգամանքները, դատաքննությունը

1.1. 2010թ. ապրիլի 6-ին Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 29-րդ շենքի մոտակայքում գտնվող փայտե շինությունից կատարվել է 1,5 մլն ՀՀ դրամի արժողության տարբեր տեսակի հագուստների գողություն:

1.2. Դեպքի կապակցությամբ ՀՀ ոստիկանության Չարենցավանի քննչական բաժանմունքում հարուցվել է 66101110 քրեական գործը, ձեռնարկվել են քննչական և օպերատիվ-որոնողական միջոցառումներ:

[64] http://www.armtimes.com/18980

1.3. Հիշյալ հանցագործության բացահայտման նպատակով կատարվող օպերատիվ աշխատանքների շրջանակում 2010թ. ապրիլի 13-ի առավոտյան ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժին բերման է ենթարկվել Վահան Խալաֆյանը:

1.4. Խալաֆյանը ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժին բերման է ենթարկվել ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր Աշոտ Հարությունյանի անմիջական հանձնարարությամբ:

1.5. Խալաֆյանը բերման ենթարկելն իրականացրել է ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժին քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազոր, ոստիկանության ավագ լեյտենանտ Մորես Հայրապետյանը:

1.6. Խալաֆյանը ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժին բերման ենթարկելու հանձնարարականը Աշոտ Հարությունյանի փոխանցվել է ոստիկանության Չարենցավանի բաժնի պետի և նրա տեղակալի կողմից:

1.7. Խալաֆյանը ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնում գտնվել է փաստացի անազատության մեջ:

Այս փաստերը հաստատվում են գործում առկա և դատաքննության ընթացքում հետազոտված հետևյալ ապացույցներով.

1.7.1. Վկա Վարդան Խալաֆյանի ցուցմունքից - « Մինչև Վահանի հագնվելը ես ոստիկանությունից հետաքրքրվեցի, թե ի՞նչ է եղել, նրանք ինձ ասեցին, որ տեղի է ունեցել վիճաբանություն, որի հանգամանքները պարզելու համար **Վահանին պետք է տանեն ոստիկանության Չարենցավանի բաժին**: Վահանը հագնվեց և ես այդ ընթացքում չկարողացա իրեն որևէ բան հարցնել և նա ոստիկանների հետևից գնաց:» (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 5-րդ էջ, 2-րդ պարբերություն՝ ներքևից)

1.7.2. Վկա Վարդան Խալաֆյանի ցուցմունքից - «**Ես մոտեցա Տոնոյանին և հետաքրքրվեցի, թե Վահանին ինչու են բերել բաժին, Սամվել Տոնոյանը պատասխանեց, որ Վահանին բաժին են բերել գողություն կատարելու կասկածանքով**:

Ես ասացի, որ **ոստիկանները ասել են, որ վիճաբանություն անելու կասկածանքով են Վահանին բաժին բերել, սակայն Տոնոյանը պատասխանեց, որ այդպես պետք է ասեին, որ բաժին բերելուց կասկածանքներ չառաջանար**:» (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 6-րդ էջ, 2-րդ տող՝ վերևից)

1.7.3. Ա.Ջեյնալյանի հարցը (Վարդան Խալաֆյանին) - «Ասացեք խնդրեմ, Ձեր եղբորը **հրավիրեցի՞ն, թե՞ տարան բաժին**:
Վկայի պատասխանը - **Տարան**:
Հաջորդ հարցը - **Որևէ փաստաթուղթ ներկայացրեցի՞ն**:
Վկայի պատասխանը - **Ոչ**: (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 6-րդ էջ, միջնամաս)

1.7.4. Գ.Մարգարյանի հարցը (Վարդան Խալաֆյանին) - Այդ երեքին, որ բերեցին, **եղե՞լ է պահ, որ նրանք դուրս գան բաժնից**:
Վկայի պատասխանը - **Ես առավոտվանից մինչև 17.00-ը եղել եմ բաժնում և չեմ տեսել, որ նրանք դուրս գան**:
Հաջորդ հարցը, - Առավոտյան, երբ ոստիկանները եկան **ծանուցագիր հանձնեցի՞ն եղբորդ**:
Վկայի պատասխանը - **Ոչ**: (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 7-րդ էջ, միջնամաս)

1.7.5. Վկա Արթուր Խալաֆյան (ցուցմունք) - «Ես հարցրեցի, թե ինչի են տարել Վարդանն էլ ասաց, որ վիճաբանություն է եղել: Մենք միասին մոտավորապես ժամը 10.30-ին գնացինք Չարենցավանի ոստիկանության բաժին և երկուսով փորձեցինք մտնել բաժին, որպեսզի իմանայինք, թե՞ ինչու են Վահանին տարել, բայց ...» (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 10-րդ էջ, 2-րդ պարբերություն՝ ներքևից)

1.7.6. Ա.Ջեյնալյանի հարցը (Արթուր Խալաֆյանին) - Երբ Դուք ոստիկանությունում կանգնած էիք, **կասկածյալներից դուրս եկե՞լ են**:

Վկայի պատասխանը - Իրենցից **մեկը՝ ոստիկանության աշխատակցի հետ**: (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 11-րդ էջ, 6-րդ պարբերություն՝ վերևից)

1.7.7. Ա.Ջեյնալյանի հարցը (Վկա Սամվել Տոնոյանին) - Դուք ասացիք, որ **Հեբոյանն ասաց որ, մարդկանց հրավիրեք բաժին**, ասացեք խնդրեմ, այդ **հրավիրելը ինչ կատեգորիա էր**:

Վկայի պատասխանը,- **Օպերատիվ պարզաբանումներ կատարելու**:

Հաջորդ հարցը,- **Դուք գիտակցում ե՞ք, որ նշված անձինք բաժին հրավիրվելուց հետո այնտեղից իրենց կամքով չեն կարող դուրս գալ**:

Վկայի պատասխանը,- **Այո**:

Հաջորդ հարցը - Իրավական հիմքը, որ՞ն է՝ նրանց բերմա՞ն էին ենթարկել, թե ձերբակալել են:

Վկայի պատասխանը, - **Մենք իրենց հրավիրել ենք**:

Հաջորդ հարցը - **Հրավիրելու հանձնարարականը անձամբ Դու՞ք եք տվել**:

Վկայի պատասխանը, - **Այո, պետն ինձ է հանձնարարել, ես էլ Աշոտին**: (21.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 11-րդ էջ, միջնամաս)

1.7.8. Ամբաստանյալ Ա.Հարությունյանի հարցը (Վկա Նորիկ Հեբոյանին) - Ես ինչքան հասկացա այդ օրը **բաժին բերելը, բերման ենթարկելը, կատարվել է Ձե՞ր հանձնարությամբ**:

Վկայի պատասխանը - **Այո**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 7-րդ էջ, 10-րդ պարբերություն՝ վերևից)

1.7.9. Ամբաստանյալ Մ.Հայրապետյան (ցուցմունք) « ... Ժամը 10-ի սահմաններում **Աշոտ Հարությունյանը ինձ և Համլետ Դավթյանին կանչեց իր աշխատասենյակ և տվեց թուղթ, որի վրա գրված էր անուն ազգանուն և հասցե, որպեսզի նշված անձին բերեմ բաժին**:

Նշեմ, որ ես ու Համլետը դուրս եկանք ժամը 10-ի սահմաններում գնացինք ներքև, 3-րդ թաղամաս, կարծեմ 29 շենք, 16 բնակարան:

.....

Վարդանը հրավիրեց ներս, ես իրեն ասացի, որ Վահանին արթնացրա թող գա բաժին ենք գնալու, Վարդանը սկսեց հետաքրքրվել, թե ինչ է տեղի ունեցել: Ես նրան ասեցի, որ կռիվ են արել ճշտումներ կա անելու: Մինչև այդ Աշոտ Հարությունյանը ինձ ասեց, որ կռիվ են արել, գնացեք բերեք: ....» (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 15-րդ էջ, 2-րդ պարբերություն՝ վերևից)

1.7.10. Ամբաստանյալ Մ.Հայրապետյան (ցուցմունք) «... Աշոտ Հարությունյանը ասեց, որ Համլետի հետ Վահանին տանեմ Միրումյանի աշխատասենյակ, ես իրեն ասեցի **բերման արձանագրությունը կազմեմ**, չնայած մինչև այդ էլ եմ հարցրել **նա ասեց, որ ոչ, երբ որ ես կասեմ այն ժամանակ էլ կկազմեք: Եվ նա զգուշացրեց, որ ամեն ինչը կատարվում է իր ղեկավարությամբ»**: (18.08.(2010թ դատական (նիստի արձանագրություն,(15-րդ (էջ, 3-(րդ պարբերություն՝(ներքևից)

1.7.11. Ս.Սաֆարյանի հարցը (Ամբաստանյալ Մ.Հայրապետյան) - **Ո՞վ է Խալաֆյանին զուգարան տարել**:

Ամբաստանյալի պատասխանը - **Ես եմ տարել**:

Հաջորդ հարցը - Բանալին ումի՞ց եք վերցրել:

Ամբաստանյալի պատասխանը,- Ես բանալին չեմ վերցրել:

Հաջորդ հարցը - Ես որքան հասկացա զուգարանը փակվում է:

Ամբաստանյալի պատասխանը - Ես բանալին չեմ վերցրել, **զուգարանը բաց էր**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 17-րդ էջ, 5-րդ պարբերություն՝ վերևից)

1.7.12. Ա.Ջեյնալյանի հարցը (Ամբաստանյալ Մ.Հայրապետյան) - **Դուք Խալաֆյանին տարել եք զուգարան**, ո՞ր ժամին եք տարել:

Ամբաստանյալի պատասխանը - Չեմ կարող հիշել:

Հաջորդ հարցը - Հացը արդեն կերե՞լ էր, որ տարաք:

Ամբաստանյալի պատասխանը, - **Չեմ հիշում, բայց Միրումյան Կամոյի աշխատասենյակում էինք**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 22-րդ էջ, միջնամաս)

1.7.13. Ամբաստանյալ Գագիկ Ղազարյան (ցուցմունք) - « ... Իրենք բաժնի դիմաց կանգնած էին, մենք միասին մտանք բաժին ու **բոլոր կալանավորվածներին այդ թվում էլ Վահանին ուտելիք տվեցինք**: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 2-րդ էջ, 2-րդ պարբերություն՝ վերևից)

1.7.14. Ամբաստանյալ Աշոտ Հարությունյան (ցուցմունք) - « ... Ես մտա իմ սենյակ, ասացի Վահանը դու ես ասեց, թե հա, ծանոթացա, թե ովա, ինչա, ոնցա, հարցրեցի, թե ի՞նչ կապ ունի ես ինչ անձնավորությունների հետ, ասեց, որ ճանաչում եմ, որպես Չարենցավանի քաղաքացիներ: Ինչպես նաև հարցրեցի, թե ամսի 4-6-ը իրանց հետ ինչ-որ տեղ եղել է, ասաց, որ չէ, չեմ եղել, հարցրեցի, որ դու այսինչ օրը այսինչ ժամին գողության մասնակից եղել ես ինքն էլ ասաց, թե բա **Մորեսը ինձ այստեղ բերելուց ասում էր ինչ-որ կռվի մասին, ես իրեն ասացի չէ, դա ուղղակի ասել էինք մեր օպերատիվ աշխատանքների շահերից ելնելով**: **Ես ասացի, որ իրեն բերել են բաժին այսինչ գողության համար**, նա ասեց, որ ինքը մասնակից չի եղել այդ գողությանը» : (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 16-րդ էջ, 2-րդ պարբերություն՝ վերևից)

1.7.15. Ամբաստանյալ Աշոտ Հարությունյան (ցուցմունք) - « ... Ես դուրս եմ գալիս **Միրումյանին խնդրում եմ, որ իր աշխատասենյակը տրամադրի**, քանի որ ես դուրս եմ գալիս և Միրումյանը ասում է, որ խնդիր չկա: **Մորեսի հետ Վահանը ժամը երևի կլիներ 11-ից 12-ի կողմերը գնում է Միրումյանի աշխատասենյակ**: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 16-րդ էջ, 1-ին պարբերություն՝ ներքևից, միջնամաս)

1.7.16. Ամբաստանյալ Աշոտ Հարությունյան (ցուցմունք) - « ... հասնում ենք Չարենցավան մոտավորապես 16.30-ի կողմերը, եկա բաժին .... : Գնացի Միրումյանի աշխատասենյակ, Վահանը ոտքի կանգնեց այդ ժամանակ աշխատասենյակում էին գտնվում Գագիկ Ղազարյանը, Գարիկը և Մորեսը, ես Մորեսից հարցրեցի, թե ի՞նչ է պարզել, ասաց, որ ոչ մի բան, ասացի

ինչպե՞ս չես պարզել **ամբողջ օրը կողքը նստած ես եղել ու ես ասել եմ, որ իր հետ պետք է աշխատանքներ վարես և դու ոչ մի բան չե՞ս պարզել**, ես քեզ հանձնարարել էի, որ կոնկրետ աշխատանքներ տանեիր և պատճառը ի՞նչ է, որ ոչինչ չես արել: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 17-րդ էջ, 2-րդ պարբերություն՝ վերևից)

1.7.17. Ա.Զեյնալյանի հարցը (ամբաստանյալ Ա. Հարությունյանին) - Ձեր ցուցմունքից հասկացանք, որ **Դուք եք ասել, որ Վահանին Մորեսը բերի և բերելով բաժին Մորեսը ասել է, որ Վահանը ինքն է**, միևնույն ժամանակ, **Դուք նշեցիք, որ հանգուցյալին բերելու համար Դուք պատրվակ եք օգտագործել վիճաբանությունը, այսինքն խաբելո՞վ եք բերել, այլ պատրվակով եք բերել, իրականում ա՞յլ պատճառ է եղել**:

Ամբաստանյալի պատասխանը - ..... Սովորաբար ոստիկանության բարձրագույն դպրոցում, թե պրակտիկայի ընթացքում, **երբ մարդկանց գնում բերում են բաժին միանշանակ չեն ասում, թե այսինչ հարցով են բերում ու միշտ ուրիշ լեգենդայով, ուրիշ պատրվակով ոչ, թե խաբում են այլ որպեսզի դուրսը չիմանան**, ...: (27.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 11-րդ էջ, 1-ին պարբերություն՝ ներքևից)

1.7.18. Ա.Զեյնալյանի հարցը (ամբաստանյալ Ա. Հարությունյանին) - **Դուք այստեղ դատարում ասացի՞ք, որ նրանց բաժնում գտնվելը չեք համարում օրինական և նրանց բաժնում գտնվելը եղել է անօրինական**:

Ամբաստանյալի պատասխանը - Իմ օրինական համարել կամ չհամարելը անձամբ իմը՝ որպես ոստիկանի, ոչ թե որոշողի էդ իրավիճակում, թե ինչ պետք է արվի, **ես էլի եմ կրկնում, որ դա ես օրինաչափ չեմ համարում**, բայց այդ հանգամանքը պարզելու համար մի քիչ հետ գնանք և տենանք, թե Ա.Հարությունյանի արածը կամ չարածը ինչքանովա տեղավորվում: ....

Հաջորդ հարցը, - Այսինք քր. դատ. օր-ում սահմանված կա՞ որևէ իրավական հիմք նման ձևով, կարգով մարդկանց պահելու ոստիկանության բաժանմունքում, Դուք սա օրինաչափ, իրավաչափ համարու՞մ եք, և Դուք Ձեր ցուցմունքում ասացիք, որ դա օրինական չէ:

Ամբաստանյալի պատասխանը,- **Ես էլի եմ ասում, որ չեմ կարող պնդել, որ դա օրինական է պահել կամ չպահելը,** իսկ մարդկանց բերելու և հրավիրելու հետ կապված ես արդեն ասացի, որ մենք ղեկավարվել ենք օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենքով՝ օպերատիվ հարցում կատարելու համար, իսկ թե նա այդքան ժամանակ մնացել է, թե ինչ գրանցումներ է կատարվել կամ չի կատարվել ես էլի եմ ասում, որ չեմ ընդունում միանշանակ:

....

Հաջորդ հարցը - Այսինքն **Մորեսին անձա՞մբ եք ուղարկել**:

Ամբաստանյալի պատասխանը,- **Այո, թող տենց լինի**:

Հաջորդ հարցը,- **Ծանուցագիր տվե՞լ եք, որ դրա հիման վրա ներկայանա**:

Ամբաստանյալի պատասխանը - Այդ հարցը ինձ հատուկ քննչականում էլ են տվել, թե ծանուցագր եղել է, թե ոչ: **Երբ որ հանձնարարվեց, ես չեմ հարցրել ծանուցագիր կա, թե չկա**: (27.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 12-րդ էջ, 3-րդ պարբերություն՝ վերևից)

1.7.19. Վկա Վարդան Խալաֆյանի ցուցմունքից - « **Ժամը 4-ի կողմերը կլիներ, հարցրեցի, թե թույլ կտան, որ հաց բերեմ եղբորս**, պատասխանեցին, որ այո, ես գնացի և հաց բերեցի եղբորս և մտա իր մոտ: ...» (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 6-րդ էջ, 5-րդ պարբերություն՝ վերևից)

1.7.20. Վկա Սամվել Տոնոյան ցուցմունքից - « ... Դուրս եկա բաժնից և տեսա, որ բաժնի մոտ կանգնած էր Վահանի եղբայր Վարդանը: Մոտ 10 րոպե հետո ինձ մոտեցավ օ/լ Գ.Ղազարյանը և ասաց, որ **բերման ենթարկվածների հարազատները ուտելիք են բերել և ցանկանում են փոխանցել հարազատներին**, ես էլ թույլ տվեցի»: (21.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 10-րդ էջ, 1-ին պարբերություն՝ ներքևից)

1.8. 13.04.2010թ Խալաֆյանը Չարենցավանի ոստիկանության աշխատակիցների կողմից բերման է ենթարկվել և պահվել է անազատության մեջ առանց որևէ օրինական

հիմքի: Խալաֆյանը անազատության մեջ է գտնվել ժամը 10-ից մինչև 17-ը՝ շուրջ 7 ժամ:

1.9. Բերման ենթարկվելու պահին Խալաֆյանը որևէ քրեական գործով, այդ թվում՝ 06.04.2010թ գողության (քրեական գործ № 66101110), կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, դատապարտյալ, վկա կամ տուժող չի հանդիսացել՝ այդպիսի դատավարական կարգավիճակ չի ունեցել: Նա որևէ իրավապահ մարմնի կողմից ոչ մի դատավարական գործողության մասնակցելու կանչված չի եղել ու խուսափած չի եղել դրանցից, գոյություն չի ունեցել Խալաֆյանին բերման ենթարկելու մասին հետաքննության կամ նախաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից կայացված որևէ որոշում:

1.10. 06.04.2010թ գողության կատարման կասկածանքով Խալաֆյանը, բերման է ենթարկել Չարենցավանի ոստիկանություն, նրան հարցաքննել են և **հարցաքննության ընթացքում առաջադրվել է հանցագործության կատարման մեջ մերկացնող հարցեր**. Խալաֆյանը փաստացի գտնվել է կասկածյալի կարգավիճակում:

1.11. ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնում գտնվելու ընթացքում Խալաֆյանը փաստաբան չի ունեցել:

Այս փաստերը հաստատվում են գործում առկա և դատաքննության ընթացքում հետազոտված հետևյալ ապացույցներով.

1.11.1. Ամբաստանյալ Մ.Հայրապետյան (բացատրություն) - « ... ՔՀԲ-ի պետ, ոստիկանության մայոր՝ Ա. Հարությունյանը և Կ. Միրումյանը Վ. Խալաֆյանի հետ **բացատրական զրույց վարեցին, որպեսզի իր կատարած արարքը խոստովանի, քանի որ ընկերները արդեն իսկ խոստովանել են իրենց կողմից կատարած գողության մասին**: ... »: (ծառայողական քննության նյութեր, արձանագրություն 13.04.2010թ, 2-րդ էջ՝ ներքևից)

1.11.2. Հ.Խալաֆյանի հարցը (Վկա Սամվել Տոնոյանին) - Ինչ էր խանգարում Վահանին ընդունել մեղքը, այն դեպքում, որ այդպիսի արտահայտություն է արել:

Վկայի պատասխանը - **Ինքը ասում էր, բերեք առերեսում արեք նոր, ավելորդություն է, եթե երեքը խոստովանում են**: (21.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 13-րդ էջ, 12-րդ պարբերություն վերևից)

1.11.3. Ամբաստանյալ Մ.Հայրապետյան (ցուցմունք) «... Աշոտ Հարությունյանը սկսեց **հարցեր տալ Վահան Խալաֆյանին ինչ-որ գողության մասին**: **Այդ խոսակցությունից պարզ դարձավ, որ Աշոտ Հարությունյանը գողության մասին հարցնում է Վահան Խալաֆյանից, իսկ Վահան Խալաֆյանն էլ պատասխանում է, որ ես ոչ մի գողություն չեմ արել**: ... »: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 15-րդ էջ, միջնամաս)

1.11.4. Ամբաստանյալ Մ.Հայրապետյան (ցուցմունք) - « ... Ա.Հարությունյանը Վահանին ասեց, թե ոտքի կանգնի, Վահանը կանգնեց Ա.Հարությունյանը ասեց, որ իրեղենը էջմիածնում է և **քո հետի մասնակիցները խոստովանել են դու էլ խոստովանի**: **Վահան Խալաֆյանն էլ ասեց, որ ես գողություն չեմ կատարել և ես այդ գողության հետ որևէ առնչություն չունեմ և ինչ-որ մեկին բերեք կանգնեցրեք դեմս տեսնամ ով է ասում, որ ես կատարել եմ գողություն**:»: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 16-րդ էջ, 1-ին պարբերություն վերևից)

1.11.5. Ամբաստանյալ Գ.Ղազարյան (ցուցմունք) - «... Մի որոշ ժամանակ անց Հարությունյանը եկավ, մտավ ներս, Վահանը ոտքի կանգնեց և **Հարությունյանը դիմելով Վահանին ասաց, թե էջմիածնից նոր ենք գալիս, ապրանքը կա, ամեն ինչը կա, իրեղենը կա, երեքն արդեն խոստովանել են, դու ի՞նչ ես ասում, հիմա դու կա՞ս մեջը, թե չէ: Ինքը միանշանակ ասեց, որ չէ, չկամ, ես ոչ մի բան չեմ արել, տեղյակ չեմ**»: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 21-րդ էջ, 2-րդ պարբերություն վերևից)

1.11.6. Ամբաստանյալ Աշոտ Հարությունյան (ցուցմունք) - « ... Ես մտա իմ սենյակ, ասացի Վահանը դու ես ասեց, թե հա, ծանոթացա, թե ովա, ինչա, ոնցա, հարցրեցի, թե ի՞նչ կապ ունի ես ինչ անձնավորությունների հետ, ասեց, որ ճանաչում եմ, որպես Չարենցավանի քաղաքացիներ: Ինչպես նաև հարցրեցի, թե ամսի 4-6-ը իրանց հետ ինչ-որ տեղ եղել է, ասաց, որ չէ, չեմ եղել, **հարցրեցի, որ դու այսինչ օրը այսինչ ժամին գողության մասնակից եղել ես ինքն էլ ասաց, թե բա Մորեսը ինձ այստեղ բերելուց ասում էր ինչ-որ կռվի մասին, ես իրեն ասացի չէ, դա ուղղակի ասել էինք մեր օպերատիվ աշխատանքների շահերից ելնելով**: Ես ասացի, որ **իրեն բերել են բաժին այսինչ գողության համար, նա ասեց, որ ինքը մասնակից չի եղել այդ գողությանը**» : (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 16-րդ էջ, 2-րդ պարբերություն՝ վերևից)

1.11.7. Ամբաստանյալ Ա.Հարությունյան (ցուցմունք) - « ... **Ես թեքվեցի Վահանի կողմը և ասացի, որ Վահան ես նոր Էջմիածնից եմ գալիս ապրանքը կա**, հա ես ուզում եմ շեշտել նաև **այն որ ես դեռ չէի հասել Չարենցավան ինձ զանգահարեց Մորես Հայրապետյանը և ինձ ասեց, որ Դավիթը արդեն պատմում է գողությունը**, Շիրազն էլ արդեն ընդունել է իր մեղքը, **ասացի իսկ Վահանը, Մորեսն էլ ասեց, որ իլը Վահանից կոնկրետ բան չկա**: **Ասացի բա ի՞նչ են անում, ասեց, որ բացատրություններ են վերցնում**: Արդեն **հասնում եմ բաժին մտնում եմ աշխատասենյակ և Վահանին ասում եմ, որ Վահան բոլորը արդեն ընդունել են և պատմել են գողության մանրամասները իրենք հաստատապես պնդում են, որ Դու իրանց հետ մասնակից ես, Վահանն էլ ասեց, որ ես չեմ մասնակցել այդ գողությանը և տեղեկություն չունեմ այդ գողության մասին**: **Ես Վահանից հարցրեցի, թե նա դատված է, Վահանն էլ ասեց, որ ոչ: Ես իրան ասացի, որ ավելի լավ է դու ընդունես, Վահանն էլ ասեց, որ ինքը չի մասնակցել գողությանը և ինքը տեղյակ չի, ասացի ընդունի քո մեղքը և դա կլինի մեղմացուցիչ հանգամանք և այդ ժամանակ դուռը բացվում և ինձ կանչում են դուրս**»: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 17-րդ էջ, 2-րդ պարբերություն վերևից)

1.11.8. Նախագահողի հարցը (ամբաստանյալ Ա. Հարությունյանին) - **Դուք համոզվա՞ծ եք, որ անձի կողմից մեղքը չընդունելը դիտվում է որպես ծանրացուցիչ հանգամանք**, սա կապում եմ այն հանգամանքի հետ, որ **Դուք Ձեր ցուցմունքում նշեցիք որ ասել եք՝ «Վահան արի ճիշտը խոստովանի, որովհետև, եթե չխոստովանես սա կծանրացնի քո մեղքը և այն կհամարվի որպես ծանրացուցիչ հանգամանք»**:

Ամբաստանյալի պատասխանը - **Պրակտիկայում այդպես է**:

Հաջորդ հարցը - **Քրեական օր-ի 62-63-րդ հոդ-ը հստակ սահմանում է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, ծանրացնող հանգամանքների ցանկը, առավելապես ծանրացնող հանգամանքներինը**:

Ամբաստանյալի պատասխանը,- **Ես ասել եմ, որ եթե չընդունես ավելի վատ կլինի**: (27.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 21-րդ էջ, 4-րդ պարբերություն՝ ներքևից)

1.12. Չարենցավանի ոստիկանությունում անազատության մեջ գտնվելու ընթացքում Խալաֆյանը ենթարկվել է բռնությունների, սակայն դա անհրաժեշտ չի եղել նրան կարգի հրավիրելու համար. նա իր վարքագծով դրա առիթը չի տվել:

1.13. Մինչև ոստիկանություն տանելը Խալաֆյանի վրա չեն եղել այն մարմնական վնասվածքները, որոնք արձանագրվել են նրա մահից հետո:

Այս փաստերը հաստատվում են գործում առկա և դատաքննության ընթացքում հետազոտված հետևյալ ապացույցներով.

1.13.1. Վ. Խալաֆյանի դիակի դատաբժշկական փորձաքննություն № 353 եզրակացություն - «Արյունազեղում գլխի մաշկի տակ գագաթային շրջանում, արյունազեղում վերին շրթունքի լորձաթաղանթի տակ բերանի ձախ անկյան շրջանում, արյունազեղում ձախից ստորկզակային շրջանում, քերծվածքներ քթի հիմի շրջանում, աջ սրունքի միջին երրորդի առաջային մակերեսին, աջ ծնկափոսային շրջանում, աջ սրունք-թաթային հոդի շրջանի ներսային

մակերեսին, ձախ սրունքի վերին երրորդի առաջադրսային մակերեսին, ձախ սրունքի միջին երրորդի առաջային մակերեսին՝ շուրջը արյունազեղմամբ և աջ արմնկային հոդի շրջանի հետին մակերեսին: ...»: (II հատոր, 149 թերթի շուրջերես, «Դատաբժշկական ախտորոշում» ենթաբաժին, հավելված՝ էջ 152, 3-րդ լուսանկարը, էջ 154, 155, լուսանկարները, էջ 158 սխեմմա)

1.13.2. Մեղադրող Հ.Հարությունյանի հարցը (Վարդան Խալաֆյանին)- « 2010թ-ի ապրիլի 13-ին **երբ, Ձեր եղբայրը գնաց Չարենցավանի բաժին, մինչ տնից դուրս գալը նրա վրա մարմնական վնասվածքներ կայի՞ն**:

Վկայի պատասխանը,- **Ոչ**:

Հաջորդ հարցը - Ձեր եղբայրը դեպքին նախորդող օրերին վիճաբանության մասնակից եղե՞լ է, թե ոչ:

Վկայի պատասխանը - Ոչ, ես դա հաստատ կարող եմ ասել:» (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 6-րդ էջ, միջնամաս)

1.13.3. Պաշտպան Ս.Սաֆարյանի հարցը (Վարդան Խալաֆյանին) - Դուք մեղադրողի հարցին պատասխանեցիք, որ **մարմնական վնասվածքներ Ձեր եղբոր վրա չեն եղել, Դուք Ձեր ենթադրությո՞ւնն արեցիք**:

Վկայի պատասխանը - **Ես ու ախպերս կողք կողքի ենք քնում և բնականաբար երեկոյան հագուստներս հանում էինք և ես իր վրա որևէ մարմնկան վնասվածք չեմ նկատել և եթե ինչ-որ բան լիներ, ապա եղբայրս անպայման ինձ կասեր**: (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 8-րդ էջ, միջնամաս)

1.13.4. Նախագահողի հարցը (Արթուր Խալաֆյանին) - Ձեր ցուցմունքից այն պարզ դարձավ, որ ամբողջ օրը Դուք և Վարդան Խալաֆյանը եղել եք Չարնցավանի բաժնի մուտքի մոտ և հայտնեցիք, որ Վարդանը մտավ ներս հաց տարավ, դուս եկավ:

Ասացեք խնդրեմ, զրուցեցի՞ք նրա հետ և եթե այո, ապա նա ի՞նչ ասաց, **Վահանը ինչպե՞ս էր:**

Վկայի պատասխանը - Այո զրուցել եմ, **ասեց, որ նորմալ է**:

Հաջորդ հարցը - Այսինքն **արտառոց որևէ բան չէ՞ր նկատել**:

Վկայի պատասխանը - **Ոչ**: (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 12-րդ էջ, 2-րդ պարբերություն՝ վերևից)

1.13.5. Մեղադրող Կ.Փիլոյանի հարցը (Միրումյանին) - Ասացեք խնդրեմ, **Վ.Խալաֆյանի վրա արտաքին վնասվածքներ նկատե՞լ եք**:

Վկայի պատասխանը - **Ոչ**:

Հաջորդ հարցը - Հաջորդ օրը, երբ Ձեզ խնդրեցին տրամադրել Ձեր սենյակը, այդ ժամանակ **Վ.Խալաֆյանի մարմնի որևէ մասում վնասվածքներ նկատե՞լ եք**:

Վկայի պատասխանը - **Ոչ**: (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 13-րդ էջ, միջնամաս)

1.14. Չարենցավանի ոստիկանությունում Խալաֆյանը նվաստացվել է և ծեծի ենթարկել Աշոտ Հարությունյանի կողմից:

Փաստը հաստատվում է գործում առկա և դատաքննության ընթացքում հետազոտված հետևյալ ապացույցներով.

1.14.1. Ա.Ջեյնալյանի հարցը (Վարդան Խալաֆյանին) - Դուք նշեցիք, որ Աշոտ Հարությունյանը գնաց միջանցքով դեպի աջ և **Դուք լսեցիք բարձր ձայներ և հայհոյանքներ, ասացեք խնդրեմ այդ հայոհոյանքները Աշոտ Հաութունյանի՞ կողմից էր հնչում**:

Վկայի պատասխանը - **Այո, իրա ձայնն էր**: (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 7-րդ էջ, 11-րդ պարբերություն վերևից)

1.14.2. Փիլոյանի հարցը (Վկա Սամվել Տոնոյանին) - Ասացիք, ո՞վ է ձեզ պատմել դեպքի մասին:

Վկայի պատասխանը - Մենք, երբ դուս եկանք հատուկ քննչականից **Գարիկ Դավթյանը ասաց, որ Միրումյանի կաբինետում Հարությունյանը մի հատ խփել է Վահանին**: **Գագիկն էլ ասաց, որ մի հատ հայրական ապտակ է**

հասցրել: Ես դա իմացել եմ հատուկ քննչականից դուրս գալուց հետո, սակայն մինչ այդ ես հարցրել էի իրենց ու նրանք ինձ չէին ասել ճշմարտությունը:

Հաջորդ հարցը,- Ասացին, որ **այդ մի հայրական ապտակը Աշոտ Հարությունյա՞նն է տվել**:

Վկայի պատասխանը, - **Այո**: (21.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 11-րդ էջ, 1-ին պարբերություն՝ վերևից)

1.14.3. Ամբաստանյալ Գարիկ Դավթյան (ցուցմունք) - « ... Մոտ հինգ րոպե հետո ներս մտավ Աշոտը, ...: Մտավ և դիմելով Խալաֆյանին, թե հել կանգնի, Խալաֆյանը կանգնեց և ասեց, թե դու գիտես, որ քո հետի տղաները պատմել են գողության մասին, գնացել ենք Էջմիածին իրեղենի հետևից, մի քանի անգամ հնչեցրեց էջմիածին բառը, ուզում ես պատմի ուզում ես մի պատմի, հենց այդ պահին դուռը բացվեց և հերթապահ մասից շարքայիններից մեկն էր ասաց, որ ընկեր Հարությունյան Ձեզ կանչում են հեռախոսի մոտ: **Հարությունյանը ասաց ուզում ես պատմի ուզում ես մի պատմի և մի հատ հայհոյեց և մի հատ էլ ապտակեց** ու դուրս եկավ սենյակից: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 27-րդ էջ, 3-րդ պարբերություն վերևից)

1.14.4. Կ.Փիլոյանի հարցը (Ամբաստանյալ Գարիկ Դավթյանին) - Այսինք **մի անգամ է ապտակել, դրա համար էլ Ձեզ մեղավոր չե՞ք ճանաչում** և եթե նա բազմիցս ապտակած լիներ Դուք Ձեզ մեղավոր կճանաչեի՞ք:

Ամբաստանյալի պատասխանը - **Այո**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 32-րդ էջ, 1-ին պարբերություն վերևից)

1.14.5. Ա.Ձեյնալյանի հարցը (Ամբաստանյալ Գարիկ Դավթյանին) - **Մորես Հայրապետյանը իր ցուցմունքում ասեց, որ այդ ընթացքում, երբ Ա.Հարությունյանը ծեծել է Վահան Խալաֆյանին Դուք այնտեղ ներկա եք եղել, ասացեք խնդրեմ Մ.Հայրապետյանը ճի՞շտ է ասում**:

Ամբաստանյալի պատասխանը - **Ապտակելու ժամանակ այնտեղ եմ եղել**:

Հաջորդ հարցը - Մորես Հայրապետյանը երկրորդ դեպքը նկարագրեց, Դուք ասում եք, որ երեք հոգի եք եղել սենյակում դեպքի ժամանակ, **ոտքերով հարվածելու այդ հատվածը ճի՞շտ է ներկայացնում Մորեսը**:

Ամբաստանյալի պատասխանը - **Ես նման բան չեմ տեսել**:

Հաջորդ հարցը - **Դուք այդ ընթացքում հաստատ սենյակում եք եղել, բայց նման բան չե՞ք տեսել**:

Ամբաստանյալի պատասխանը - **Այո**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 33-րդ էջ, միջնամաս)

1.14.6. Ա.Զեյնալյանի հարցը (Ամբաստանյալ Գարիկ Դավթյանին) - **Ապտակելը ոստիկանի կողմից բերման ենթարկվածին օրինակա՞ն գործողություն է**:

Ամբաստանյալի պատասխանը - **Ոչ**:

Հաջորդ հարցը - **Դուք այդ անօրինական գործողությունից հետո, որպես ոստիկան, որպես իրավաբան, ի՞նչ գործողություններ արեցիք**:

Ամբաստանյալի պատասխանը - **Ոչ մի**:

Հաջորդ հարցը - **Դա օրինակա՞ն է ձեր կողմից**:

Ամբաստանյալի պատասխանը - **Օրինական չի, բայց դե հանցագործություն էլ չի**՝ ի՞նչ կարող էի անել: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 33-րդ էջ, 16-րդ պարբերություն՝ ներքևից)

1.14.7. Պաշտպան Ա.Հարությունյանի հարցը (Ամբաստանյալ Գարիկ Դավթյանին) - Դուք նշեցիք, որ Ա.Հարությունյանի սենյակ մտնելու ժամանակ Դուք գտնվել եք աշխատասենյակում, ասացեք խնդրեմ, այդ ամբողջ ընթացքը որքա՞ն է տևել:

Ամբաստանյալի պատասխանը - Աշոտ Հարությունյանի մտնելը, **ապտակելը, ամբողջ խոսակցությունը եղել է ընդհանուր երեք րոպե**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 36-րդ էջ, միջնամաս)

1.14.8. Ամբաստանյալ Գարիկ Դավթյանի պատասխանը (Նախագահողի հարցին) - Այո, **ես այդ աջ ու ձախ ապտակները մեկն եմ համարում**:

Հաջորդ հարցը - Պնդո՞ւմ եք:

Ամբաստանյալի պատասխանը - **Այո**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 37-րդ էջ, միջնամաս)

1.14.9. Ամբաստանյալ Գ. Դավթյան (բացատրություն) - « ... ՔՀԲ-ի պետ Աշոտ Հարությունյանը մոտեցավ Վ. Խալաֆյանին ասաց որ գողոնը շուտով կբերեն, մնացած տղերքը արդեն ասել են ուզում ես ասա ուզում ես մի ասա մեկա ատկազով կդատվես, այդ պահին ..., դուրս գալուց Ա. Հարությունյանը Վ. Խալաֆյանին ասաց որ «ասում ես ասա չես ասում **[...] (հայհոհանք) և ձեռքով ապտակեց նրան** ու դուրս եկավ աշխատասենյակից: Դրանից հետո մենք երկուսով ենք եղել աշխատասենյակում և Խալաֆյանի հետ ոչինչ չենք խոսել նստած էինք այնտեղ որտեղ սկզբում ենք եղել մոտ 5-6 րոպե անց Վ. Խալաֆյանը պահարանից վերցրեց դանակը և հարվածեց իր որովայնին: ... **ես այդ ապտակը չեմ համարել ծեծ, քանի որ ապտակը եղել է դաստիրակչական բնույթի և ավելի շատ նման էր հայրական ապտակի** ....:»: (ծառայողական քննության նյութեր արձանագրություն 04.05.2010թ)

1.14.10. Ամբաստանյալ Գագիկ Ղազարյան (ցուցմունք) - « ... **ժամը 16.30-ի սահմաններում գնացինք բաժին** .....:

....

Խոսակցության ընթացքում Միրումյան Կամոյի աշխատասենյակի դուռը կիսաբաց էր, հերթապահ մասից եկան ասացին, որ Հարությունյան քեզ կանչում են հեռախոսի մոտ: Հարությունյանը դուրս գալու ժամանակ ասեց, որ դե լավ, ուզում ես ասա, ուզում ես մի ասա, մեկա դու միանշանակ դատվելու ես ու **էդ պահին մի հատ ապտակեց** ու դուրս եկավ: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 2-րդ էջ, 1-ին, 3-4-րդ պարբերություններ՝ վերևից)

1.14.11. Նախագահող դատավորի հարցը (ամբաստանյալ Գագիկ Ղազարյանին) -Ի վերջո **Դուք տեսել եք մե՞կ ապտակ**:

Ամբաստանյալի պատասխանը - Եթե դա կարելի է ասել ապտակ, ապա **այո**: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 10-րդ էջ, 15-րդ պարբերություն՝ ներքևից)

1.14.12. Ա.Զեյնալյանի հարցը (Ամբաստանյալ Ա. Հարությունյանին) - **Դուք ծեծի՞ չեք ենթարկել**:
Ամբաստանյալի պատասխանը - **Ոչ**: (27.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 20-րդ էջ, 9-րդ պարբերություն՝ ներքևից)

1.14.13. Նախագահողի հարցը (ամբաստանյալ Ա. Հարությունյանին) - Ի սպառ ժխտո՞ւմ եք, որ Վ.Խալաֆյանի նկատմամբ բռնություն եք գործադրել նույնիսկ մեկ ապտակի տեսքով:
Ամբաստանյալի պատասխանը - Իմ կողմից բռնություն չի եղել ագամ մեկ ապտակի տեսքով: (27.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 22-րդ էջ, 11-րդ պարբերություն՝ վորևից)

1.15. Խալաֆյանը ոստիկանության իրավազորության ներքո գտնվելու ընթացքում ստացել է մարմնական վնասվածքներ և մահացել է:

1.16. Դեպքը տեղի է ունեցել ոստիկանության պրոֆիլակտիկայի բաժնի պետ՝ Կամո Միրումյանի աշխատասենյակում:

1.17. Միրումյանի աշխատասենյակում դեպքը տեղի ունենալու պահին, բացի սպանվածից, գտնվել են ևս երեք հոգի. Մորես Արծրունու Հայրապետյանը, Գարիկ Արամի Դավթյանը, Գագիկ Վլադիմիրի Ղազարյանը:

Փաստը հաստատվում է գործում առկա և դատաքննության ընթացքում հետազոտված հետևյալ ապացույցներով.

1.17.1. Ա.Զեյնալյանի հարցը (ամբաստանյալ Գարիկ Դավթյանին) - **Սենյակում այդ ընթացքում քանի՞ հոգի կային**:
Ամբաստանյալի պատասխանը - **Եղել ենք ես, Մորեսը, Գագիկը, Վահանը**:
Հաջորդ հարցը - **Աշոտ Հարությունյանը այդ պահին սենյակո՞ւմ էր**:
Ամբաստանյալի պատասխանը - **Ոչ**:

Հաջորդ հարցը - **Այլ մարդ չի՞ եղել սենյակում**:

Ամբաստանյալի պատասխանը - **Ոչ**: (13.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 15-րդ էջ, 15-րդ պարբերություն՝ վերևից)

1.18. Խալաֆյանի որովային առաջնային պատին առկա են դանակով արված ճանկռվածքներ և ծակած վերքեր:

1.19. Խալաֆյանի որովայնինդանակով կատարված ճանկռվածքները և հարվածները կատարվել են որովայնը մերկացնելուց հետո. նրա հագուստները վնասված չեն: Փաստը հաստատվում է Խալաֆյանի հագուստների փորձաքննության եզրակացությամբ:

1.20. Խալաֆյանի հագին եղել են հետևյալ վերնահագուստները, վարտիք, ուսաժապավեններով մայկա, անդրավարտիք, սվիտեր և ժակետ:

Փաստը հաստատվում է գործում առկա և դատաքննության ընթացքում հետազոտված հետևյալ ապացույցներով.

(գործ I հատոր, էջ 293, Փորձագետի եզրակացություն, 18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 16-րդ էջ, 4-րդ պարբերություն՝ վերևից, ամբաստանյալ Մ.Հայրապետյան (ցուցմունք)):

1.20.1. Ա.Ջեյնալյանի հարցը (Վարդան Խալաֆյանին) - Հագին ի՞նչ կար:

Վկայի պատասխանը - Սեռի շալվար էր, սվիտր և **ժակետ**:

Հաջորդ հարցը - Այդ ժամանակ **ժակետը հագի՞ն էր**:

Վկայի պատասխանը - **Այո**: (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 6-րդ էջ, 3-րդ տող՝ ներքևից)

1.20.2. Ա.Զեյնալյանի հարցը (Վարդան Խալաֆյանին) - Հաց ուտելու ժամանակ ուշադի՞ր էիք, շորերը պատռված չէի՞ն:

Վկայի պատասխանը - Չէ պատռվածքներ չեմ նկատել:

Հաջորդ հարցը - Իսկ **վերնաշապիկը շալվարի տա՞կ էր, թե՞ շալվարի վրա**:

1.21. Խալաֆյանի հագի ժակետը իրեղեն ապացույց չի ճանաչվել, գործին չի կցվել և փորձաքննության չի ուղարկվել:

1.22. Խալաֆյանը վնասվածքը ստանալուց անմիջապես հետո գիտակցությունը կորցրել է, բերանը «փակվել է», այսպես ասված լեզուն կուլ է գնացել, խռխռացրել է:

1.22.1. Ամբաստանյալ Մ.Հայրապետյան (բացատրություն) - « ... Մենք նրան պառկեցրեցինք հատակին մեջքի վրա, որպեսզի ցույց տանք I բուժ. օգնություն: ... **հարվածից հետո տեսա, որ Վ. Խալաֆյանը անմիջապես գունատվեց և չէր կարողանում խոսել**: (ծառայողական քննության նյութեր արձանագրություն 13.04.2010թ, 3-6-րդ էջեր)

1.22.2. Ա.Զեյնալյանի հարցը (Ամբաստանյալ Մ.Հայրապետյան) - **Նաշադիրը ո՞վ էր բերել**:

Վկայի պատասխանը, - **Դավթյան Գարիկն է բերել** և ով ինչ ձևով կարողանում էին, օգնում էին:

Հաջորդ հարցը, - Լեզուն կո՞ւլ էր գնում:

Ամբաստանյալի պատասխանը - Չեմ կարող ասել:

Հաջորդ հարցը - Կարող եք հայտնել, թե **ի՞նչ ձայներ էր հանում**:

Ամբաստանյալի պատասխանը - **Խռխռացնում էր**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 23-րդ էջ, 2-րդ պարբերություն՝ ներքևից)

1.22.3. Ամբաստանյալ Գ. Դավթյան (բացատրություն) - « ... Այնուհետև Վ. Խալաֆյանը իր որովայնին **հարվածելուց հետո ձեռքից դանակը վայր գցեց և թուլանալով չոքեց: Ես բղավեցի և Նրան պառկեցրեցի մեջքով հատակին**

օգնություն ցույց տալու համար: (ծառայողական քննության նյութեր, արձանագրություն 13.04.2010թ)

1.22.4. Ամբաստանյալ Գարիկ Ղազարյան (բացատրություն) - « ... Ես նորից ներս մտա Կ. Միրումյանի աշխատասենյակ որտեղ բավականին շատ ծառայողներ էին հավաքվել մեր բղավոցներից: **Տեսնելով, որ Վ. Խալաֆյանը անգիտակից վիճակում է ցույց տվեցինք առաջին բուժօգնություն մինչ շտապ-օգնության գալը**: (ծառայողական քննության նյութեր արձանագրություն 04.05.2010թ)

1.22.5. Ա.Զեյնալյանի հարցը (Վկա Սամվել Տոնոյանին) - Բղավոցը ինչ ձևով էր:
Վկայի պատասխանը, - Դե գոռացին, ես վազելով գնացի դուռը բացեցի, տեսա **Վահան Խալաֆյանը գետնին ընկած է փորը բաց ու գոռացին նաշաղիր-նաշաղիր**, ես էլ Համլետի հետ իր 06 մակնիշի ավտոմեքենայով **գնացել ենք դեղատուն գնել նաշաղիրը ու գալով բաժին տեսել եմ, որ արդեն տարել են հիվանդանոց**: (21.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 11-րդ էջ, միջնամաս)

1.22.6. Ա.Զեյնալյանի հարցը (Վկա Նորիկ Հեբոյանին) - Դուք նշեցիք, որ լսելով աղմուկը մոտեցել եք Միրումյանի կաբինետին, ասացեք խնդրեմ, ի՞նչ տեսաք:
Վկայի պատասխանը,- Տեսա **Խալաֆյանը վայր ընկած էր գետնին, օպերները առաջին բուժ օգնություն էին ցույց տալիս**:
Հաջորդ հարցը, - Ի՞նչ դիրքով էր ընկած:
Վկայի պատասխանը, - Մեջքի վրա:
Հաջորդ հարցը, - Գլուխը դեպի ո՞ւր:
Վկայի պատասխանը - Գլուխը դեպի դռան կողմը:
Հաջորդ հարցը - Այլ բան ի՞նչ տեսաք:
Վկայի պատասխանը - **Հայրապետյան Մորեսը առաջին բուժ օգնությունն էր ցույց տալիս**:
Հաջորդ հարցը - Ի՞նչ էր անում կարո՞ղ եք ասել:
Վկայի պատասխանը - **Ինչ-որ լեզուն էր կուլ գնում**…
……

Վկայի պատասխանը - **Շնչառությունը տեղը չէր գալիս**:

Հաջորդ հարցը, - **Ի՞նչ ձևով շնչառությունը տեղը չեր գալիս**:

Վկայի պատասխանը - Հայրապետյան Մորեսը օգնում էր և **բերանը բացում**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 4-րդ էջ, վերևում)

1.22.7. Ամբաստանյալ Աշոտ Հարությունյան (ցուցմունք) - « ... Իրենց Համլետի ավտոմեքենայով զուտ շտապողականության պաճառով հասցրեցի բաժին և այնտեղ **տեսա, որ Մորես Հայրապետյանը գթալը ձեռքին Վահանի բերանն էր բացում, մինչև այդ բերանն էին սեղմում, ասացի ինչա եղել, ասացին՝ ոնց որ լեզուն է կուլա գնում**, չգիտեմ, ով **ասեց, որ ինչ-որ բան չկա բերանը մի բանով բացեք, որ հետ բերեք և այդ ժամանակ հիշում եմ, որ ինչ-որ մեկը պուլսն էր պահում**: **Մորեսը գդալը վերցրեց ու անընդհատ փորձում էր բերանը բացել ու այդ պահին Վահանը մի տեսակ հետ եկավ մի պահ, ես ասացի լավա իսկ Վահանը ասաց՝ ցավումա, ցավումա**: Ու **այդ ժամանակ բժշկուհին սրսկում է**, մեկը ջուր էր շփում, մյուսը մի բան է անում, ոտքերն էին շփում ու մի խոսքով խառնաշփոթ էր ... : (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 18-րդ էջ, 2-րդ պարբերություն)

1.22.8. Վկա Գարիկ Հազեյան (ցուցմունք) - « ... Ես մոտեցա Վահանին և փորձեցի եմ առաջին բուժ օգնությունը ցույց տալ: Օգնություն և **արհեստական շնչառություն ցույց տալու ժամանակ ես զգացի, որ Վ.Խալաֆյանի բերանը փակված է և ես չկարաղացա նրան արհեստական շնչառություն տալ**: Այդ ժամանակ չեմ հիշում, թե մեր աշխատակիցներից ում խնդրեցի, որ **մի բան տան, որ Վահանի բերանը բացեմ և ատամների արանքից գոնե լեզուն հանեմ**: **Առաջին անգամ տվեցի արհեստական շնչառություն, սակայն ոչ մի օգուտ չտվեց, երկրորդ անգամ քիթը պահեցի և արհեստական բերան-բերան շնչառություն տվեցի, այդ պահին Վ.Խալաֆյանը ուշքի եկավ, աչքերը լայն բացեց նայեց ինձ** …:

1.22.9. Մեղադրող Կ.Փիլոյան հարցը (վկա Գարիկ Հազեյանին) - Դուք ասացիք, որ **չկարողացաք բերանը ձեռքով բացել և դիմեցիք աշխատակիցներին, որպեսզի ինչ-որ մի բան տան, որ բացեք բերանը**, ասացեք խնդրեմ, **տվեցի՞ն**:
Վկայի պատասխանը - Այո, այդ ժամանակ որքան հիշում եմ **գդալ տվեցին և ես ատամների արանքից բերանը բացեցի**, որից հետո **գդալն էլ գցեցի մի կողմ**: (05.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 3-րդ էջ, միջնամասում)

1.22.10. Ամբաստանյալ Ա.Հարությունյանի հարցը (վկա Գարիկ Հազեյանին) - Դուք ասացիք, որ **բերանը փակվել էր**, ձեռքով փորձեցի՞ք բացել:
Վկայի պատասխանը - Ձեռքով փորձեցի, բայց չկարողացա:
.....
Հաջորդ հարցը - **Միա՞յն ատամներն էր փակված, թե՞ շրթունքներն էլ**:
Վկայի պատասխանը - **Ատամներն էր սեղմած**: (05.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 9-րդ էջ, 19-րդ պարբերություն ներքևից)

1.23. Խալաֆյանի մոտ վնասվածքը ստանալուց հետո տեղի է ունեցել ակամա դեֆեկացիա, ակամա միզարձակություն և փսխում:

Ակամա դեֆեկացիա տեղի ունենալու փաստը հաստատվում է ՀՀ ԱՆ Հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի № 166 եզրակացությամբ.

1.23.1. « 6. Փորձաքննության ներկայացրած՝ հանգուցյալ Վ.Լ.Խալաֆյանի անդրավարտիքի հետին վերին կեսին, **մայկայի թևատակերին մոտ՝ քիչ դեպի հետ և վարտիքի վրա տեղակայված կղանքանման հետքերում հաստատվեց կղանքի առկայություն, որը պատկանում է մարդու**: Կղանքի խմբային պատկանելիությունը չորոշվեց, հավանաբար, նրանց կողմից էրիթրոցիտար կախույթներում էրիթրոցիտների հեմոլիզի առաջացման պատճառով:» (№ 166 եզրակացություն, 10-րդ էջ)

Ակամա միզարձակության հանգամանքը հաստատվում է հետևյալ ապացույցների համակցությամբ.

1.23.2. «**Միզապարկը** տանձաձև, **դատարկ**, լորձաթաղանթը սպիտակամոխրավուն գույնի է» (Գորրծ, II հ, դատաբժշկական փորձաքննության եզրակացության 3-րդ թերթի (147 թ) շուրջերես, «Դիակի ներքին ուսումնասիրություն» ենթաբաժին, միջնամաս):

1.23.3. Ա.Զեյնալյանի հարցը (փորձագետ Գ. Հարությունյանին) - ... **Արդյո՞ք սա վկայում է այն մասին, որ միզապարկում չի հայտնաբերվել մեզ**:
Փորձագետի պատասխանը - **Այո**: (13.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 4-րդ էջ, 4-րդ պարբերություն՝ ներքևից)

1.23.4. Ա.Զեյնալյանի հարցը (փորձագետ Գ. Հարությունյանին) - ... Գոնե **100մլ 2-3 ժամվա ընթացքում չէ՞ր լցվի**:
Փորձագետի պատասխանը - Հնարավոր է, չեմ բացառում, մենք ունենք մնացորդային մեզ միազապարկում, մենք ինչու ենք գրում, որ դատարկ է, քանի որ այն պիտանի չի եղել անալիզ անցկացնելու համար:
Հաջորդ հարցը - **Կարո՞ղ է ակամա միազարձակության արդյունքում այն դատարկվեր**:
Փորձագետի պատասխանը - **Հնարավոր է, մենք շատ հաճախ ունենում ենք նման բաներ**: (13.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 5-րդ էջ, 4-րդ պարբերություն՝ վերևից)

Փսխման հանգամանքը հաստատվում է հետևյալ ապացույցների համակցությամբ.

1.23.5. «**Ստամոքսի** մուտքն ու ելքն ազատ է, **դատարկ**, լորձաթաղանթը՝ դժգույն մոխրագույն»: (եզրակացության 3-րդ թերթի շուրջերես, «Դիակի ներքին ուսումնասիրություն» ենթաբաժին, վերևից 16 տող)

1.23.6. Վկա Վարդան Խալաֆյանի ցուցմունքից - « **Ժամը 4-ի կողմերը կլիներ, հարցրեցի, թե թույլ կտան, որ հաց բերեմ եղբորս**, պատասխանեցին, որ այո, ես գնացի և հաց բերեցի եղբորս և մտա իր մոտ: **Ես անձամբ բրդուճները փոխանցեցի Վահանին, որն իմ ներկայությամբ բրդուճներից մեկը կիսեց և Գարիկ Դավթյանին էլ առաջարկեց ուտել, սակայն նրանք չուզեցին**:» (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 6-րդ էջ, 5-րդ պարբերություն՝ վերևից)

1.23.7. Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Գ.Մարգարյանի հարցը (Վարդան Խալաֆյանին) - Դուք ասացիք, որ երկու անգամ եք տեսել Ձեր եղբորը, ասացեք խնդրեմ **հաց տալու ժամանակ քանի՞ րոպե եք տեսել**:

Վկայի պատասխանը,- Մի քանի րոպե:

Հաջորդ հարցը,- **Ի՞նչ կերավ**:

Վկայի պատասխանը - **Բուռումներ էին**: (15.07.2010թ դատական նիստի արձանագրություն, 7-րդ էջ, միջնամաս)

1.23.8. Ամբաստանյալ Մ.Հայրապետյան (ցուցմունք) « ... Եկել և **տեսել եմ, որ հաց կա սեղանին**, Վահանը առաջարկեց ինձ հաց ուտել, ես հրաժարվեցի և **իրեն ասեցի, որ նա ուտի**»: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 15-րդ էջ, 1-ին պարբերություն՝ ներքևից)

1.23.9. Ա.Ջեյնալյանի հարցը (Ամբաստանյալ Մ.Հայրապետյանին) - **Ջուր խմե՞լ է:**

Ամբաստանյալի պատասխանը, - **Ես տվել եմ ջուրը և հացը կերել է**, ինձ էլ առաջարկեց, որ հաց ուտեմ, ես էլ հրաժարվեցի:

Հաջորդ հարցը - Ի՞նչ չշով եք տվել:

Ամբաստանյալի պատասխանը, - Կոկա-կոլայի շիշ էր: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 22-րդ էջ, 15-րդ պարբերություն ներքևից)

1.23.10. Ա.Զեյնալյանի հարցը (Ամբաստանյալ Մ.Հայրապետյանին) - **Դուք հյուրասիրվեցիք, երբ Ձեզ Վահանը հյուրասիրեց**:

Ամբաստանյալի պատասխանը,- Ոչ:

Հաջորդ հարցը,- **Ամբողջությամբ կերա՞վ Վահանը**:

Ամբաստանյալի պատասխանը - **Ոչ, բրդուճի կեսն է կերել**:

Հաջորդ հարցը - **Քանի՞ հատ բրդուճ էր**:

Ամբաստանյալի պատասխանը - **Որքան հիշում եմ երկու հատ**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 24-րդ էջ, 8-րդ պարբերություն ներքևից)

1.23.11. Ամբաստանյալ Գարիկ Դավթյան (ցուցմունք) - « ... Ես անկախ ինձանից մտա դիմացի կաբինետ՝ Միրումյանի աշխատասենյակ: Մտա Մորեսը նստած էր աջ կողմում, Խալաֆյանն էլ նստած էր ձախ կողմում: **Սեղանին դրված էր քյաբաբ, ասեցի բա խի չես ուտում ասեց, որ արդեն կերել եմ**, ես իրեն ասեցի վերցրա սեղանից, Խալֆյանն էլ վերցրեց դրեց սեյֆի վրան»: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 27-րդ էջ, 3-րդ պարբերություն վերևից)

1.23.12. Պաշտպան Ս.Սաֆարյանի հարցը (ամբաստանյալ Գագիկ Ղազարյանին) - Մինչև Ա.Հարությունյանի գալը **Վահան Խալաֆյանը հա՞ց է կերել**:

Ամբաստանյալի պատասխանը - **Այո, կերել է**, դե, ես չգիտեմ Ա.Հարությունյանը երբ է եկել: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 10-րդ էջ, 5-րդ պարբերություն՝ վերևից)

1.23.13. Պաշտպան Ս.Սաֆարյանի հարցը (ամբաստանյալ Գագիկ Ղազարյանին) - **Խալաֆյանին տվեցի՞ք երկու բրդուչ**:

Ամբաստանյալի պատասխանը - **Այո**: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 10-րդ էջ, 4-րդ պարբերություն՝ ներքևից)

1.23.14. Փորձագետի պատասխանը (Ա.Զեյնալյանի հարցին) - **Եթե լիներ քյաբաբի, մսի կտորներ, ապա ստամոքսում կհայտնաբերվեր**: Ավելին ասեմ, եթե մենք նշում են դատարկ, ապա ստամոքսն ընդհանրապես ամբողջությամբ դատարկ չի լինում:

Նախագահող դատավորի հարցը Վարդան Խալաֆյանին - Ասացեք խնդրեմ, կոնկրետ ժամը քանիսի՞ն եք տարել սնունդը /Նախագահող դատավորը հարցը ուղղեց դահլիճում նստած տուժող Վահան Խալաֆյանի եղբորը՝ Վարդան Խալաֆյանին/:

Վարդան Խալաֆյանի պատասխանը - Մոտավոր 16.10-ին իսկ դեպքը տեղի է ունեցել 16.50-17.00-ի սահմաններում:

Փորձագետի պատասխանը - **Ամեն դեպքում ես սննդի մնացորդներ ստամոքսում չեմ հայտնաբերել: Ամբողջ ընթացքում տուժողի հարազատները եղել են ինձ հետ և տեսել են, թե ես ինչպես եմ մանրակրկիտ ուսումնասիրել և ես վստահ եմ, որ իմ աչքից ոչինչ չի վրիպել:**

Հաջորդ հարցը - Հնարվո՞ր է փսխած լիներ:

Փորձագետի պատասխանը - Դիակի փորձաքննության ընթացքում բերանի շուրջ, դեմքին, փսխման զանգվածներ չեն հայտնաբերվել:

Հաջորդ հարցը - Եթե լվացած լինեին կհայտաբերեի՞ք:

Փորձագետի պատասխանը - Հնարավոր է, որ չհայտնաբերեի:

Նախագահող դատավոր - **Հարգելի փորձագետ, ի վերջո մենք այն հարցի պատասխանը չստացանք, որ այդ 40-60 րոպեների ընթացքում, հնարավո՞ր է այդ սնունդը անցած լիներ 12 մատնա կամ հաստ աղիք**:

Փորձագետի պատասխանը - **Ելնելով գրականությունից այն լինելով մսի զանգված, այդ ժամանակահատվածում ի սպառ ստամոքսից հեռացված լիներ՝ չեմ կարծում, թեկուզ մի աննշան քանակություն կլիներ**:

1.24. Խալաֆյանի դեմքը, նրա գիտակցությունը կորցնելուց հետո՝ լվացվել է:

Փաստը հաստատվում են գործում առկա և դատաքննության ընթացքում հետազոտված հետևյալ ապացույցներով.

1. Ա.Ջեյնալյանի հարցը (վկա Նորիկ Հեբոյանին) - **Ջուր շփո՞ւմ էին երեսին**:

Վկայի պատասխանը - **Այո**:

Հաջորդ հարցը - **Ջրով լվացել են և Դուք տեսե՞լ եք դա**:

Վկայի պատասխանը - **Այո**: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 5-րդ էջ, 10-րդ պարբերություն `վերևից)

2. Ա.Ջեյնալյանի հարցը (Ամբաստանյալ Մ.Հայրապետյան) - **Դուք լվացե՞լ եք Վահանի դեմքը**:

Ամբաստանյալի պատասխանը,- Ոչ:

Հաջորդ հարցը, - **Իսկ ո՞վ**:

Ամբաստանյալի պատասխանը, - **Հազեյան Գարիկը**: Ես օգնեցի Գարիկին, որպեսզի շորի թևը հանենք: (18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 24-րդ էջ, միջնամաս)

1.25. Կամո Միրումյանի աշխատասենյակում Խալաֆյանի մետ սկսվել է կլինիկական մահ՝ նրա նկատմամբ իրականացրել են վերակենդանացման միջոցառումներ, իրականացվել է սրտի մասաժ և արհեստական շնչառություն:

Փաստը հաստատվում են գործում առկա և դատաքննության ընթացքում հետազոտված հետևյալ ապացույցներով.

1.25.1. «Չարենցավանի բժշկական կենտրոնի» տնօրենի գրությունը: (գործ, II հ. 81-րդ էջ):

1.25.2. Պաշտպան Գ.Անտոնյանի հարցը (ամբաստանյալ Գագիկ Ղազարյանին) - **Օգնություն ցույց տալու ընթացքում** ո՞վ **ինչ գործողություններ էր անում, Մորեսը** կոնկրետ ի՞նչ էր անում:

Ամբաստանյալի պատասխանը - **Մորեսը բամբակը դրել էր վերքի վրա**:

Հաջորդ հարցը - **Որպեսզի արնահոսությունը դադարի՞**:

Ամբաստանյալի պատասխանը - **Արնահոսություն չկար**:

Հաջորդ հարցը - Դուք բերան-բերան շնչառություն տվե՞լ եք:

Ամբաստանյալի պատասխանը - **Ես Վահանին սրտի մասաժ էի անում, նա բացեց աչքերը խոսեց**: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 2-րդ էջ, 18-րդ պարբերություն՝ ներքևից)

1.25.3. Ա.Զեյնալյանի հարցը (ամբաստանյալ Գագիկ Ղազարյանին) - Ո՞վ ինչ գործողություններ էր անում և մասնավորապես **ո՞վ էր բերան-բերան շնչառություն տալիս**:

Ամբաստանյալի պատասխանը,- **Հիշում եմ, որ բերեն-բերան շնչառություն էին տալիս, բայց թե ո՞վ էր անում՝ չգիտեմ**: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 7-րդ էջ, 11-րդ պարբերություն՝ ներքևից)

1.25.4. Ա.Զեյնալյանի հարցը (ամբաստանյալ Գագիկ Ղազարյանին) - **Ո՞վ էր սրտի մասաժ անում**:

Ամբաստանյալի պատասխանը - **Ես**:

Հաջորդ հարցը - **Դուք սրտի մասաժ անելու փորձ ունե՞ք**:

Ամբաստանյալի պատասխանը,- **Ինձ ոստիկանությունում սովորացրել են, որ երբ սրտի կանգ է լինում, պետք է սրտի մասաժ անել**:

Հաջորդ հարցը - Դուք ստուգեցի՞ք, նա պուլս ունե՞ր:

Ամբաստանյալի պատասխանը - **Ասացին**, որ **այո**, ունի, **երբ Վահանը ուշքի եկավ, նորմալ էր**: Նրան տեղափոխեցին հիվանդանոց և նա մոտավորապես 20 րոպե, կես ժամ եղել է վիրակապարանում, ոչ թե վիրահատարանում: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 7-րդ էջ, 4-րդ պարբերություն՝ վերևից)

1.25.5. Վկա Կապրելյանցի պատասխանը (պաշտպան Ս.Սաֆարյանի հարցին) - ..... **Մենք գնացինք բաժին, մտանք սենյակ, աշխատասենակի հատակին տեսանք տուժողին անգիտակից վիճակում պառկած**: **Համարյա նա անշունչ վիճակում էր, զարկերակ չուներ**: Ես այդ ժամանակ հասկացա, որ հիվանդին անհրաժեշտ է անհապաղ տեղափոխել հիվանդանոց: Ես բուժ քրոջը հանձնարարեցի, որպեսզի երկու ներարկում կատարի: Այդ ժամանակ արդեն եկել էր շտապ օգնության մեքենան: Մենք տուժողին շտապ տեղափոխեցինք

մեքենա և մեքենայի մեջ՝ **տեղափոխման ժամանակ ես նրան անհրաժեշտ բուժ օգնություն էի ցույց տալիս՝ շնչառություն, սրտի անուղղակի մասաժ**: (01.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 2-րդ էջ, 11-րդ պարբերություն՝ ներքևից)

1.25.6. Վկայի պատասխանը (ամբաստանյալ Ա.Հարությունյանի հարցին) - **Երբ ես տեսնում եմ, որ հիվանդը համարյա մահացած է, գործնականորեն սիրտը չի աշխատում, շնչառություն չկա, հիվանդը անշարժ է, այդ պահին մենք միայն արագ ցանկանում էինք տեղափոխել հիվանդանոց**: (01.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 4-րդ էջ, 16-րդ պարբերություն՝ վերևից)

1.25.7. Ա.Ջեյնալյանի հարցը (Վկա Վալերի Կաբիրլյանցին) - **Ի՞նչ արձանագրեցիք, զարկեր կա՞ր, ֆիբրիլիացիա կա՞ր**:

Վկայի պատասխանը - Ես ասեմ, որ **ավելի շուտ զարկեր չկար, քննարկում հատ ու կենտ զարկեր կային**:

Հաջորդ հարցը - **Ձեր պայուսակի մեջ տրախիալ խողովակ կա՞ր**:

Վկայի պատասխանը - **Ոչ**:

Հաջորդ հարցը - **Այնտեղ սրտի մասաժ փորձեցի՞ք անել**:

Վկայի պատասխանը - **Այո, ես 2-3 անգամ սեղմեցի սրտին**: (01.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 5-րդ էջ, 16-րդ պարբերություն՝ վերևից)

1.25.8. Վկա Վալերի Կաբիրլյանցի պատասխանը (ամբաստանյալ Ա.Հարությունյանի հարցին) - Ես **տեսել եմ երկու վնասվածք որովայնի շրջանում**: **Տուժողը համարյա չեր շնչում, սիրտը համարյա չեր բաբախում, պառկած էր առանց շարժումների**: (01.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 3-րդ էջ, 7-րդ պարբերություն՝ ներքևից)

1.25.9. Ա.Ջեյնալյանի հարցը (Վկա Վալերի Կաբիրլյանցին) - Դուք ասացիք, որ փորձել եք **2-3 անգամ սրտի մասաժ անել**, **Ձեր ասածից հասկացանք, որ դուք սրտի մասաժ եք արել նաև շտապ օգնության մեքենայի մեջ և բերան-բերան շնչառություն եք արել, այո՞**:

Վկայի պատասխանը,- **Այո**:

Հաջորդ հարցը,- **Քանի՞ ոստիկան կային շտապ օգնության մեքենայի մեջ**:

Վկայի պատասխանը - Դժվարանում եմ ասել, բայց **երկու հոգի հաստատ կային**:

Հաջորդ հարցը,- **2-3 հոգի լինելով ոստիկանության մեքենայի մեջ, Դուք կարողանո՞ւմ էիք իրականացնել և սրտի մասաժ և բերան-բերան շնչառություն**:

Վկայի պատասխանը,- **Այո, ես երկու-երեք անգամ սեղմեցի սրտի վրա, սրտի մասաժ արեցի և մեկ անգամ էլ շնչեցի**:

Հաջորդ հարցը,- **Ձեր պատգարակը կտորի՞ց է**:

Վկայի պատասխանը,- **Այո**:

Հաջորդ հարցը,- **Եվ Դուք մասաժ արեցիք կտորից պատգարակի վրա՞**:

Վկայի պատասխանը,- **Այդ պատճառով էլ ես երկու-երեք անգամ եմ արել և միակ իմաստը եղել է, որ հնարավորին չափ արագ հասցնենք հիվանդանոց**: (01.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 5-րդ էջ, 15-րդ պարբերություն՝ ներքևից)

1.26. Դեպքի վայրը չի պահպանվել և դրա պատկերն աղավաղվել է

Հանգամանքը հաստատվում է հետևյալ ապացույցների համակցությամբ.

1.26.1. Դանակը հայտնաբերվել է, ոչ թե գետնից, որտեղ, ըստ ցուցմունքների այն ընկել էր, այլ պահարանից (գործ, I հ. 5-8 էջեր, «Դեպքի վայրի զննության» արձանագրություն): Համաձայն «Դեպքի վայրի զննության» արձանագրության, դանակը գետնից վերցրել և պահարանի մեջ է դրել Գագիկ Ղազարյանը՝ վերցնելով «բռնակի եզրային մասերից»:

Համաձայն ՀՀ Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի փորձագետի կողմից թիվ 66101210 քր. գործով՝ դատահետքաբանական փորձաքննության № 11411002 եզրակացության և փորձագետ Ջ. Սահակյանի տրված պարզաբանումների՝ բացի դանակի շեղբից, դանակի բռնակի վրա

բացակայում են քրտնաճարպային հատվածներ՝ թեկուզ և համեմատական հետազոտություն կատարելու համար ոչ պիտանի: Մատնահետքեր հայտնաբերվել են դանակի շեղբի՝ բռնակին հարող հատվածի վրա, որոնք իրենց մեջ պարունակել են աննշան պապիլյար գծանախշերի առանձին հատվածների հետքեր, սակայն պիտանի չեն եղել համեմատական հետազոտություն կատարելու համար:

1.26.2. <u>Վկա Գարիկ Հազեյանի</u> ցուցմունքից ... « ….Այդ ժամանակ ես սկսեցի շփում կատարել Վահանի ձեռքերը և ոտքերը: Ես **Վահանի կոշիկները հանեցի և մեր աշխատակիցներին խնդրեցի, որ պատուհանը բացեն, որ օդ լինի շնչելու**: Շորերը մի փոքր արձակեցի և ... »: (10.10.2010թ դատական նիստի արձանագրություն, 2-րդ էջ, 8-րդ պարբերություն՝ ներքևից):

Դեպքի վայրի զննությամբ, այդ թվում՝ լուսանկարներով, արձանագրված է, որ Կ. Միրումյանի աշխատասենյակի պատուհանները ծածկված են, վարագույրները փակված են:

1.26.3. Օգնություն ցուցաբերելու ժամանակ Խալաֆյանի դեմքը լվացվել է և Միրումյանի աշխատասենյակում օգտագործվել է ջուր՝ «Բջնի» ու «Կոկա-կոլա» և 1 հատ 1,5 լիտրանոց պոլիէթիլենային շշերով, (դեպքի վայրի զննության լուսանկարներ, մասնավորապես՝ գործի II հ. 8 և 12-րդ էջերի լուսանկար, երևում են 2 հատ 1 լիտրանոց («Բջնի» և «Կոկա-կոլա») և 1 հատ 1,5 լիտրանոց պոլիէթիլենային դատարկ շշեր:

Սակայն, լուսանկարներում նշմարվող աշխատասենյակի հատակին առկա չէ այդ քանակի օգտագործված ջրին բնորոշ լճակ:

1.27. Նախաքննության փուլում՝ **նախաքննության մարմինն ուսումնասիրվել է միայն Խալաֆյանի ինքնասպան լինելու վարկածը. չի իրականացվել փորձարարության պարզելու համար, հնարավո՞ր էր արդյոք 260,0 սմ, 190 սմ, 220 սմ հեռավորության վրա գտնվող անձանց ներկայությամբ՝**

1.27.1. բացել պահարանի դուռը, պահարանից աջ ձեռքով վերցնել խոհանոցային դանակը,

1.27.2. ոտքի կանգնել,

1.27.3. ձախ ձեռքով բարձրացրել ժակետը, բլուզը և տաբատի և վարտիքի մեջ դրված շապիկը,

1.27.4. այնուհետև դանակի սուր ծայրով որովայնի ողջ երկայնքով՝ ձախից-աջ երկու ճանկռվածք անել,

1.27.5. որից հետո դանակով հարվածել պորտից 1,0 սմ վար, միջին գծից դեպի աջ (դանակը հյուսվածքների մեջ խրվել է 3,0 սանտիմետր),

1.27.6. դանակը հանել հյուսվածքների միջից,

1.27.7. հարվածել երկրորդ անգամ՝ պորտից 1,5 սմ վեր, միջին գծից դեպի աջ հատվածում (դանակը Խալաֆյանի հյուսվաածքների մեջ խրվել է 10-12 սմ),

1.27.8. դանակը դուրս է քաշել որովայնից,

և ներկաները փորձեն հասնել ենթադրյալ գործողությունների հեղինակին միա՛յն վերջինիս կողմից դանակը 12 սմ հյուսվածքների միջից դուր քաշել հանելուց, ձեռքից գցելուց և գիտակցությունը կորցնելուց հետո:

1.28. Դատաքննության ընթացքում՝ 18.09.2010թ, դատարանին ներկայացվել է միջնորդություն՝ փորձարարություն կատարելու մասի որպեսզի պարզի **հնարավոր է արդյո՞ք վերը նկարագրված դեպքերը, նկարագրված հանգամանքներում, նկարագրված հաջորդականությամբ, նկարագրված ժամանակահատվածներում կարող էին տեղի ունենալ, թե՞ ոչ**:

Միջնորդությամբ պահանջվել էր.

1.28.1. կատարել քննչական փորձարարություն՝ սույն միջնորդության տեքստում նկարագրված դեպքերը, նկարագրված հանգամանքներում, նկարագրված հաջորդականությամբ, նկարագրված ժամանակահատվածներում տեղի ունեցած լինել-չլինելու հանգամանքը ստուգելու և ճշտելու նպատակով,

1.28.2. քննչական փորձարարության պայմաններն առավելագույնը կատարվածին մոտ լինելու նպատակով, այն կատարել սույն միջնորդության տեքստում նկարագրված գործողությունների, դեպքերի և իրադարձությունների կատարման վայրում՝ ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետի սենյակում (կարիք չի լինի գտնել սենյակ, կահավորել այն և այն),

1.28.3. քննչական փորձարարության արդյունքների օբյեկտիվ լինելու նպատակով, դրա կատարմանը ներգրավել գործի ելքով չշահագրգռված կամավորների, ուսանողների կամ դատական ծառայողների,

1.28.4. քննչական փորձարարության ընթացքը տեսագրել:

1.29. Նախագահող դատավորը արձանագրային որոշմամբ մերժել է քննչական փորձարարության կատարելու մասին միջնորդությունը՝ մեխանիկորեն հիշատակելով դատավարական նման գործողություն կատարելը նախատեսող՝ ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 242-րդ հոդվածին:

1.30. Դատարանում Կամո Միրումյանի տրված ցուցմունքից հետո՝ 27.08.2010թ, դատաքննության ընթացքում ամբաստանյալ Աշոտ Հարությունյանը ցուցմունք տվեց այն մասին, որ խոհանոցային պարագաները (գդալներ և այն) պահարանում գտնվել են բանկայի մեջ և ոչ թե դարակի վրա ուղղակի դրված:

1.31. Դատաքննության ընթացքում՝ 18.09.2010թ, դատարանին ներկայացվել է միջնորդություն կրկին անգամ դատարան հրավիրելու և հարցաքննելու հարցաքննված վկաներ Ս.Տոնոյանին, Կ.Միրումյանին:

1.32. Նախագահող դատավորը մերժել է միջնորդությունը այն հիմնավորմաբ, որ այն չի բղում ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 353-րդ հոդվածից (դատաքննության ավարտը):

1.33. Դատավարության դատական վիճաբանությունների փուլում դատարանին ներկայացվել է պահանջ՝ որպեսզի

Դատարանը ճանաչի Վահան Խալաֆյանի իրավունքների խախտման փաստը: Տվյալ դեպքում խոսքը ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի, արդար դատաքննության իրավունքի, կյանքի իրավունքի, խոշտանգումներից ու անմարդկային վերաբերմունքից ազատության իրավունքի խախտման մասին է, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրության համապատասխանաբար 16, 18, 19, 20, 15 և 17-րդ և Կոնվենցիայի 5, 6, 3 և 2-րդ հոդվածներում:

1.34. Դատարանը դատավճռում չի անդրադարձել Խալաֆյանի իրավունքների խախտման փաստը ճանաչելու մասին տուժողի պահանջին՝ չի բավարարել կամ չի մերժել այն:

1.35. Դատավարության դատական վիճաբանությունների փուլում դատարանին ներկայացվել է Խալաֆյանի կողմից ինքնավնասումը և ինքնասպանությունը բացառող հանգամանքներ, փաստարկներ և դրանցից բխող հետևություններ.

1.35.1. Ըստ դեպքին ականատես ամբաստանյալների վկայության՝ նրանք տեսել, լսել են պահարանի դռան բացվելը, տեսել են ձեռքը պահարանի մեջ մտցնելու պահը, տեսել են դանակը պահարանից հանելու պահը, տեսել են դանակը Խալաֆյանի ձեռքի մեջ, հասցրել են նկատել դանակի բռնելու ձևն ու դանակի դիրքը, տեսել են նրա ոտքի կանգնելը: Հենց որ տեսել են, թե նա ինչպես է ձախ ձեռքով բարձրացնում հագուստը՝ Մորես Հայրապետյանը «վազքով մոտեցել», իսկ Գ. Դավթյանը «թռել է» տեղից, որպեսզի թույլ չտան ինքն իրեն վնասի: Սակայն Խալաֆյանին հասել են այն ժամանակ երբ նա արդեն դանակը որովայնից դուրս է քաշած եղել և այդ ամենը տևել է 1-2 վայրկյան: Ըստ ամբաստանյալների՝ նրանք ջանք չեն խնայել, որպեսզի թույլ չտան Խալաֆյանին վնասել իրեն: Ամբաստանյալներն՝ իրեն վնասելու ակնհայտ մտադրություն ունեցող Խալաֆյանիցս գտնվել են 260,00 և 190,00 սանտիմետր հեռավորության վրա (գործ, I հատոր զննության արձանագրություն, 64-83 էջեր, էջ 67), սենյակում՝ շուրջ 240,00-260,00

սանտիմետր հեռավորության վրա է գտնվել Գարիկ Ղազարյանը, ով ևս ձգտել է հասնել Վահանին ու կանխել վնասումը:

Հարցը, որը բարձրացնում եմ, հետևյալն է, կհասցնե՞ր արդյոք Խալաֆյանը 1-2 վայրկյանում կատարել այն ինքնավնասման գործողությունների ամբողջությունն, ինչն իրեն վերագրվում է: Այդ հարցին պատասխանելու համար, նախ, հարկ եմ համարում բացահայտել վնասվածքների և դրանք հասցնելու առանձնահատկությունները:

Առաջին ճանկռվածքը որովայնի առաջնային պատի վրայով ձգվում է 23,0 սմ, այն գրեթե հորիզոնական է: Երկրորդ ճանկռվածքը սկսվում է ձախ անութային գծից 15-20^0 բութ անկյան տակ իջնում է ներքև՝ ձգվելով 4 սմ, այնուհետև ճանկռվածքը 4,0 սմ-ով ընդհատվում է և 15-20^0 սուր անկյան տակ (130-140^0 անկյան սեպի տեսքով) բարձրանում վերև՝ առաջին 9,0 սմ ինտենսիվ և ընդհանուր առմամբ որովայնի առաջնային պատի վրայով ձգվելով 34 սմ: Որից հետո հորիզոնի հարթության նկատմամբ 15-20^0 անկյամբ բռնած դանակի անկյունը փոխվում է՝ «ժամաթվատախտակի ժամը «11-5» անկյունագծին համապատասխան», այսինքն հորիզոնի հարթության նկատմամբ՝ 80^0 անկյամբ, կատարված է առաջին հարվածը (համարակալված՝ որպես վերք թիվ 2): Դանակը որովայնից հանելուց հետո դարձյալ դանակի անկյունը փոխված է՝ «ժամաթվատախտակի ժամը «2-8» անկյունագծին համապատասխան», այսինքն հորիզոնի հարթության նկատմամբ՝ 45^0 աստիճանի անկյամբ, սակայն հակառակ ուղղությամբ. 1-ին վերքի նկատմամբ անկյունը փոխված է շուրջ 125^0 աստիճանով՝ (համարակալված՝ որպես վերք թիվ 1):

Լուսանկարներում պատկերված վնասվածքները և բացահայտված առանձնահատկություններով վնասվածք հասցնելու համար, միջին հնարավորությունների տեր մարդուն, որպիսին հանդիսացել է Խալաֆյանը, կպահանջվեր շատ ավելի երկար ժամանակ, քան նկարագրվում է: Ուստի, ամբաստանյալների ջանքերը կպսակվերին հաջողությամբ. Վահանն իրեն չէր հասցնի Վնասվածքներ պատճառել.

Հետևություն Խալաֆյանը ինքն իրեն-իրեն վնասվածքներ չի պատճառել:

1.35.2. Նախորդ փաստարկում բացահայտած՝ Խալաֆյանի որովայնի առաջնային պատի վրա առկա վնասվածքներից ոչ մեկը, առկա առանձնահատկություններով, մյուսին չի կրկնում: Դիտենք գունավոր լուսանկարներում 1-ին և 2-րդ ճանկռվածքների ինտենսիվությունը, դրանք ոչ միայն միմյանցից են ակնհայտորեն տարբերվում, այլ նաև **նույն ճանկռվածքի տարբեր հատվածներ տարբեր ուժգնության ներազդեցության հետևանք են**, դրանք՝ մտադրությունն իրականացնելու և խոչընդոտելուց խուսափելու նպատակ ունեցող անձնավորության կողմից չե՛ն կատարված: Մտադրությունն իրականացնելու և խոչընդոտելուց խուսափելու նպատակ ունեցող անձի կողմից հասցված լինելու դեպքում ճանկռվածքները և վերքերը կլինեին զուգահեռ, առանց անկյունները փոփոխելու և ճանկռվածքները կլինեին անընդհատ ո՛ւ միատար ո՛ւ միևնույն ինտենսիվության:
Հետևություն Խալաֆյանը ինքն-իրեն վնասվածքներ չի հասցրել:

1.35.3. Ըստ ամբաստանյալների, Խալաֆյանը մինչև դանակով ինքն-իրեն վնասելը, ձախ ձեռքով բարձրացրել է հագուստը: Վահանի վրա եղել են հետևյալ վերնահագուստները, վարտիք, ուսաժապավեններով մայկա, անդրավարտիք, սվիտեր և ժակետ (գործ I հատոր, էջ 293, Փորձագետի եզրակացություն, 18.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 16-րդ էջ, 4-րդ պարբերություն՝ վերևից, ամբաստանյալ Մ.Հայրապետյան (ցուցմունք)):

Համաձայն փորձագետի դատահետքաբանական եզրակացության, Խալաֆյանի սվիտերի ձախ թևքատակի պատռվածքից բացի նրա հագուստների վրա չկա որևէ այլ վնասվածք: Այսինքն, դանակը Խալաֆյանի որովայնին հասնելուց առաջ չի ծակել նրա հագուստները: Ցուցմունքներից հետևում է, որ Խալաֆյանը որովայնը մինչև վերստամոքսային հատվածը մերկացնելու համար մեկ՝ ձախ ձեռքով պետք է բարձրացներ ժակետը, սվիտերը և վարտիքի ու անդրավարտիքի մեջ դրված մայկան, ընդորում՝ առանց անդրավարտիքի գոտին արձակելու: Սա պետք է կատարեր մեկ ձեռքով, որովհետև մյուս ձեռքը զբաղված էր դանակը բռնելով: Այս գործողությունները մեկ ձեռքով կատարել շատ բարդ է ու անհավանական է, իսկ կատարելու դեպքում կպահանջվեր երկար ժամանակ: Անհավանական է,

որ Խալաֆյանը դրանք կատարել է, իսկ նրան փորձել են խոչընդոտել ամբաստանյալները՝ մեկը «անմիջապես վազելով», մյուսը՝ «տեղից թռնելով»:

Խալաֆյանի վերագրվող և նկարագրված տրամաբանական գործողությունների արդյունքում **որովայնը մերկացնելու վրա ծախսվելիք ժամանակը պետք է գումարել վնասվածքները հասցնելու վրա ծախսված ժամանակի վրա, քանի որ ըստ ցուցմունքների ամբաստանյալների կողմից խոչընդոտելը փորձելու մեկնարկը եղել է ձեռքում դանակը տեսնելու պահից**:

Հետևություն Խալաֆյանը իր որովայնը չի մերկացրել և ինքն-իրեն վնասվածքներ չի հասցրել:

1.35.4. Համաձայն փորձագետի դատահետքաբանական եզրակացության, Խալաֆյանի սվիտերի ձախ թևքատակի պատռվածքից բացի նրա հագուստների վրա չկա որևէ այլ վնասվածք: Այսինքն, դանակը Խալաֆյանի որովայնին հասնելուց առաջ չի ծակել նրա հագուստները: Վահանի որովայնի առաջային պատին աջ վերզստափոսային շրջանում, պորտի մակարդակից 1,0 սմ վարի՝ պայմանականորեն II թվագրված վերքը, գտնվում է գոտկատեղից՝ զստոսկրի կատարից ներքև: Անդրավարտիքի գոտին նստում է գոտկատեղին՝ զստոսկրի կատարի վրա (տես լուսանկարը): Որպեսզի Խալաֆյանը ինքն իրեն հասցներ II թվագրված վերքը, նա պետք է իջեցներ անդրավարտիքը, իսկ մինչ այդ՝ արձակեր գոտին. նման հանգամանք գործով չի շրջանառվում, ուստի՝ այս տարբերակը բացառվում է: Երկրորդ տարբերակն այն է, որ դանակը պետք է իր որովայնը խրեր՝ ծակելով գոտին, այնուհետև անդրավարտիքը կամ միայն անդրավարտիքն ու վարտիքը: Երկրորդ տարբերակը ևս բացառվում է քանի որ Խալաֆյանի որևէ հագուստի վրա, այդ թվում՝ նրան վերագրվող ծակած վերքերի պրոյեկցիայով, վնասվածքներ չկան: **II թվագրված վերքը ստանալու միակ տարբերակն այն է, որ վերքը Խալաֆյանի հասցվել է անդրավարտիքի գոտին արձակելուց, դրա կոճակն քանդելուց ու շղթան իջեցնելուց հետո:**

Հետևություն. Խալաֆյանը իր որովայնը չի մերկացրել և ինքն-իրեն վնասվածքներ չի հասցրել:

1.35.5. Բազմաթիվ ցուցմունքներում նկարագրվում է, որ դանակը գտնվել է Խալաֆյանի ձեռքում, վայր է ընկել նրա ձեռքից: Այլ ցուցմունքների համաձայն, «որևէ այլ մարդու ձեռքում չի գտնվել»: Խալաֆյանի ձեռքից ընկել է գետնին:

Սակայն դանակը հայտնաբերվել է, ոչ թե գետնից, որտեղ ընկել էր այն, այլ պահարանից (գործ, I հ. 5-8 էջեր, «Դեպքի վայրի զննության» արձանագրություն): Համաձայն «Դեպքի վայրի զննության» արձանագրության, դանակը գետնից վերցրել և պահարանի մեջ է դրել Գագիկ Ղազարյանը՝ վերցնելով «բռնակի եզրային մասերից»:

Համաձայն ՀՀ Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի փորձագետի կողմից թիվ 66101210 քր. գործով՝ դատահետքաբանական փորձաքննության № 11411002 եզրակացության և փորձագետ Ջ. Սահակյանի տրված պարզաբանումների՝ **բացի դանակի շեղբից, դանակի բռնակի վրա բացակայում են քրտնաճարպային հատվածներ՝ թեկուզ և համեմատական հետազոտություն կատարելու համար ոչ պիտանի:** Մատնահետքեր հայտնաբերվել են դանակի շեղբի՝ բռնակին հարող հատվածի վրա, որոնք իրենց մեջ պարունակել են աննշան պապիլյար գծանախշերի առանձին հատվածների հետքեր, սակայն պիտանի չեն եղել համեմատական հետազոտություն կատարելու համար:

Եթե դանակը գտնվել է Խալաֆյանի ձեռքում, ապա պետք է դանակի բռնակի վրա մնացած լիներին նրա մատնահետքերը, կամ դանակի բռնակի վրա պետք է լինեին պապիլյար գծանախշերի հատվածների հետքեր, թեկուզ՝ համեմատական հետազոտություն կատարելու համար ոչ պիտանի՝ ճիշտ այնպես, ինչպես դանակի շեղբի՝ բռնակին հարող հատվածի վրա է առկա: Դանակի բռնակի «եզրային մասի» վրա առնվազն մատնահետքեր պետք է թողած լիներ՝ այն գետնից բարձրացնող և դարակի մեջ դնող անձնավորությունը: **Մատնահետքերը դանակի բռնակի վրայից անհետանալու միակ բացատրությունը՝ դրանց մաքրելն է:** Դրանք ցնդել չէին կարող, քանի, որ ցնդելու դեպքում ցնդած կլիներին նաև դանակի շեղբի՝ բռնակին հարող հատվածի վրա հայտնաբերված մատնահետքերը: Ուստի՝

դանակը գտնվել է երրորդ անձի (կամ անձանց) ձեռքերում ով (ովքեր) իր ինքնությունը թաքցնելու նպատակով մաքրել է(են) մատնահետքերը: Հետևաբար, եթե դանակը գտնված լիներ Խալաֆյանի ձեռքում՝ կարիք չէր առաջանա մատնահետքերը մաքրելու, ավելին, դա խոսուն ապացույց կլիներ այն բանի, որ առնվազն դանակը նրա ձեռքում եղել է: Ակնհայտ է, որ ինչ որ մեկը ձգտել է թաքցնել դանակն իր ձեռքում գտնվելու հանգամանքը:

Հետևություն. Դանակը Խալաֆյանի ձեռքում չի եղել, նա խնդրո առարկա դանակով ինքն-իրեն վնասվածքներ չի հասցրել:

1.35.6. **Որպեսզի Խալաֆյանի մոտ ակամա դեֆեկացիայից հետո նրա հագի մայկայի թևատակերը ներծծվերին կղանքով**, ինչն արձանագրել է դատահետքաբանը, **ապա նա պետք է գտնվեր առնվազն հորիզոնական վիճակում** (կամ գլխիվայր) **և գոյություն ունենար վարտիք/անդրավարտիք-մայկա խողովակ, որպեսզի հեղուկը՝ խյուսը, հոսեր դրա մի ծայրից՝ մյուսը**: Սակայն, ըստ ցուցմունքների, Խալաֆյանը կանգնած վիճակում՝ ձախ ձեռքով բարձրացրել է հագուստները, մերկացրել է որովայնի առաջնային պատը, որպեսզի ինքն-իրեն հասցնի մարմնական վնասվածքներ՝ դրանով խախտելով վարտիք/անդրավարտիք-մայկա խողովակի ամբողջականություն: **Եթե Խալաֆյանը կանգնած վիճակում մայկան հանել է անդրավարտիքի տակից** (դանակի ծայրով արված 1-ին ճանկռվածքը վերստամոքսային (էպիգաստրալ) հատվածում է), **ապա անհնար էր, որ նրա մայկայի թևատակերը ներծծված լիներին կղանքով**: Սրանք երկու հակադիր մտքեր են, որոնք չեն կարող միաժամանակ ճշմարիտ լինել: Սակայն փաստ է, որ Խալաֆյանի մոտ ակամա դեֆեկացիայից հետո նրա հագի մայկայի թևատակերը ներծծված են սեփական կղանքով: Հետևաբար ճշմարիտ չի այն վարկածը, ըստ որի Խալաֆյանը է ինքն-իրեն դանակով վնասել: **Նրա որովայնը մերկացվել է ավելի ուշ, երբ ան, պառկած է եղել հատակին** ու, այս պահին էական չի, թե ի՞նչ պատճառով, այլևս չի կարողացել դիմադրել ոչնչի:

Հետևություն.

Կատարվածն ինքնավնասման կամ ինքնասպանության նմանակում է:

1.35.7. Գործում, այդ թվում՝ դատաքննության ընթացքում տրված ցուցմունքներում առկա են աներկբա վկայություններ այն մասին, որ Խալաֆյանի իրականացվել է սրտի մասաժ և արհեստական շնչառություն:

Կասկածից վեր է, որ Խալաֆյանի սիրտը ենթարկել են անուղղակի մասսաժի և իրականացրել են արհեստական շնչառություն:

Թե բժշկական մասնագիտացված, թե ոչ մասնագիտացված, հանրամատչելի թե, արտակարգ իրավիճակների հետ առնչվող մասնագիտական ձեռնարկներում կգտնեք այն հարցի պատասխանը, թե՞ որն է սրտի անուղղակի մասաժ իրականացնելու ցուցումը:

Սրտի անուղղակի մասաժ և արհեստական շնչառություն իրականացնելու միակ ցուցումը՝ սրտի կանգն է և շնչառության դադարը. այլ ցուցում՝ չկա: Այդ հմտություններին սովորեցնում են նաև ոստիկանական ուսումնական հաստատություններում:

Սիրտը սեղմելով ողնաշարի և կրծոսկրի արանքում՝ այն հաճախականությամբ, ինչ հաճախականությամբ բաբախում է կենդանի մարդու սիրտը, թոքերի մեջ փչելով օդ՝ այն հաճախականությամբ, ինչ հաճախականությամբ շնչում է կենդանի մարդը, միջոցառումն իրականացնողը փորձում է վերականգնել օրգանիզմի կենսագործունեությունը, մինչև կժամանի բժշկական բրիգադը:

Իսկ **սրտի կանգի և շնչառության դադարի պահը կլինիկական մահվան փուլի սկիզբն է**, մահվան փուլերի այս դասակարգումը շատ մատչելի է. այն կգտնեք, թեկուզ բուհերի և նախարարությունների պաշտոնական ոստկայքերից:

Այսպես, փաստ է, որ Խալաֆյանի մոտ Միրումյանի աշխատասենյակում սկսվել է կլինիկական մահվան փուլը, ընդ որում՝ մինչև շտապօգնության բժշկի գալը:

Ըստ ամբաստանյալների և ոստիկան-վկաների ցուցմունքների, Խալաֆյանի մոտ դանակով հարվածին՝ շատ արագ հաջորդել է արհեստական շնչառությունը, սրտի մասաժը, այսինքն՝ կլինիկական մահը (17:10-17:15-ի սահմաններում ինքն իրեն վնասել է, 17:15 եղել է կանչը՝ շտապօգնություն, շուրջ 3 րոպեից եկել է բժիշկը):

Համաձայն եմ դատական բժիշկ-փորձագետի այն եզրակացության հետ, որ Խալաֆյանի աղիների միջընդերքի անոթների կտրվելու պատճառով մահը անմիջապես վրա չէր կարող հասնել:

Այն անոթները, որոնք կտրված են՝ զստաղու միջընդերքի զարկերակը և երակը, լուցկուց հատիկից հաստ չեն և, դարձյալ, համաձայն եմ դատական բժիշկ-փորձագետի եզրակացության այն հատվածի հետ, ըստ որի **արյան առատությունը պայմանավորված է վնասված անոթներով:** Կաթնասունների, այդ թվում՝ մարդու, մոտ էվոլյուցիայի արդյունքում ձևավորվել է արյունահոսություններից վախճանվելու՝ անհատի պաշտպանության կարևոր մեխանիզմ: Արյունահոսության պատճառով շրջանառող արյան ծավալի պակասելուն համարժեք, ընկնում է արյան ճնշումը, արդյունքում դանդաղում է արյան արտահոսքը վնասվածքից, դա նպաստում է արյան մակարդման մեխանիզմների գործելուն: Իսկ այն դեպքերում, երբ անհատը կորցրել է շրջանառող արյան ծավալի 20-40%, ապա օրգանիզմը արյան շրջանառությունից դուրս է բերում մաշկը, մկանները և աղիները, արյունն արտամղվում է փոքը շրջանով, դեպի սիրտ, ուղեղ, թոքեր: Այդ ընթացքում սրտի զարկերը հաճախանում են մինչև 140 զ/ր, զարկերակային ճնշումն ընկնում է մինչև 60 մմ/սս, շնչառությունը հաճախացած է: Այս պրոցեսը զարգանում է աստիճանաբար և ձգվում է ժամեր:

Սակայն շտապօգնության բժիշկը մի քանի րոպե հետո արձանագրել էր ճնշման, սրտի զարկերի շնչառության բացակայության:

Հետևություն

Խալաֆյանի մահվան պատճառը որովայնի առաջնային պատի «I վերքը» չէ:

1.35.8. Խալաֆյանը վնասվածքը ստանալուց անմիջապես հետո գիտակցությունը կորցրել է, բերանը «փակվել է», այսպես ասված լեզուն կուլ է գնացել, խռխռացրել է, նրա մոտ տեղի է ունեցել ակամա դեֆակացիա, միզարձակություն, փսխում:

Այս ախտանիշները գանգուղեղային ծագում ունեն:

Դատաբժշկական փորձաքննության եզրակացությունում արձանագրված է.

« ... գլխի մաշկի տակ գագաթային շրջանում առկա է անկանոն ձևի, ոչ ինտենսիվ արտահայտված կարմրավուն գույնի արյունազեղում 6,0 x 4,0 սմ չափսերով (եզրակացության 3-րդ թերթ, «Դիակի ներքին ուսումնասիրություն» ենթաբաժին):»

Մեր ձեռքի տակ են դատաբժշկական փորձաքննության եզրակացության գունավոր որակյալ լուսանկարները, որոնք կարողացանք ստանալ սույն գործով նախագահող դատավորի ակտիվ աջակցությամբ:

Դիտենք գործի II հատորի 155, 156-րդ էջի լուսանկարները: Գունավոր լուսանկարների վրա, բացի գանգի գագաթային հատվածի մաշկի տակի արյունազեղումից, երևում են գանգի ճակատային շրջանի մաշկի տակի արյունազեղումներ:

Դիտենք գործի II հատորի 156-րդ էջի ստորին լուսանկարում պատկերված է ուղեղը, գունավոր լուսանկարի վրա՝ ուղեղի փափուկ թաղանթների տակ երևում են արյունազեղումներ:

Այս մարմնական վնասվածքները համարվում են ծանր մարմնական վնասվածքներ, որոնք ժամանակին և որակյալ մասնագիտացված օգնություն չցուցաբերելու դեպքում, կհանգեցնեն մահվան:

Հետևություն

Փաստերի, փորձագիտական եզրակացությունների, այդ թվում տուժողի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ իր նկարագրական մասով և հավելվածներով հանդերձ, գնահատելով և հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ, համադրելով դրանք մատչելի գիտական աղբյուրների տվյալների հետ՝ հանգում եմ հետևության, որ Խալաֆյանը ինքնասպանություն չի գործել, նրան սպանել են: Վահան Խալաֆյանը ստացած ծանր մարմնական վնասվածքների պատճառով գտնվել է անգիտակից վիճակում: Թաքցնելու համար կատարված հանցագործությունը, նրան շտապ բուժօգնություն ցուցաբերելուն ուղղված գործողություններ կատարելու փոխարեն, կատարել են գործած հանցագործությունը թաքցնելուն ուղղված գործողություններ: Մերկացրել են նրա որովայնի առաջնային պատը, դանակով հասցրել են այնպիսի մարմնական վնասվածքները և այն ձևով, որպեսզի ինքնասպանության պատրանք ստեղծի նախաքննության մարմնի մոտ: Այնուհետև հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով մաքրել են դանակի վրայի մատնահետքերը, փսխուկի հետքերը, աղավաղել են դեպքի վայրի պատկերը: Ստացված մարմնական վնասվածքներից Խալաֆյանը մահացել է:

1.36. Խալաֆյանի կողմից ինքնավնասումը և ինքնասպանությունը բացառող հանգամանքներին, փաստարկներին դատարանը դատավճռում չի անդրադարձել, դրանք չի հերքել:

.....

Դատաքննության փուլում Ա. Հարությունյանը ցուցմունք տվեց, ըստ որի.

1. <u>Ամբաստանյալ Աշոտ Հարությունյան</u> (ցուցմունք) - « ... միջանցքից դմբդմբոց, աղմուկի ձայներ լսեցինք և չեմ հիշում, ոնց որ Դավթյան Գարիկն էր ասեց, թե ես ինչ արեցիր: Ես դուրս եկա և վազելով գնացի տեսա, որ Գագիկ Ղազարյանը դուրս եկավ Միրումյանի աշխատասենյակից և գոռումա շտապ օգնություն: **Մտա ներս տեսա, որ**

Վահան Խալաֆյանը պառկածա գետնին, որովայնը լրիվ հանված ու այդ հատվածում տեսա ծակած տեղ ու արյուն է գալիս: Այդ ժամանակ **Մորեսը դանակը ձեռքին ասաց, որ սրանով իրան խփեց** ու այդ ժամանակ խառնված ես հարցնում եմ՝ շտապ օգնություն կանչեցի՞ք, ասացին զանգել ենք»: (20.08.2010թ դատական նիստի արձանագրություն, 18-րդ էջ, միջնամաս)

Այնուհետև մի քանի անգամ Հարությունյանն իր հայտարարություններում կրկնել է իր ցուցմունքում նկարագրածը, ըստ որի դանակը Մորեսի ձեռքին տեսել է և վերջինս զգացել է, թե դանակն ինչպես մտավ Վահանի որովայնը: Այն հանգամանքը, որ Խալաֆյանը ինքնասպան չի եղել և, որ դանակը այլ անձի ձեռքում եղել է ու դրա վրայի մատնահետքերը մաքրվել են, համակցվում է Ա. Հարությունյանի ցուցմունք-ապացույցի հետ: Գտնում եմ հաստատված այն փաստը, որ դանակը Խալաֆյանի որովայնը մտցրել է Մորես Հայրապետյանը: Իսկ որովայնի վրայի ճանկռվածքները, որպես ինքնավնասման պատրանք թողնելու միջոց, Մորես Հայրապետյանը վերցրել է իր պրակտիկայից: Խալաֆյանի հետ կատարված դեպքից առաջ՝ 25.02.2010թ Մորես Հայրապետյանի ներկայությամբ մեկ այլ գործով կասկածյալ՝ Խաչիկ Հովսեփյանը, աշխատասենյակի պատուհանի կոտրած ապակու կտորով իր որովայնի վրա երկու զուգահեռ ճանկռվածքներ է քաշել:

Ըստ տուժողի ներկայացուցիչների՝ Մ. Հայրապետյանի մասով ամբողջանում է սպանություն հոդվածի, հատկանիշների ամբողջությունը և դրա ծանրացուցիչ հանգամանքի հատկանիշը՝ այլ հանցանքը թաքցնելու նպատակը (ՀՀ «Քրեական» օրենսգրքի 104-րդ, 2-րդ մասի 11-րդ ենթակետի):

Ըստ տուժողի ներկայացուցիչների, մեղք են գործել նաև Գարիկ Դավթյանը, Գագիկ Ղազարյանը: Նրանք ներկա են գտնվել, առնվազն ականատես են եղել կատարվածին, ամեն ինչ արել են և շարունակում են անել՝ տվել են և տալիս են սուտ ցուցմունք այն մասին, որ Խալաֆյանը ինքնավնասում, այնուհետև ինքնասպանություն է գործել և ոչ թե նրան հասցվել է մարմնական ծանր վնասվածք, իսկ հետո այդ հանցագործությունը թաքցնելու նպատակով ինքնասպանություն նմանակում է իրականացվել: Գարիկ Դավթյանը, Գագիկ Ղազարյանը իրենց սուտ

ցուցմունքներով նպաստում են, որպեսզի չբացահայտվի ճշմարտությունը՝ հանցագործության ավարտման փուլում կատարողին օգնություն են ցույց տվել հանցագործության ավարտման ռեալ (իրական) հնարավորություններ ստեղծելու միջոցով, ինքնասպանության պատրանք ստեղծելու ձևով: Այլ կերպ ասած պարտակել են հանցագործին: Ըստ տուժողի ներկայացուցիչների, Գարիկ Դավթյանը, Գագիկ Ղազարյանը պետք է պատասխանատվության ենթարկվեն նույն հոդվածով՝ ինչ Մ. Հայրապետյանը (ՀՀ «Քրեական» օրենսգրքի 38-րդ հոդվածին հղումով):

1.37. Հայաստանի քրեադատավարական օրենսադրությունը տուժողներին (նրանց փաստաբանին) դատավարական իրավունք չի նախատեսում, որպեսզի վերջիններս իրենց համոզմունքների համապատասխան մեղադրանք առաջադրեն ամբաստանյալներին և պաշտպանեն այդ մեղադրանքը: Տուժողներին՝ ամբաստանյալներին մեղադրանքը ներկայացնելու դատավարական իրավասության բացակայությունը, մեր կարծիքով խախտում է տուժողների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

1.38. Սույն գործով վերաքննիչ բողոք են ներկայացրել դստարսնեում մռղադրանքը պաշտպանած դատախազները, ամբաստանյալ Աշոտ Հարությունյանի ներկայացուցիչը և տուժողի ներկայացուցիչը:

1.39. Դատախազներն իրենց բողոքով պահանջում են, որպեսզի Վերաքննիչ դատարանը մեղադրական դատավճիռ կայացնի Գարիկ Դավթյանի, Գագիկ Ղազարյանի նկատմամբ:

1.40. Աշոտ Հարությունյանի ներկայացուցիչը իրենց բողոքով պահանջում են, որպեսզի Վերաքննիչ դատարանը դատավճիռը բեկանի և ուղարկի առաջին ատյանի դատարան այլ կազմով քննության:

1.41. Խալաֆյանի ներկայացուցիչները իրենց բողոքով պահանջում են, որպեսզի Վերաքննիչ դատարանը սահմանի վերաքննության կարգ, ճանաչի Վահան Խալաֆյանի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման

փաստը, արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը, խոշտանգումներից ու անմարդկային վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը, կյանքի իրավունքի խախտման փաստը, բեկանի ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԿԴ0078/01/10 գործով 29.11.2010թ դատավճիռը և փոփոխի այն (Աշոտ Հարությունյանի պատիժը մեղմացնի, Մորես Հայրապետյանի նկատմամբ կիրառի ազատազրկման ձևով ընտրված պատիժ, Գարիկ Դավթյանին և Գագիկ Ղազարյանին մեղավոր ճանաչի այն հանցագործության կատարման մեջ՝ ինչ մեղադրանք առաջադրված եղել էր): Միևնույն ժամանակ դատարանից պահանջել են կատարել քննչական փորձարարություն (առաջին ատյանի դատարանում մերժված միջնորդությունը), դատարան հրավիրել և կրկին հարցաքննել Կամո Սերգեյի Միրումյանին և Սամվել Պարգևի Տոնոյանին:

ԴԱՎԱՆԱՆՔԻ և ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը ամրագրում է խղճի և դավանանքի ազատությունը: Սակայն օրենսդրությամբ կան որոշ սահմանափակումներ կրոնական փոքրամասնությունների հանդեպ: 2010թ.-ի դեկտեմբերի 31-ի տվյալներով, Հայաստանում պետականորեն գրանցված է 66 կրոնական կազմակերպություն: "Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին" օրենքի համաձայն՝ գրանցումը պարտադիր է, եթե տվյալ կրոնական կազմակերպությունը մտադրություն ունի ծավալել այնպիսի գործունեություն, որը նախատեսված է օրենքով:

Սահմանադրությունը ճանաչում է "Հայաստանյայց Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում": Սահմանադրությամբ և խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքով սահմանվում է եկեղեցու և պետության տարանջատումը, բայց Հայաստանյայց Եկեղեցուն շնորհվում է ազգային եկեղեցու պաշտոնական կարգավիճակ: Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Եկեղեցու հարաբերությունների մասին 2007թ. օրենքով կարգավորվում են պետության և Հայաստանյայց Եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունները և արտոնություններ են ընձեռնվում, որոնք չեն գործում մյուս կրոնական կազմակերպությունների հանդեպ: Օրենքը իրավունք է վերապահում Հայաստանյայց Եկեղեցուն ունենալ մշտական ներկայացուցիչներ հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, զորամասերում, մինչդեռ "խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին" օրենքի համաձայն՝ մյուս կրոնական կազմակերպություններին իրավունք է վերապահվում ներկայացուցիչ ունենալ հիշյալ կառույցներում՝ միայն այդպիսի խնդրանք լինելու դեպքում:

Օրենսդրությամբ հասարակական կազմակերպությունների, այդ թվում և կրոնական խմբերի գրանցումը պարտադիր չէ, սակայն միայն գրանցված կազմակերպություններն են, որ ստանում են իրավաբանական անձի կարգավիճակ: Միայն գրանցված խմբերը

կարող են հրատարակել 1000-ից ավել տպաքանակով թերթեր և ամսագրեր, վարձակալել տարածք ժողովների համար, հեռարձակել հաղորդումներ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով: Գրանցման պայմաններին բավարարելու համար կրոնական կազմակերպությունները պետք է "զերծ լինեն նյութապաշտությունից և ուղղված լինեն դեպի զուտ հոգևոր ոլորտները", ունենան առնվազն 200 հոգի չափահաս հետևորդներ և առաջնորդվեն "պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի" սկզբունքներով: Գրանցման պահանջները չեն վերաբերվում ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպություններին:

Փոփոխությունների նախագիծ է նախապատրաստվում Հայաստանի Հանրապետության "խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին" օրենքում: Փոփոխությունների կարող են ենթարկվել մի քանի կետեր:

Նախապատրաստվում է նոր՝ 24-րդ հոդվածը, որը կստեղծի լայն հնարավորություններ՝ կրոնական կազմակերպությունների գործունեությունները դադարեցնելու և զրկելու նրանց իրավական կարգավիճակից:[65]

Նոր օրինագիծը մտահոգության ալիք է առաջացրել կրոնական համայնքների մեջ:

2010 թ. զեկույցը պատրաստելու ժամանակ հայտնի դարձավ, Արդարադատության նախարարության նախարար Հրայր Թովմասյանի խորհրդական Նորա Սարգսյանի՝ Forum 18-ին տված հարցազրույցի մասին: "Մենք ընդունում ենք, որ նոր օրենքը վատ արձագանք է ստացել, և մենք հաշվի կառնենք դա օրենքի հանդեպ փոփոխություններ կատարելու ժամանակ" հայտնել է Նորա Սարգսյանը հունվարի 20-ին Forum 18-ին տված իր հարցազրույցում: "Արդարադատության նախարարության աշխատանքային խումբն այժմ վերանայում է օրենքը՝ այն վերափոխելու համար՝ ըստ համապատասխան առաջարկների": Նորա Սարգսյանը հայտնել է, որ օրենքը պլանավորվում է ներկայացնել Վենետիկի հանձնաժողովի մյուս հանդիպմանը՝ մարտի 25-26-ին :[66]

[65] http://www.forum18.org/Archive.php?article_id=1519
[66] http://www.forum18.org/Archive.php?article_id=1530

Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն պետ՝ Վարդան Ասցատրյանի հետ 2011թ.-ի հունվարի 12-ին մեր ունեցած հեռախոսազրույցի ժամանակ նա մեզ հայտնեց, որ այսօրվա դրությամբ ոչ մի էական խախտումներ և արտառոց դեպքեր չեն արձանագրվել:

ԱՄՆ պետքարտուղարության ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոն հրապարակել է Հայաստանում կրոնական ազատության իրավիճակի վերաբերյալ ամենամյա՝ 2010 թվականի զեկույցը: Դրանում նշվում է, թե չնայած այն հանգամանքին, որ կրոնի ազատությունը, հավատքը դավանելու, ընտրելու կամ փոխելու իրավունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, այդուհանդերձ օրենքը որոշակի սահմանափակումներ է դնում կրոնական փոքրամասնությունների կրոնական ազատության վրա: Ըստ զեկույցի՝ Հայաստանում հայկական եկեղեցին որոշակի արտոնություններ ունի, որոնք չեն գործում այլ կրոնական խմբերի համար:[67]

Կրթության մասին օրենքով ասվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է: Սակայն այսօրվա տվյալներով նորմը խախտվում է: Դպրոցներում դասավանդվում է միայն Հայ Առաքելական Եկեղեցու պատմություն, այլ կրոնների մասին երեխաները չեն ստանում որևէ տեղեկություն: Այլ կրոն դավանող երեխաները խտրական վերաբերմունքի են արժանանում դասատուների կողմից, և դասատուները ստիպում են երեխաներին չշփվել այլ կրոն դավանող երեխաների հետ:

Գրանցված կրոնական կազմակերպությունների կրոնական ծեսերի կազմակերպումը կարգավորվում է գործող օրենքի շրջանակներում: Օրենսդրորեն կրոնական ծեսերի կազմակերպման հարցում որևէ արգելք չկա, սակայն իրականում արհեստականորեն խնդիրներ են առաջանում:

[67] http://armenian.armenia.usembassy.gov/news111810.html

“Եհովայի վկաներ” կազմակերպության կողմից հաղորդվում էր, որ տարեկան հավաքների համար մեծ տարածքներ վարձակալել չի հաջողվում: Նախապես պայմանավորվելուց և գումարը փոխանցելուց հետո, առանց զգուշացնելու անջատում են տարածքի լույսերը կամ պարտադրում են ազատել տարածքը:

Պետք է նշել, որ ՀՀ խղճի և դավանանքի ազատության հետ կապված օրինախախտումների մեծ մասը “Եհովայի վկաներ” կազմակերպության նկատմամբ կիրառած օրինախախտումներն են: Գործող օրենքի համաձայն՝ գրանցումից հետո բոլոր կրոնական կազմակերպություններն ունեն հավասար իրավունքներ: Սակայն ինչպես հայտնի դարձավ “Եհովայի վկաներ” կրոնական կազմակերպության իրավաբան Լյովա Մարգարյանի հետ զրույցից, իրականում վերջիններս օժտված չեն հավասար իրավունքներով: Մինչև օրս կազմակերպությունը 30 հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Պետական եկամուտների կոմիտեի՝ կամայական, անչափ բարձր գներով հոգևոր գրականությունը մաքսազերծելու համար: 13 գործ ավարտվել է՝ մերժելով կազմակերպության հայցերը, իսկ 17 հայցեր ընթացքի մեջ են: 12 հայցերով բողոքարկումները ՀՀ վճռաբեկ դատարան նույնպես եղել են անարդյունք:
Նաև մեզ հայտնեցին բռնության 6 դեպքի մասին:

Արարատի Խաչափառ գյուղում 2010թ.-ի նոյեմբերի 16-ին երկու Եհովայի վկաներ գյուղում մարդկանց հետ զրուցում էին Աստվածաշնչից: Նրանց է մոտեցել գյուղապետ Օհանյանը իր մեքենայով և, մեքենայից իջնելով, սկսել է հայհոյել և հարվածել Արմեն Աբրահամյանին:Գյուղապետը հարվածներ է տեղացել Արմենի մեջքին և ահաբեկել, որ եթե մյուս անգամ գյուղում տեսնի որևէ Եհովայի վկայի, ապա դարձյալ կծեծի ու պայուսակները կնետի ջրանցքը: Վկաները այդ դեպքի մասին հայտնել են Արարատի ոստիկանություն: Ոստիկանությունում չեն ցանկացել դիմումը ընդունել, սկսել են գոռգոռալ վկաների վրա: Ասել են, որ եթե ընդունեն դիմումը, ապա չպետք է գրեն ծեծի մասին:

Արագածոտնի մարզի Հնաբերդ գյուղում 2010թ.-ի նոյեմբերի 30-ին Եհովայի վկաները՝ կանայք, մարդկանց հետ զրուցել են Աստվածաշնչից: Նրանց են մոտեցել գյուղի երիտասարդներից մոտ տասը հոգի և սկսել են սեռական բնույթի ամենավերջին հայհոյանքներ անել, սպառնացել են, որ եթե չհեռանան գյուղից, ապա ծեծի կենթարկվեն: Նույնիսկ փորձել են հարվածել կանանց: Երիտասարդները Եհովայի վկաներին անվանել են մարդասպաններ, հայրասպաններ: Այդ բառերն ասվել են Սևան քաղաքում 2010թ.-ի Նոյեմբերի 8-ին տեղի ունեցած մի դեպքի հետևանքով, երբ Արման Թորոսյանը, հոգեբուժարանից դուրս գալուց հետո, սպանել էր իր ծնողներին: Այդ դեպքից հետո Հայաստանի որոշ լրատվամիջոցներ սկսեցին տարածել բացարձակ անհիմն տեղեկություններ, թե Արման Թորոսյանը Եհովայի վկա է: Արդյունքում թե՛ հեռուստատեսությամբ, թե՛ այլ լրատվամիջոցներով Եհովայի վկաների և նրանց համոզմունքների վերաբերյալ զրպարտչական նյութերի մեծ ալիք բարձրացավ՝ հրահրելով կրոնական անհանդուրժողականություն:

Օրինակ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության, "Տեսանկյուն" հաղորդաշարի, 2010թ.-ի նոյեմբերի 11-ի եթերում, մեկնաբան Գևորգ Ալթունյանը ասաց, որ Եհովայի վկաները սպառնալիք են ցանկացած պետության համար և վտանգավոր են յուրաքանչյուր անհատի, ընտանիքի և հասարակության համար: "Սպանել էր ծնողներին, քանի որ իր Եհովան էր այդպես հրամայել: Համենայնդեպս՝ երիտասարդ մարմնում թաքնված այդ սատանայի ծնունդը հենց այդպես էր հիմնավորել իր արարքը: Ընդ որում՝ հիմնավորել էր շատ հանգիստ, անխռով, կարծես թե հենց այդպես էլ պետք է լիներ": Հեղինակային այս հաղորդման մեջ կոշտ քննադատություն կար նաև ընդհանրապես աղանդների հասցեին, մասնավորապես, օգտագործված էին "աղանդավորների ռիմակներ", "եհովականներ կամ այլ զահրումարներ" արտահայտությունները: "Թող ես տոլերանդ չդիտվեմ: Թող մարդիկ ինձ անհանդուրժողականության մեջ մեղադրեն: Թող ասեն, թե ծայրահեղ եմ և այլն,– ասել

էր Գևորգ Ալթունյանը: –Սևանի դեպքն ապացուցում է, որ տոլերանդության ժամանակներն արդեն անցել են՝ հիմա ուշքի գալու ժամանակն է”:

Արման Թորոսյանի՝ Եհովայի վկաների հետ կապի մասին տեղեկություն ստանալու համար հայցում է կատարվել “Եհովայի վկաներ” կազմակերպություն և 2010թ.-ի նոյեմբերի 11-ին պատասխան նամակ է եկել: “Եհովայի վկաներ” կազմակերպությունը պաշտոնապես տեղեկացնում է, որ իր ծնողների սպանության մեջ մեղադրվող Արման Խաչիկի Թորոսյանը որևէ առնչություն չի ունեցել “Եհովայի վկաներ” կազմակերպության հետ: Հելսինկյան Ասոցիացիայի դիտորդական խումբը տեղեկությունը ճշտելու նպատակով 2010թ.-ի նոյեմբերի 25-ին այցելել է Սևան քաղաք՝ Արման Թորոսյանի բնակության վայր: Այցելությունից հետո ևս ոչ մի կապ Արման Թորոսյանի և Եհովայի վկաների միջև չի գտնվել:

“Սոցիոսկոպ” սոցիոլոգիական հետազոտությունների և խորհրդատվության կենտրոնի հոգեբան Սոնա Մանուսյանը, դիտելով այդ հաղորդումը հայտնել է, որ հաղորդումը, ինչպես և հաղորդաշարի ողջ ոգին, կառուցված է սոցիալական և հոգեբանական ներազդման տրամաբանությամբ և օգտագործում է վերջինիս պարզ տեխնիկաներից մի քանիսը: Այսպես, հեռուստադիտողին ուղղված խոսքը պարունակում է ընդգծված բացասական կլիշեներ, չափազանցումներ(hate speech-ի հասնող) և ազատորեն դրանք օգտագործում է: Հաղորդավարի ներկայացրած նյութը, “ինֆորմացիան” ընտրողական է, հեռուստադիտողին չի տրամադրում մեկնարկային բավարար տեղեկատվություն ներկայացվող իրադարձության մասին և միանգամից մատուցում է միանշանակորեն որպես եհովականության հետ և դրա պատճառով տեղի ունեցած երևույթ՝ առանց ներկայացնելու տեղի ունեցածի հանգամանքները, մեղադրյալի և նրա ընտանիքի իրական առնչությունը տվյալ դավանանքի հետ: Այսպիսով, մասնակի և աղճատված տեղեկատվություն ստացած հեռուստադիտողի մոտ ստեղծվում է պատրանք, թե նա ստացավ իրական տեղեկատվություն ողբերգական իրադարձության մասին, ինչպես

նան զուգահեռաբար առաջանում և ամրապնդվում է բացասական դիրքորոշում և սպառնալիքի չափազանցված զգացում:

Հայաստանի Հանրապետությունում Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպությունը 2010թ.-ի դեկտեմբերի 9-ին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ Հայաստանի հանրային հեռուստաընկերության և նրա մի քանի ներկայացուցիչների:

Երևան քաղաքում ամենուրեք փակցվում են՝ “զգու՛յշ եղեք Եհովայի վկաներից, ո՛չ ասացեք աղանդներին” գրություններով թռուցիկներ: Մինչ այսօր այդ թռուցիկների ոչ մի հեղինակ պատասխանատվության չի ենթարկվել:

2003թ.-ին Հայաստանում ընդունված “Այլընտրանքային ծառայության մասին” օրենքը ուժի մեջ է մտել 2004թ.-ի հուլիսի 1-ից: Համաձայն նշված օրենքի՝ այլընտրանքային ծառայության տեսակներն են՝

Այլընտրանքային զինվորական, որը ՀՀ զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայությունն է՝ 36 ամիս ժամկետով,

Այլընտրանքային աշխատանքային՝ ՀՀ զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայությունը՝ 42 ամիս ժամկետով:

Սովորական զինծառայության տևողությունը 24 ամիս է: Դրանից բացի, զինծառայողներին տրվում է զինգրքույկ, որտեղ գրվում է, որ նրանք զինվորներ են, դրանք յուրաքանչյուր շաբաթ ստուգվում են և հեռանալու համար պետք է հատուկ թույլտվություն ստանան: “Այլընտրանքային ծառայության մասին” օրենքի հոդված 14-ում ասվում է, որ այլընտրանքային ծառայության զորակոչը կազմակերպում և դրա իրականացումը վերահսկում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը: Հոդված 18-ի համաձայն՝ այլընտրանքային ծառայություն անցնողները ենթարկվում են

բանակի կանոնակարգին: Հոդված 21-ը նույն կերպ է անդրադառնում նրանց վրա, ովքեր լքել են բանակը, և ովքեր լքել են այլընտրանքային ծառայությունը:

2004 թվականին ԵԽԽՎ-ի կողմից ընդունված 1361(հոդված 22[68]) և 1405(հոդված 11.4[69]) բանաձևերում Հայաստանի իշխանությունների ուշադրությունն է հրավիրվում այլընտրանքային աշխատանքային ծառայության անթույլատրելի պայմանների վրա, որի տևողությունն է 42 ամիս: 2004թ.-ի հուլիսի 9-ին ընդունվեց Կառավարության №940-Ն որոշումը "Այլընտրանքային ծառայություն անցկացնելու վայրերի և այլընտրանքային ծառայողի համազգեստի տեսակների վերաբերյալ": Համաձայն դրա՝ 49 անձ կարող էր կանչվել այլընտրանքային աշխատանքի(Առողջապահության նախարարություն, Աշխատանքի և Սոցիալական հարցերով նախարարություն, ծերանոցներ, հոգեբուժարաններ, մեկուսարաններ) և Այլընտրանքային զինվորական ծառայություն - 300 մարդ Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի զինվորական մասերում(այս բոլոր մարզերն էլ սահմանային են):

Հայաստանի իշխանությունները դեռևս հրաժարվում են համարել, որ "Այլընտրանքային ծառայության մասին" օրենքը չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Եվրոպայի խորհուրդը պարբերաբար քննադատել է օրենքը՝ նշելով, որ այն անկատար է: Ներկայումս 72 Եհովայի վկաներ գտնվում են բանտերում՝ զինվորականների վերահսկողության ներքո՝ այլընտրանքային ծառայություն կատարելուց հրաժարվելու համար: Գրեթե բոլոր այս Եհովայի վկաները ազատազրկված են երկուսից երեք տարի ժամկետով՝ կրոնական հիմքերով զինծառայությունից հրաժարվելու համար: Նրանք դատապարտվել են ՀՀ Քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով, որը պատիժ է նախատեսում պարտադիր զինծառայությունից կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար:

[68] http://assembly.coe.int/Main.asp?link=http://assembly.coe.int/documents/adoptedtext/ta04/eres1361.htm
[69] Implementation of Resolutions 1361 (2004) and 1374 (2004) on the honoring of obligations and commitments by Armenia http://assembly.coe.int/Main.asp?link=http://assembly.coe.int/asp/search/pasearch.asp

2006թ.-ի հունվարին, Քրեական օրենսգրքում կատարված փոփոխությամբ, այլընտրանքային աշխատանքային ծառայությունից խուսափելը որակվեց որպես քրեորեն պատժելի արարք:

Որպես առաջընթացի նշան, բոլոր նրանց, ովքեր զինծառայությունից և այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար բանտարկվել էին, 2008թ.-ի ամռանից սկսած, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հրամանով, սկսեցին զինգրքույկներ տալ: Մինչ այդ, դատապարտված անձինք չէին կարողանում գրանցվել իրենց բնակության վայրում, իսկ առանց դրա նրանք չէին կարող ստանալ անձը հաստատող փաստաթուղթ կամ անձնագիր: Արդյունքում, նրանք չէին կարողանում աշխատանք ստանալ կառավարությունում, չէին կարող լքել երկիրը և անգամ չէին կարող ամուսնանալ:

Conscientious Objectors

REPUBLIC OF ARMENIA

February 2011

Currently, there are **72** Jehovah's Witnesses who have been charged under the Criminal Code for their conscientious refusal of military service on religious grounds. Of these, **72** have been tried, convicted, and imprisoned; **no-one** is being held in pretrial detention; **no-one** received a suspended sentence. The names, dates of imprisonment, grounds (under criminal code[70]), duration of sentence and present locations of detention are as follows:

Seventy-two Jehovah's Witnesses have been tried, convicted, and imprisoned:

Ashot Simonyan	*March 12, 2008*	*§ 327 I, 36 months*	*Artik Penal Institution*
Mkhitar Sargsyan	*July 17, 2008*	*§ 327 I, 36 months*	*Erebuni Penal Institution*
Shahen Asatryan	*July 17, 2008*	*§ 327 I, 36 months*	*Artik Penal Institution*
Mher Barseghyan	*August 25, 2008*	*§ 327 I, 36 months*	*Erebuni Penal Institution*
Vardan Kasemyan	*September 2, 2008*	*§ 327 I, 36 months*	*Artik Penal Institution*
David Mnatsakanyan	*February 2, 2009*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Vigen Sargsyan	*February 2, 2009*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Levon Bashberukyan	*March 18, 2009*	*§ 327 I, 26 months*	*Erebuni Penal Institution*
Nver Nazaryan	*March 24, 2009*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Tatul Arsenyan	*April 20, 2009*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Vladimir Sargsyan	*April 21, 2009*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Gevorg Karapetyan	*May 11, 2009*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Hovsep Mutafyan	*May 12, 2009*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Mher Hayrapetyan	*May 18, 2009*	*§ 327 I, 24 months*	*Artik Penal Institution*
Gagik Toplakhaltsyan	*May 18, 2009*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Harutyun Gagyan	*May 28, 2009*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Hayk Avagyan	*July 9, 2009*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Gor Aslanyan	*July 27, 2009*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Aram Apresyan	*August 26, 2009*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Kamo Sahakyan	*August 26, 2009*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Ishkhan Grigoryan	*August 10, 2009*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Arkadi Mardoyan	*August 28, 2009*	*§ 327 I, 30 months*	*Artik Penal Institution*
Vanik Soghomonyan	*August 31, 2009*	*§ 327 I, 30 months*	*Artik Penal Institution*
Grigor Safaryan	*September 4, 2009*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Lyudvik Arshakyan	*September 7, 2009*	*§ 327 I, 30 months*	*Kosh Penal Institution*
Raphael Manukyan	*September 17, 2009*	*§ 327 I, 30 months*	*Artik Penal Institution*
Karapet Aghadjanyan	*September 22, 2009*	*§ 327 I, 30 months*	*Kosh Penal Institution*
Hakob Babudjyan	*September 25, 2009*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Artak Kroyan	*September 30, 2009*	*§ 327 I, 30 months*	*Kosh Penal Institution*
Vahram Grigoryan	*October 2, 2009*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Gevork Sargsyan	*October 8, 2009*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Roman Minasyan	*October 12, 2009*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*

Article 327 I states: Evasion from recurring draft military or alternative service call-up, training exercise or mobilization, without any order defined by legislation of the RA as grounds for exemption, is punished with arrest for a maximum term of two months, or imprisonment for a maximum term of three years (modified 16.12.2005)

Andranik Martirosyan	*October 12, 2009*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Aghasi Sargsyan	*October 14, 2009*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Hayk Ghazaryan	*November 3, 2009*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Spartak Khanumyan	*December 28, 2009*	*§ 327 I, 30 months*	*Artik Penal Institution*
Vardan Vardanyan	*January 19, 2010*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Hovhannes Kasemyan	*February 2, 2010*	*§ 327 I, 24 months*	*Artik Penal Institution*
Levon Vardanyan	*February 18, 2010*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Taron Pirapyan	*March 2, 2010*	*§ 327 I, 30 months*	*Kosh Penal Institution*
Karapet Sargsyan	*March 18, 2010*	*§ 327 I, 24 months*	*Artik Penal Institution*
Samvel Prutyan	*March 23, 2010*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Artur Torosyan	*March 9, 2010*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Ashot Khachikyan	*March 29, 2010*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
David Martirosyan	*March 29, 2010*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Arayik Nahapetyan	*April 11, 2010*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Zorayr Arakelyan	*April 14, 2010*	*§ 327 I, 30 months*	*Artik Penal Institution*
Narek Seyranyan	*April 22, 2010*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Levon Tumanyan	*May 5, 2010*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Rafael Khalatov	*May 19, 2010*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Narek Chinaryan	*May 21, 2010*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Narek Pogosyan	*May 24, 2010*	*§ 327 I, 30 months*	*Kosh Penal Institution*
Suren Tonoyan	*June 9, 2010*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
David Khlghatyan	*July 19, 2010*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Andranik Bagiryan	*August 2, 2010*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Levon Avakyan	*August 3, 2010*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Edouard Ohandjanyan	*August 3, 2010*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Sevak Aghekyan	*August 4, 2010*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Alik Davtyan	*August 4, 2010*	*§ 327 I, 30 months*	*Nubarashen Penal Institution*
Vardan Antonyan	*August 6, 2010*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Manuk Khechoyan	*August 9, 2010*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Derenik Minasyan	*August 11, 2010*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Vahe Avetisyan	*August 13, 2010*	*§ 327 I, 24 months*	*Kosh Penal Institution*
Artur Hayrapetyan	*August 18, 2010*	*§ 327 I, 12 months*	*Erebuni Penal Institution*
Anri Khachatryan	*August 18, 2010*	*§ 327 I, 24 months*	*Erebuni Penal Institution*
Hakob Engibaryan	*August 24, 2010*	*§ 327 I, 27 months*	*Erebuni Penal Institution*
Harutyun Mnatsakanyan	*August 25, 2010*	*§ 327 I, 36 months*	*Erebuni Penal Institution*
Gor Mesropyan	*August 27, 2010*	*§ 327 I, 30 months*	*Erebuni Penal Institution*
Artashes Arshakyan	*September 6, 2010*	*§ 327 I, 30 months*	*Kosh Penal Institution*
Nikolay Poghosyan	*September 7, 2010*	*§ 327 I, 30 months*	*Nubarashen Penal Institution*
Vahagn Alikhanyan	*September 24, 2010*	*§ 327 I, 30 months*	*Artik Penal Institution*
David Muradyan	*December 30, 2010*	*§ 327 I, 18 months*	*Nubarashen Penal Institution*

No Jehovah's Witness is being held in pretrial detention.

No Jehovah's Witnesses received a suspended sentence.